



Կ. Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

К. Н. ЮЗБАШЯН

АКАДЕМИК
ИОСИФ ОРБЕЛИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1987

008(-11)479.25/0999
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Կ. Մ. ՅՈՒԶԲԱՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
Հ Ո Վ Ս Ե Փ Յ Ր Բ Ե Լ Ի

1125211
A



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն

1987

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա

Գալոյան Ա. Ա. (նախագահ)

Բարսեղյան Խ. Հ., Թովմասյան Ս. Ս., Հախվերդյան Լ. Հ.,

Ղազարյան Վ. Հ., Ղարազյոզյան Կ. Գ., Մովսիսյան Մ. Ե.,

Սարգսյան Գ. Խ. (նախագահի տեղակալ), Սանասարյան Հ. Ա.

(պատասխանատու քարտուղար), Վարդանյան Ս. Հ., Տեր-Միքայելյան Մ. Լ.

Պատասխանատու խմբագիր՝

պատմական գիտությունների դոկտոր Պ. Մ. Մուրադյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանը և

բանասիրական գիտությունների դոկտոր Կ. Մ. Մուրադյանը

Յուզբաշյան. Կ. Մ.


0—842j Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի [Պատ. խմբ.
Պ. Մ. Մուրադյան]. ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտ. ին-տ.
— Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987. 111 էջ. 4 թերթ նկ.:

Ակադեմիկոս Հ. Օրբելին առավել ակնառու այն հայագետ-
արևելագետներից է, որոնք նշանակալի չափով կանխորոշել են
հայրենական արևելագիտության, ինչպես նաև հայագիտու-
թյան զարգացման մերօրյա ուղին: Նրա կյանքի և գործի
ուսումնասիրությանը նվիրված այս գրքուկը միաժամանակ
հայրենի գիտության պատմությունը ներկայացնող մի դրվագ
է՝ գրված փաստական հարուստ նյութի հիման վրա:

Այն հասցեագրվում է պատմության, հնագիտության,
ազգագրության ու արվեստով զբաղվող մասնագետներին,
ինչպես նաև ընթերցող լայն հասարակայնությանը:

301 $\frac{0505040000}{703 (02) - 87}$ 97—88

ԳՄԳ 63.3դ (22) Օրբելի Հ. +
+ 63.4 (22) + 63.5 (22)



Հովսեփ Օրբելի



ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին պատկանում է իր ժամանակի առավել ակնառու հայագետների շարքին: Նա այն գիտնականներից է, որոնք կանխորոշել էին հայրենական արևելագիտության, հատկապես հայագիտության արդի ընթացքն ու ուղղվածությունը: Գիտության մի քանի բնագավառներում նա ճանաչվել է իբրև բարձրագույն հեղինակություն: Հ. Օրբելին եղել է գիտության խոշոր կազմակերպիչ, բազմիցս իրեն ղրսևորելով իբրև բարդ ստեղծագործական կոլեկտիվների իսկական հոգաժու առաջնորդ: Հովսեփ Օրբելու ազդեցության ներքո ձևավորվել են գիտության տասնյակ մշակներ:

Իր կյանքի մեծ մասը Հ. Օրբելին անց է կացրել Պետերբուրգ-Լենինգրադում, ուր արտասովոր ժողովրդականություն է վայելել որպես էրմիտաժի բազմամյա տնօրեն: Հայրենական պատերազմի առաջին օրերին նա է կազմակերպել այդ թանգարանի անգին գանձերի տեղափոխումը թիկունք, իսկ հետագայում՝ ղեկավարել էրմիտաժի վերակենդանացումը:

50-ական թվականների կեսերից, երբ Լենինգրադի և առհասարակ երկրի արևելագիտությունը նոր վերելք էր ապրում, Հ. Օրբելին էր այդ ընթացքին ուղղվածություն տվող հեղինակավոր դեմքերից մեկը: Միաժամանակ նա իսկական հայաստանցի էր, հատուկ սեր ու հարգանք էր վայելում Հայաստանում, մանավանդ որ նրա անունը ընդմիշտ կապված է մեր միջնադարյան մշակույթի փառքը կազմող Անիի ուսումնասիրության հետ, իսկ «Սասնա ծռեր» հերոսական վեպը, ասես, նոր կյանք է ապրել նաև Հ. Օրբելու շնորհիվ: Նա է եղել մեր Գիտությունների ակադեմիայի հիմնադիր պրեզիդենտը և, վերջապես, մարմնավորելով հայ մտավորականի լավա-

դույն գծերը, նա հայ մտքի և մշակույթի իսկական դեսպանն է եղել Ռուսաստանում:

Հովսեփ Օրբելու ծառայություններից մեկն էլ այն է, որ նա պահպանել է իր ուսուցիչների՝ դիտություն Պասականների ավանդները և դրանք փոխանցել գալիք սերունդներին:

Հովսեփ Օրբելին բացառիկ անձնավորություն էր, և սխալ կլիներ նրա կյանքի նկարագիրը դիտել որպես դիտական գործչի տիպական կենսագրություն: Լինելով արտակարգ գործունյա, ապրելով իր դարաշրջանի ուրախությամբ ու ցավերով, նա միաժամանակ ամփոփում էր այդ դարաշրջանի որոշ հատկանշական կողմերը, դարձել էր նրա մի մասնիկը:

Հ. Օրբելու մասին շատերն են գրել, հատկապես դիտականի մահից հետո: Հեղինակներից շատերը ճանաչել են իրենց հերոսին և, անտարբեր չլինելով նրա անձի նկատմամբ, յուրովի են մեկնել նրա կյանքի ուղին, յուրովի վերարտադրել կերպարը: Անձնականության երանգ ունի թերեւս սույն գրչության շարադրանքը ևս, բայց ինչ արած՝ անհնար է սառն ու անտարբեր դիտող մնալ, երբ աչքիդ առաջ բացվում է Հովսեփ Օրբելու բարդ, վառ ու բոցկլտուն էությունը*:

* Այս գրքույլը հասցեագրված է մասնագետներին ու ընթերցող հասարակայնությանը, ուստի Հ. Օրբելու կենսագրական իրողություններին վերաբերող հղումները (այդ տվյալները մասամբ քաղված են արխիվային նյութերից) սղված են: Ավելի մանրամասն տե՛ս Կ. Կ. Юзбашян, Академик Иосиф Абгарович Орбели. М., 1986, ինչպես նաև նույն աշխատության նախորդ հրատարակությունները՝ ռուսերեն, Մ., 1964 և հայերեն՝ Եր., 1971: Նշված հրատարակություններում ընթերցողը կգտնի նաև Հովսեփ Օրբելու ընդարձակ հուշերը, որոնք վերաբերում են նրա ուսանողական կյանքին, ուսուցիչներին, գործընկերներին: Դրանք 1955 թ. մարտի 3-ին Լենինգրադի պետական համալսարանի արևելյան ֆակուլտետում Օրբելու ելույթի գրառումն են: Սույն գրքույլում այդ կարևոր նյութերը բերված են միայն հատվածաբար: Հ. Օրբելու կյանքին ու գործին վերաբերող ուշագրավ նյութեր կան Պ. Մ. Մուրադյանի հրատարակած Ն. Մառի և Հ. Օրբելու ծավալուն նամակագրության էջերում (տե՛ս «Հայագիտական հետազոտություններ», պրակ LX, Երևան, 1974, էջ 227—306):

Ա. ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հովսեփ Օրբելին ծնվել է տոհմիկ մտավորականների ընտանիքում: Նրա պապը՝ Հովսեփ Հովակիմի Օրբելին, ավարտել էր Մոսկվայի Լազարյան ճեմարանը, ցանկացել զբաղվել բժշկությամբ կամ իրավաբանությամբ, բայց ենթարկվել էր մոր կամքին և դարձել քահանա: Առժամանակ ծառայել էր Աստրախանում, ապա Պետերբուրգում և, ի վերջո, հաստատվել Թիֆլիսում: Երկար տարիներ զբաղվել է ուսուցչությամբ (Պետերբուրգում հայոց լեզու է դասավանդել Կադետական դպրոցի հայ սաներին), եղել Թիֆլիսում 1850-ական թվականներին հրատարակվող «Արարատ» հանդեսի ցենզորը, հեղինակել տպագիր մի շարք աստվածաբանական աշխատություններ: Վախճանվել է 1891 թ.¹:

Հովսեփ Օրբելի ավագը ունեցել է երեք տղա և երկու աղջիկ: Ավագ որդին՝ Դավիթը, ավարտել էր Խարկովի համալսարանը և դարձել բժշկ-հոգեբույժ: Ժամանակին Անդրկովկասում նա մեծ հեղինակություն և լայն ճանաչում է ունեցել: Դ. Օրբելու գրչին են պատկանում տեղաճարակային վրատակի ուսուցքին և բժամատությանը վերաբերող մի քանի ուսումնասիրություններ: Մասնակցել է հոգեբույժների գիտական բազմաթիվ համագումարների ու համաժողովների:

Երկրորդ որդին՝ Համազասպը, Թիֆլիսում հայտնի բժշկատամանբույժ էր:

Երրորդը՝ Աբգարը, ուսանել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում և ավարտել իրավագիտության թեկնածուի աստիճանով: Պահպանվել է պետական փոխառություններին նվիրված նրա ավարտական աշխատանքը: Աբգար Օրբելին ցանկացել է մնալ Պետերբուր-

գում, ռակայն հոր պահանջով վերադարձել է հայրենիք և իբրև հաշտարար դատավոր պաշտոնավարել Նախիջևանում, ապա՝ Ծաղկաձորում, Քուլալիսում: Թիֆլիս տեղափոխվելուց հետո նա մի քանի տարի աշխատել է որպես դատական պալատի դատախազի օգնական, ապա դարձել փաստաբան և զբաղվել մասնավոր գործառնություններով:

Արգար Օրբելին հիրավի կրթված մարդ էր, հետևում էր մշակութային կյանքին, շատ էր կարդում, ուներ մեծ գրադարան: Նա առանձնակի կարևորություն էր տալիս իր երեխաների դաստիարակությանը. լինելով համեմատաբար համեստ հնարավորությունների տեր մարդ, գիմնազիա հաճախող և բեխանների համար հրավիրում է նաև մասնավոր ուսուցիչներ, իսկ հետագայում բոլոր զավակներին սովորելու ուղարկում Պետերբուրգ:

Ընտանիքում նրա ազդեցությունը մեծ էր, հեղինակությունն՝ անառարկելի: Որդիների ազատությունը ոչնչով չէր սահմանափակում, այնուհանդերձ՝ 1906 թ. արդեն Պետերբուրգի համալսարանի ուսանող 19-ամյա Հովսեփը Անի մեկնեց միայն հոր թույլտվությունը ստանալով: Հովսեփը մտածում էր թողնել Պատմա-բանասիրական ֆակուլտետը և մնալ միայն Արևելյան լեզուների ֆակուլտետում, սակայն այդպես չարեց: «Հինգրոպեանոց խոսակցությունը հորս հետ բավական էր, որպեսզի մի կողմ նետվի այդ միտքը», — նշում է Հովսեփի Օրբելին իր հուշերում:

Արգար Օրբելու կինը՝ Վարվառան, Արդուսյան իշխանական տոհմից էր (Մովսես Արդուսյան-Երկայնաբազուկի դուստրն էր) և, հակառակ իր աղնվական ծագմանը (որով նա հպարտանում էր), դեռատի հասակից ընտելացել էր ֆիզիկական աշխատանքի, իսկ հետագայում այդ սովորությունը ձգտում էր արմատավորել նաև զավակների մեջ: Ուշագրություն էր հետևում էր նրանց պարապմունքներին («Երեք անգամ արական գիմնազիա եմ ավարտել», — կատակում էր նա): Ժամանակակիցների վկայությամբ հոգատար էր նաև հարևանների երեխաների հանդեպ և շրջապատի հարգանքն ու սերն էր վայելում:

Կորցնելով ամուսնուն, Վարվառա Մոխեկնան, ինչպես նրան անվանում էին բոլորը, սկսեց ֆրանսերենի դասեր տալ, իսկ Վրաստանում սովետական իշխանության հաստատումից հետո զբաղվեց հասարակական աշխատանքով, անգամ Թիֆլիսի քաղաքային սովետի դեպուտատ ընտրվեց:

Աբգար Օրբելու ավագ որդին՝ Ռուբենը (1880-1943), ավարտել էր Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, ստացել առաջին կարգի դիպլոմ և մնացել համալսարանում՝ քաղաքացիական իրավունքի մաթիոնում պրոֆեսորի կոչում ստանալու: 1906 թ. արժանացել էր իրավագիտության մագիստրոսի աստիճանի, ստաժավորվել նաև Գերմանիայում՝ Ենայի համալսարանում, ճանաչվել այդ համալսարանի դոկտոր: Հետագայում նա տարվեց ջրասուզական գործով, որի պատմությանը մի շարք կարևոր ուսումնասիրություններ նվիրեց: Ռուբեն Օրբելին ստորջրյա հնագիտության հիմնադիրներից մեկն է մեր երկրում. 1937 թ. Բուզ գետի ափին նա պեղեց հնադարյան մի մակույկ՝ արժանանալով վաստակած ուշադրության: Կյանքի վերջին տարիներին Ռ. Օրբելին գիտական մեծ գործունեություն էր ծավալել Հատուկ նշանակության ստորջրյա աշխատանքների արշավախմբում (ЭПРОН)²:

Միջնեկ որդու՝ Լևոն Օրբելու (1882-1958) անունը հայտնի է բոլորին: Իբրև Ի. Պ. Պավլովի աշակերտն ու մերձավոր գործակիցը նա ֆիզիոլոգիայի բնագավառում կանգնած է գիտական մի շարք ուղղությունների սկզբնավորողի տեղում: Լ. Օրբելու գաղափարների զարգացմամբ այժմ զբաղված են գիտահետազոտական ամբողջ հաստատություններ: Լ. Օրբելու աշակերտներն ու աշխատակիցները հիշում են նրա ազնվավազույն կերպարը, հիշում են ինչպիսի տոկունություն ցուցաբերեց, երբ 40-ական թվականների վերջին նրա հեղինակությունը կասկածի տակ դրվեց, և նա գրեթե զրկվեց հետագա աշխատանքի հնարավորությունից: Բայց անգամ այդ պայմաններում Լ. Օրբելին հետ չկանգնեց իր սկզբունքներից, անարատ պահեց իսկական գիտնականի պատիվը³:

Օրբելիների գերդաստանը աչքի էր ընկնում մի շարք այնպիսի գծերով, որոնք հատուկ էին XIX դ. վերջի — XX դ. սկզբի հայ մտավորականությանը: Հայ (և ավելի լայն՝ արևելյան) կյանքի ավանդույթներն այստեղ զուգակցվում էին ռուս և արևմտանվորոպական կենցաղավարության սկզբունքների հետ, և դրանց համագործակցությունը զարմանալի պտուղներ էր տալիս: Ընտանեկան մթնոլորտը, անշուշտ, ազդել է Հովսեփ Օրբելու խառնվածքի վրա: Մասամբ ընտանիքին էր նա պարտական իր այնպիսի գծերով, ինչպիսիք են՝ դատողությունների շիտակությունը, հասարակական պարտքի բարձր ըմբռնումը, իսկական, անվարան ինտերնացիոնալիզմը:

Ընտանեկան ավանդույթը պահպանել է նաև հաջորդ սերունդը: Լևոն Օրբելու Մարիամ դուստրը (1916-1949) եղել է հոր պես տաքարյուն, համարձակ: ՀՍՍՀ ԳԱ Ռադիոմի ինստիտուտում աշխատելիս փորձերի ընթացքում ստացել է ճառագայթային հիվանդություն, որից և վախճանվել է: Նրա որդի Աբգարը, որին պապը դստեր մահվանից հետո որդեգրել էր, նույնպես ֆիզիկոս է:

Ռուբեն Օրբելու դուստր Գուսուդանը (1910-1985) կովկասագետ-բանասեր էր: Երկար տարիներ աշխատում էր ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում, Հովսեփ Օրբելու մահվանից հետո վարում Կովկասյան կաբինետը: Նա հեղինակ է մի շարք կարևոր աշխատությունների՝ նվիրված հատկապես վրացական ձեռագրերին*:

Հովսեփ Օրբելու միակ որդի Դմիտրին (1946-1971), հետևելով հորեղբոր օրինակին, որոշել էր իր կյանքը նվիրել ֆիզիոլոգիային: Արդեն ուսանողական տարիներին լուրջ գիտահետազոտական աշխատանքի էր լծվել, սակայն գիտական մեծ ապագա ունեցող երիտասարդի կյանքը վաղաժամ ընդհատվեց:

Ծաղկածորում բացված է Օրբելի եղբայրների թանգարան, որի ցուցանմուշները հստակ պատկերացում են տալիս

* Օրբելիների գերդաստանին վերաբերող տվյալների մի մասը սույն գրքի հեղինակը ժամանակին ստացել է Ռուսուդան Օրբելուց:

այդ դարմանալի ընտանիքի մասին: Ինչպես Երևանում, այնպես և Լենինգրադում կան «Օրբելի» կամ «Օրբելի եղբայրների» անունը կրող փողոցներ: Լևոն Օրբելու անունն են կրում մի բանի գիտական օջախներ: Հուսանք, որ Հովսեփ Օրբելու անունով ևս հաստատություններ կկոչվեն:

* * *

Արգար Օրբելու կրտսեր որդի Հովսեփը ծնվել է 1887 թ. մարտի 8(20)-ին, Քութայիսում: Հաջորդ տարին ընտանիքը վերահաստատվեց Թիֆլիսում՝ Անդրկովկասի մշակութային ամենախոշոր կենտրոններից մեկում: Բազում դպրոց-ուսումնարաններ ունեցող քաղաքը փառաբանված էր նաև իր թատրոններով, ուր երբեմն հանդես էին գալիս համաշխարհային անուն վաստակած դերասաններ: Քաղաքի բազմազգ բնակչությունը խոսում էր վրացերեն, հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ադրբեջաներեն: Արևելքն ու Արևմուտքը Թիֆլիսն ընտրել էին իբրև իրենց հանդիպման վայրերից մեկը: Ապագա գիտնականի համար Արևելքը եղել է ոչ միայն ուսումնասիրության առարկա, այլև՝ նրա կյանքի, էության մի մասը:

Հովսեփ Օրբելին 1896 թ. ընդունվում է Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիան: Այստեղ նա ձեռք է բերում դասական լեզուների՝ հունարենի և լատիներենի լավ գիտելիքներ: Որոշ առարկաներ լրացուցիչ անցնում է նաև տանը, հրավիրված բնույթի շրջանի օգնությամբ (հայրը գտնում էր, որ բնագիտության, քիմիայի, ֆիզիկայի դրվածքը գիմնազիայում անբավարար է): Հայրը հոգ տարավ նաև, որպեսզի որդին միաժամանակ ձեռք բերի որոշ արհեստներ, ուստի պատանի Հովսեփը մասնագիտորեն յուրացրեց ատաղձագործությունը, ապա քարգործությունը: Հարևան երեխաների հետ շփվելով, հայերենից և ռուսերենից բացի, սովորեց վրացերեն, ադրբեջաներեն:

1904 թ. նա ավարտեց գիմնազիան: Ավարտականում գրանցված էր, որ «Թիֆլիսի 3-րդ գիմնազիայում սովորելու ամբողջ ընթացքում նրա վարքը առհասարակ եղել է գերազանց, դասերին հաճախելու, ինչպես նաև գրավոր աշխա-

տանքների ճշտապահությունը՝ գերազանց, աշխատասիրությունը՝ գերազանց, հետաքրքրասիրությունը՝ գերազանց...», այնուհետև գալիս են միայն «հինգեր»։ Նշվում է, որ շրջանավարտը առանձնահատուկ հաջողությունների է հասել պատմաբանասիրական գիտությունների բնագավառում։

1904 թ. հուլիսի 26-ին տասնյոթամյա Հ. Օրբելին խընդրագիր ներկայացրեց Պետերբուրգի համալսարանի Պատմաբանասիրական ֆակուլտետն ընդունվելու համար։ Ժամանակին, ինչպես ասվեց, այդ համալսարանն ավարտել էր հայրը՝ Աբգար Օրբելին, ավարտելուց հետո համալսարանում էր թողնվել եղբայրը՝ Ռուբենը։

Հովսեփ Օրբելին անցավ Պատմա-բանասիրական ֆակուլտետի լրիվ դասընթացը՝ դասական բանասիրության բաժանմունքի ծրագրով։ Գիմնազիայից ստացած գերազանց պատրաստությունը, անշուշտ, նպաստում էր համալսարանական առարկաների հեշտ հաղթահարմանը։ Իսկ դասախոսների կազմում կային այնպիսի խոշոր գիտնականներ, ինչպիսիք էին՝ անտիկագետներ Ս. Ա. Ժեբելովը (1867-1942), Մ. Ի. Ռոստովցևը (1870-1952), Ֆ. Ֆ. Զելինսկին (1859-1946), Բ. Վ. Ֆարմակովսկին (1870-1928), բյուզանդագետ Վ. Ն. Բենեշևիչը (1874-1938)։

Հունա-հույնական հնությունների հետ միասին ուսանող «դասականագետներին» ավելի ու ավելի էր հրապուրում Արևելքը՝ Հայաստանի, Վրաստանի, Իրանի պատմությունն ու մշակույթը։ 1906 թ. ամռանը Հ. Օրբելին մասնակցում է քաղաքամայր Անիի պեղումներին, իսկ 1907 թ. ընդունվում համալսարանի նաև Արևելյան լեզուների ֆակուլտետը։ Այնուամենայնիվ, արդեն որոշելով նվիրվել արևելագիտությանը, Հ. Օրբելին չթողեց դասական բանասիրությունը, որը նա գիտում էր որպես մի անհրաժեշտ աստիճան՝ արևելագիտական առարկաների տիրապետման ուղղությամբ։ Ի դեպ, ճիշտ այդպիսին էր նաև Հ. Օրբելու ուսուցիչ, XXդ. խոշորագույն հայագետներից մեկի՝ Նիկողայոս Ադոնցի մոտեցումը, որը փայլուն կերպով ավարտեց Արևելյան լեզուների ֆակուլտետը, միաժամանակ անցնելով Պատմա-բանասիրական ֆակուլ-

տեսի լրիվ դասընթացը: Իսկ Նիկողայոս Մառը (որի կերպարին բազմիցս պիտի անդրադառնանք սույն գրքի էջերում) դիտմամբ մնաց գիմնազիայի վերջին դասարանում, որպեսզի հնարավորություն ունենա կատարելագործվելու հին հունարենում:

Սերն ու հետաքրքրությունը դեպի դասական բանասիրությունը և առհասարակ անտիկագիտությունը Հ. Օրբելին պահպանեց ընդմիշտ:

1909 թ. Հ. Օրբելին ավարտեց Պատմա-բանասիրական ֆակուլտետը և ձեռնամուխ եղավ թեկնածուական աշխատություն գրելուն: Այն նվիրված էր Կովկասի ազգագրության՝ ըստ դասական (հունական և հռոմեական) հեղինակների տեղեկությունների: «Թեման շատ հետաքրքիր է, ծավալով այնքան էլ մեծ չէ..., բայց շատ խառը և մանրակրկիտ աշխատանք պահանջող: Հենց այսօր վերջացրի նյութերի ընտրությունը, հույս ունեմ երկու շաբաթում ավարտել ամբողջ աշխատության սևագրությունը: Գրում եմ պրոֆ. Ժեբելյովի ղեկավարությամբ, բայց այն նախօրոք պետք է գրախոսվի Մառի կողմից»: Այսպես էր նա գրել ծնողներին 1910 թ. դեկտեմբերի 10-ին ուղարկած նամակում:

1911 թ. Հ. Օրբելին ավարտեց համալսարանը, ավարտեց ոչ միայն Պատմա-բանասիրական, այլ նաև Արևելյան լեզուների ֆակուլտետը:

Անցյալ հարյուրամյակի վերջերից, հատկապես այն շրջանից, երբ ֆակուլտետի ղեկան է ընտրվում խոշորագույն արաբագետ Վիկտոր Ռոմանովիչ Ռոդենը (1849-1908), Պետերբուրգը դառնում է արևելագիտության համաշխարհային կենտրոններից մեկը: Արևելքի, նրա բազմադարյան մշակույթի նկատմամբ խոր հարգանքի մթնոլորտ էր տիրում այստեղ: Մեկընդմիշտ ընդունված էր, որ Արևելքը պետք է ուսումնասիրվի նույնպիսի խիստ գիտական մեթոդներով, ինչպես և Արևմուտքը: Մեծ ուշադրության էին արժանանում ոչ միայն մեռած, այլև կենդանի լեզուների ուսումնասիրությունը, ազգագրությունը, նյութական մշակույթի հուշարձանները: Պրոֆեսորական կազմի մեջ էին համաշխարհային անուն ձեռք

բերած գիտնականներ՝ իրանագետ Վ. Ա. Ժուկովսկին (1858-1918), Միշին Ասիայի պատմաբան Վ. Վ. Բարթոլդը (1869-1930), սեմագետ Պ. Կ. Կոկովցովը (1861-1942), եգիպտագետ Բ. Ա. Տուրանը (1863-1920) և ուրիշներ: Գիտությունը անշահախնդրորեն նվիրված այս մեծությունները ձգտում էին պատրաստել արժանի փոխարինողներ:

Արևելագիտական առարկաներից Հովսեփի Օրբելուն գրավեց նախ և առաջ հայագիտությունը. այդ բնագավառում նա գտավ այնպիսի մի բարեկամ, ուսուցիչ ու դաստիարակ, որպիսին Նիկողայոս Մառն էր (1864-1934): Երբ Հ. Օրբելին եկավ Պետերբուրգ, Մառն արդեն ճանաչված էր որպես Ռուսաստանի խոշորագույն արևելագետներից մեկը: Նրա անվան հետ էր կապված հայրենական կովկասագիտության մի ամբողջ դարաշրջան: 1888 թ. Ն. Յա. Մառը ավարտում է Արևելյան լեզուների ֆակուլտետը և Ք. Պատկանյանի առաջարկությամբ մնում համալսարանում՝ իբրև պրոֆեսորի պաշտոնակատար հայագիտության ամբիոնում: Շուտով գիտական մամուլում մեկը մյուսի հետևից լույս են տեսնում նրա հմտալից պատմական ու բանասիրական հետազոտությունները: Արևելեյան մի շարք լեզուների ու մատենագրությունների գիտակ Ն. Մառը գրական-մշակութային այնպիսի աղբյուրներ է բացահայտում, որոնք վրիպել էին (երբեմն՝ իսպառ) իր նախորդների տեսադաշտից: Նա իրավամբ համարվում է հայվրացական բանասիրության՝ գիտական այդ նոր ճյուղի հիմնադիրը: Նա մշակել է գիտության այդ մարզի մեթոդիկան, որը նրա իսկ աշխատություններում տվել է ապշեցուցիչ արդյունքներ: Դրացի այդ երկու ժողովուրդների կողմից ստեղծված դպրությունները նա դիտել է որպես մեկ ամբողջության՝ բրիտանյա Արևելքի մշակույթի հարազատ պտուղներ ու բաղկացուցիչ մասեր:

Անսահմանորեն նվիրված լինելով գիտությանը, Ն. Յա. Մառը նրա իսկական մշակն է եղել: Մառի առաջարկած գաղափարները դրվում էին կապիտալ ուսումնասիրությունների հիմքում: Նրա աշակերտները սկսեցին համալրել Արևելյան լեզուների ֆակուլտետի պրոֆեսորական կազմը: Բուռն եռան-

դը, անձնական հմայքը դեպի իրեն էին գրավում և՛ ունկընդիրներին, և՛ հետևորդներին: Ն. Յա. Մառի ընդհանուր ղեկավարութեամբ Հ. Օրբելին յուրացրեց Արևելյան լեզուների ֆակուլտետի լրիվ դասընթացը՝ հայ-վրացական-պարսկական բաժնի սահմաններում: Լսեց լեզվաբանության ներածության, հայերենի, վրացերենի, պարսկերենի, մասամբ արաբերենի, հին Արևելքի, Վրաստանի և Հայաստանի պատմության, Հայաստանի և Վրաստանի պատմական աշխարհագրության, հայոց և վրաց գրականության պատմության, պարսիկների պատմության դասընթացները:

Ֆակուլտետում, Ն. Մառից բացի, կովկասագիտության գծով մասնագիտական պարապմունքներ էին վարում նաև նրա աշակերտներ Ի. Ա. Զավախովը (Զավախիշվիլի, 1876-1940), որը 1906 թ. հաջողությամբ պաշտպանեց հին Հայաստանի և հին Վրաստանի պետական կարգին նվիրված իր հայտնի մագիստրոսական դիսերտացիան⁴, և Ն. Գ. Ադոնցը, որի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» դիսերտացիան, իրոք, մի դարաշրջան կազմեց հայագիտության համար⁵:

Ն. Մառը համառորեն պայքարում էր հանուն ուսումնական առարկաների տարրորոշման. նա կտրականապես դեմ էր, որ նույն դասընթացում բոլորովին հնացած եղանակով շարադրվեին և՛ լեզուն, և՛ գրականությունը, և՛ պատմությունը: Այն տարիներին, երբ Հ. Օրբելին հաճախում էր համալսարանի պարապմունքներին, դասավանդումը տարվում էր արդեն լրիվ ժամանակակից եղանակով:

Հ. Օրբելու պատրաստության հարցում մեծ դեր խաղաց Յակով Իվանովիչ Սմիռնովը (1869-1918): Նա արտասովոր լայն գիտելիքների տեր մարդ էր, շատ էր հետաքրքրվում նաև հայկական հնություններով: Մառի հետ միասին Յա. Ի. Սմիռնովը մասնակցեց Գառնիի հեթանոսական տաճարի պեղումներին, ուսումնասիրեց այն ժամանակ այնքան խորհրդավոր թվացող Գեղամա լեռների վիշապ-կոթողները: 1899 թ. Սմիռնովը հրաժարվում է Պետերբուրգի համալսարանում դասախոսական աշխատանքից և անցնում էրմիտաժ՝ որպես Մի-

ջին դարերի և վերածննդի բաժնի ավանդապահ: Սակայն շարունակում է պարապել ունկնդիրների հետ, որոնց թվում էր նաև Հ. Օրբելին: Մի ամբողջ տարի Հ. Օրբելին մասնակցեց Աղթամարի տաճարին նվիրված սեմինար պարապմունքներին:

Հ. Օրբելին ընդմիջո պահպանեց Յա. Ի. Սմիռնովի նրկատմամբ սերն ու ակնածանքը: Երբ 1913 թ. Սմիռնովը վերադարձավ համալսարան, Հ. Օրբելին դարձյալ սկսեց մասնակցել նրա դասախոսություններին, Սմիռնովն էլ իր հերթին հաճախում էր Օրբելու դասերին և հարկ եղած դեպքում օգնություն գալիս նրան⁶:

Շատ գիտելիքներ ձեռք բերեց Հ. Օրբելին համալսարանի լսարաններում, սակայն իսկական բարձրագույն կրթությունն նա ստացավ թերևս ոչ այնքան նեակի ափին, որքան Անիում:

Հայաստանի միջնադարյան մայրաքաղաքի պեղումները բացառիկ տեղ են գրավում Ն. Յա. Մառի բազմակողմանի գործունեության մեջ: XIX դարում ճանապարհորդները քանիցս այցելել էին Անի, սակայն նրանց դիտարկումները չէին կարող էական ազդեցություն ունենալ ավանդական հայացքների վրա, որոնց համաձայն՝ Բագրատունիների անկումից հետո XI դ. երկրորդ կեսին քաղաքն աստիճանաբար կորցրեց իր նշանակությունը: 1892 և 1893 թթ. Ն. Մառը ձեռնարկեց երկու գիտական արշավ դեպի Անի, սակայն ստիպված եղավ դադարեցնել պեղումները, քանի որ թանգարանի չգոյության պատճառով հայտնաբերված առարկաները ցրվում էին, վրտանգ կար, որ դրանք առհասարակ կվրիպեն գիտության տեսողաշտից: Բայց, ահա, 1904 թ. պեղումները վերսկսվեցին և շարունակվեցին մինչև 1917 թ.: Այսպիսով, 16 անգամ հեռավոր Պետերբուրգից Անի էին ժամանում գիտնականներ, 16 ամառ անցկացնում ավերակ քաղաքում:


Պեղումների արդյունքները տպավորիչ էին: Մառը կարողացավ մանրամասնորեն վերականգնել միջնադարյան քաղաքի տեսքը: Հնագիտական նյութերը վկայում էին, որ Անին սկսեց լքվել ոչ թե XI դարում, այլ երկու-երեք հարյուրամյակ

հետո, և հենց այդ շրջանում դարձավ ինքնատիպ և շատ բարձր մշակույթի օրրան:

Մառն ու նրա աշխատակիցները ձգտում էին ոչ թե սենսացիոն հայտնագործումների, այլ իրական պատմական պատկերի վերականգնմանը՝ իր բոլոր հակասություններով հանդերձ: «Հասարակության մեջ և գիտականների շրջանում գոյություն ունի հետաքրքրություն դեպի տոնական ու շքեղաշուք Անին, — ասում էր Ն. Մառը, — բայց չի կարելի մոռանալ, որ որքան էլ փոքր էր Անին, այնուամենայնիվ, այնտեղ ապրել են և հասարակ մահկանացուներ, աշխատավորներ, արհեստավորներ, մանր առևտրականներ, ընդհանրապես աշխատավոր մարդիկ: Նրանց կենցաղի, որքան էլ այն համեստ ու անհրապույր լինի, նրանց անշուք բնակարանների ու տնտեսությունների, մի խոսքով առօրյա և ամենօրյա Անիի ուսումնասիրությունը ոչ պակաս հասարակական-պատմական հետաքրքրություն է ներկայացնում»:

Մառի ղեկավարությամբ Անիում հիմնադրվեց փաստորեն իսկական հնագիտական ինստիտուտ: Թեև պաշտոնական հաստատում չստացած, այդ ինստիտուտը գործում էր իբրև իսկական գիտահետազոտական հաստատություն՝ աշխատակիցների բավականին կայուն կազմով, գիտական աշխատությունների սեփական շարքով, հնագրարանով: Իր փայփայած հաստատության գործունեությունը ծրագրելիս Մառը ինչ-որ չափով առաջնորդվել է 1894 թ. Կոստանդնուպոլսում հիմնված ռուսական մի այլ հնագիտական ինստիտուտի օրինակով: Անին, սակայն, ունեցել է իր առանձնահատկությունները, նախ և առաջ՝ այն սերտորեն կապված էր հայ հասարակության հետ: Անիի հետազոտական ինստիտուտը Հայաստանում գործող առաջին գիտահետազոտական հաստատությունն է եղել: Հետագայում այն հիմք է ծառայել 1918 թ. Թիֆլիսում ստեղծված Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտին, որից, կարելի է ասել, սկիզբ են առնում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի մի շարք այլ գիտական հիմնարկություններ:

Մասնակիցների համար Անիի պեղումները հնագիտական հիանալի դպրոց են եղել: Այդ արշավներից Հ. Օրբելին ստա-



ցաւ և՛ նյութի, և՛ նրա վերլուծութեան խոր գիտելիքներ: Անիի հուշարձանների դիտումները ծնեցին մի շարք նոր ու կարևոր գաղափարներ: Այդ գաղափարները շուտով դրվեցին Առաջավոր Ասիայի մշակույթին նվիրված նրա աշխատութեան հիմքում: «Իր գիտական գործունեությամբ և գիտական աշխարհայացքի զարգացմամբ Հ. Ա. Օրբելին մեծ չափով պարտական էր ուսումնասիրվող իրական առարկաների հետ եղած անմիջական շփմանը», — նշում էին հետազայում Ն. Յա. Մառը, Ս. Ֆ. Օլդենբուրգը (1863-1934) և Ի. Յու. Կրաչկովսկին (1883-1951)⁸:

Անիում, հիշում էր Հ. Օրբելին, «շարունակվում էր և՛ լեզուների, և՛ պատմության, և՛ բանասիրության, և՛ արվեստի պատմության ուսումնասիրությունը՝ պեղված հնագույն հուշարձանների հիման վրա: Այդ բոլորը աշակերտներին էր անցնում հենց իրենից՝ Մառից... Աշակերտների հետ նա սիրալիր էր, ինչպես երեխաների հետ, ժպտալով մեզ անվանում էր «տղաներ», բայց սխալի դեպքում՝ վրդովվում ու պատասխան պահանջում, ասես մենք չափահաս էինք, իրեն հավասար»⁹:

Առաջին անգամ Հ. Օրբելին Անի եկավ 1906 թ.: Արշավը հաջող էր անցնում, ավարտվել էր Գազկաշեն եկեղեցու (որը Զվարթնոցի ընդօրինակումն էր) մաքրումը: Հենց այդ ժամանակ էր հայտնաբերվել Գազիկ Ա. Թագավորի (990-շուրջ 1017) արձանը՝ չալմայով, տաճարի մանրակերտը ձեռքին: Գազկաշեն տաճարում գտնվեց XI դ. պղնձյա հսկայական մի ջահ, այնքան ծովաված ու ալյանդակված, որ սկզբում դրա կառուցվածքը անհասկանալի էր անգամ ընդհանուր գծերով: Զահի վերականգնումը Ն. Մառը հանձնարարեց Հ. Օրբելուն, վերջինս մեկնեց Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական) և մեկ շաբաթ սովորեց փականագործի մոտ, ապա հավաքեց կտորները և, ելնելով հայտնաբերման ժամանակ ունեցած դիրքից, վերականգնեց ջահը իր նախնական ձևով:

Այդ ժամանակվանից Հովսեփ Օրբելին համարյա ամեն ամառ անցկացնում էր Անիում, դառնալով Մառի սովենամերձավոր աշխատակիցը: Այլ պարտականությունների հետ միասին տնօրինում էր Անիի հնադարանը: Վերջինս հիմնվել

էր մասնավոր միջոցների շնորհիվ: Սկզբում հնադարանի համար հարմարեցված էր այն շենքը, որը XI դ. դարձվել էր մզկիթ (Մանուչեի մզկիթը): 1906 թ. հաշվետվության մեջ Ն. Մառը նշում էր. «Վերջապես, շատ էին Անիի թանգարանի մաքրման, կարգի բերման, հնությունների նկարագրման ու տեղադրման աշխատանքները: Սակայն այստեղ չարվեց այն ամենը, ինչ անհրաժեշտ էր, իսկ այն, ինչ արված է, ձեռք է բերվել շնորհիվ նրա, որ այս տարի էս ունեի հիանալի աշխատակիցներ՝ նկարիչ Ա. Տ. Պոլտորացկի և ուսանող Հ. Ա. Օրբելի, որոնք առանց ձեռքերը ծալելու թանգարանում աշխատում էին ոչ միայն ցերեկները, այլ երբեմն նաև գիշերները»¹⁰:

1908 թ. սեպտեմբերին ավարտվեց թանգարանի նոր շենքի կառուցումը: Այժմ Մանուչեի մզկիթում (առաջին բաժանմունք) պահվում էին մանր առարկաները և Գազիկի արձանը, իսկ նոր թանգարանում (երկրորդ բաժանմունք) տեղավորված էին արձանագրությունները, ճարտարապետական մանրակերտներն ու խաչքարերը:

Անիի այցելուների թիվը մեծ էր: Ամռանը այնտեղ լինում էր մոտ երկու հազար մարդ: Գալիս էին նաև հեռավոր նահանգներից: Այցելուների մի զգալի մասը կազմում էին օտարերկրացիները: Հովսեփ Օրբելուն հարկ էր լինում տալ ընդարձակ բացատրություններ, որոնք հաճախակի վեր էին ածվում իսկական դասախոսությունների: Ձեռք բերված փորձի հիման վրա Հ. Օրբելին պատրաստեց և «Անույ շարքում» հրատարակեց պեղվող քաղաքի ուղեցույցը, ապա կազմեց հնադարանում պահվող նյութերի գիտական ցուցակը, իսկ ամփոփելով այն գիտելիքները, որոնք կուտակվել էին Անիի պատմության և նրա հուշարձանների վերաբերյալ՝ հրատարակեց նաև «Անույ ավերակները» հանրամատչելի մի փոքրիկ գրքույկ:

1909 թ. Հ. Օրբելին ձեռնարկեց մի ինքնուրույն ճանապարհորդություն դեպի պատմական Հայաստանի գավառներից մեկը՝ Խաչեն (Լեռնային Ղարաբաղում): Ուղևորությունից առաջ մանրամասն ուսումնասիրել էր Խաչենի տիրակալ Հասան Զալալի դաշույնի երախակալը, այդ կապակցությամբ

նաև՝ ողջ գավառի պատմությունը: Մանոթանալով աշխատությունների ձեռագրին, Ն. Մառը հիմք ունեւր առաջադրել հենց Հ. Օրբելու թեկնածությունը:

Ամառվա մեծ մասն Անիում անցկացնելուց հետո, Հ. Օրբելին ուղևորվեց դեպի Ղարաբաղ: «Այնտեղ եղած ժամանակ, — գրում էր նա իր հաշվետվության մեջ, — ինձ հաջողվեց շրջագայել Զիվանշիրի գավառի միայն «նախալեռնային» (իրականում շատ լեռնոտ) մասը, այն էլ մասամբ: Այն բոլոր հուշարձանները, որոնք ես այցելեցի, վերաբերում են գլխավորապես XIII դարին, մասամբ XII և XIV դարերին... Բոլոր վայրերում պատճենահանեցի 220 արձանագրություն, ընդ որում նրանց մի մասը մինչև օրս անհայտ է եղել»: Հետագայում, 1911 թ. Հ. Օրբելին ներկայացրեց իր ուսումնասիրությունը որպես ավարտական շարադրություն:

Այդ համեմատաբար կարճատև ինքնուրույն գիտական ճանապարհորդությանը հաջորդեց մեկ ուրիշը՝ այս անգամ բոլոր առումներով ավելի բարդ. խոսքը դեպի Մոկս ձեռնարկած ուղևորության մասին է: Մինչև կյանքի վերջը Հ. Օրբելին մնաց Մոկսում տեսածի ու լսածի տպավորության տակ: Նա Արևելյան Ֆակուլտետի վերջին կուրսում էր, երբ 1910 թ. սեպտեմբերի 22-ին Գիտությունների ակադեմիայի Պատմաբանասիրական բաժանմունքի նիստում Ն. Յա. Մառը առաջարկեց Վան ուղարկել մի մասնագետի, որը կզբաղվի այնտեղի հնություններով և ձեռնամուկ կլինի բարբառագիտական նյութերի հավաքմանը: Զեկուցողի կարծիքով, այդպիսի աշխատանք կարող էր կատարել Հ. Օրբելին: Առաջարկությունն ընդունվեց, և Հ. Օրբելին անցավ նախապատրաստական աշխատանքի: «Իհարկե, ստիպված եմ շատ պարապել ու պատրաստվել այդ ուղևորությանը, որովհետև ինչպես իր պայմաններով, այնպես էլ ըստ իր էության դա շատ պատասխանատու աշխատանք է, — գրում էր Հ. Օրբելին ծնողներին 1910 թ. դեկտեմբերի 12-ին: — Հիմա պատրաստվում եմ գլխավորապես լեզվի գծով: Դա, իսկապես, ամենադժվարն է, բայց և ուղևորության հիմնական նպատակն է»: Եվ, իրոք, հարկավոր էր կարելիվույն չափ յուրացնել Մուշի և Մոկսի բարբառ-

ները, որոնք այնքան հեռու էին թե՛ գրական լեզվից, թե՛ Օրբելուն մանկուց հարազատ Քիֆլիսի հայերենից:

1911 թ. հուլիսի 1-ին Հովսեփ Օրբելին Բաթումից մեկնեց Կոստանդնուպոլիս և Տրապիզոնի, Բայբուրդի (Բաբերդ) ու էրզրումի (Կարին) վրայով ուղևորվեց Վան: Ճանապարհին նա լուսանկարեց և նկարագրեց մի շարք ճարտարապետական հուշարձաններ, ընդօրինակեց արձանագրություններ: Օգոստոսի 14-ին հասավ Վան և որոշեց կենտրոնանալ Մոկսի հայ բնակչության բարբառի ուսումնասիրության վրա:

Մոկսն ընկած է Վանա լճի հարավային մասում և բոլոր կողմերից շրջապատված է լեռներով: Հովսեփ Օրբելին ձիով հասավ Մոկս և մնաց այնտեղ 5 շաբաթ: Նահանգի կառավարչությունը կենտրոնացված էր հինգ թաղերից, փաստորեն հինգ համարյա միաձուլված գյուղերից բաղկացած Մոկս «քաղաքում»:

Մոկսի մշտական նստակյաց բնակչությունը կազմում էին հայերը (672 տուն), հաստատվել էին նաև քրդեր (սուննի դավանության՝ 640 տուն) և զնու-բոշաներ (4-5 տուն): Այստեղ ապրում էր նաև թուրքական պաշտոնյաների երեք-չորս ընտանիք:

2. Օրբելին ձեռնամուխ եղավ Մոկսի բարբառին վերաբերող նյութերի հավաքմանը, կազմեց հատուկ բառարան. «Բառարան մտան առօրյա կենցաղի բոլոր այն բառերն ու արտահայտությունները, որոնք վերաբերում են դաշտային աշխատանքներին, արհեստներին, անասունների ու բույսերի անուններին, մի խոսքով այն ամենին, ինչը կարելի է տեսնել շուրջը... Արժեքավոր ծառայություն մատուցեցին ինձ երեխաները, որոնք աշխատանքս դիտում էին ուրպես զվարճալիք և ամեն րոպե վազում մոտս հարցնելու՝ գրել եմ արդյոք այս կամ այն բառը», — հայտնում էր երիտասարդ ուսումնասիրողը Գիտությունների ակադեմիային ներկայացրած հաշվետվության մեջ: Բառացանկում տեղ էին գտել գրառումներ թաղիքագործների և բուրդ գլողների (որոնք տեղական բարբառով կոչվում էին կառան) գաղտնի լեզվից: Կատաններն ապրում էին Մոկսի մի քանի շրջաններում, բայց ամեն աշուն

հեռանում արտագնա աշխատանքների: Հ. Օրբելին կարողացավ կազմել տեղական բարբառի հոլովման և խոնարհման հատուկ աղյուսակներ, գրի առավ առակներ, հեքիաթներ, զվարճալի պատմություններ, որոնցում «բաղաբացի» հեղինակները հումորով (երբեմն բավականին կծու) արտահայտվում էին գյուղացիների բարբերի մասին: Գրածեց նաև տեղական բալլադներ, երգեր, առակներ և ասացվածքներ:

Զմեռն անցկացրեց Վանում, իսկ 1912 թ. գարնանը, հենց որ ճանապարհը բացվեց, նորից ուղևորվեց Մոկս: Երկրորդ ուղևորության ընթացքում ավարտեց հավաքված բնագրերի վրա կատարելիք աշխատանքը և շարունակեց դեռևս ձմռանն սկսած բրդերենի ուսումնասիրությունը: Օգտագործելով հայերեն բառարանի բառացանկը, կազմեց բրդերենի բառարան, ուսուգեց արդեն եղած բառարանները:

Մոկսում Հովսեփ Օրբելին հավաքեց վերին աստիճանի հետաքրքիր՝ թե՛ բանահյուսական, թե՛ բարբառագիտական, թե՛ ազգագրական նյութ: Ի տարբերություն իր նախորդների, նյութը հավաքելիս նա դիմում էր մարզկանց, որոնք երբեք դուրս չէին եկել իրենց ծննդավայրից, ուստի լեզուն, արտասանությունը անարատ էին պահպանել: Առհասարակ, Հ. Օրբելին եղել է միակ եվրոպացի գիտնականը, որն աշխատանքը կատարել է հենց տեղում: Երկրամասի բնակչության շատ սովորույթներ, կենցաղային առարկաներ պալիս էին շատ հնուց: Այսպես, և՛ Մոկս «բաղաբում», և՛ Զեաստան գյուղում նա նկատեց ահագին սալեբից կառուցված շինություններ, որոնց ներսում կաշին կարծր քարից տաշած հսկայական անիվներ: Դրանք ձիթհաններ էին, որոնք միևնույն ժամանակ կարող էին ծառայել որպես դինգ: Այդպիսի անիվներ հայտնի էին Անիում, Մրենում, իսկ 1936 թ. հայտնաբերվեցին նաև Ամբերգում, բայց միայն Մոկսում կարելի էր դիտել դրանք աշխատելիս:

Մոկսի Մուրթուլա բեգի տանը գիտնականը ուշադրություն է դարձնում պատուհանի գոգին դիզված քառակուսի հարթ բարձերին: Երբ երեկոյան տանտիրոջն այցելում էին հյուրեր՝ բրդեր և հայեր, այդ բարձերը դրվում էին հատակին, և պատվավոր հյուրերը նստում էին դրանց վրա: Առավել մեծանունը

կարող էր ստանալ նաև երկրորդ բարձր: Բարձերը դարձում էր «մեհմանդարը» (հյուրընկալը), ընդ որում՝ մի դեպքում տան տերն էր բերելու նշան տալիս, մյուս դեպքում՝ մեհմանդարը բարձր բերում էր, չսպասելով նշանի: Հյուրերը նստում էին հատակին, ըստ ավագության և անվանիություն, ճիշտ ասյակես, ինչպես տեղավորվում էին հին Պարսկաստանում և հին Հայաստանում պալատ հրավիրված ազնվականները: «Բարձը» (ինչպես և «գահը») խորհրդանշում էր հասարակական սանդուղքի վրա նախարարի գրաված աստիճանը: Հետագայում Հ. Օրբելին կռահեց, որ էրմիտաժում պահվող մի ըսկուտեղի վրա պատկերված են հենց այդպիսի բարձեր, իսկ նրանց կույտի վրա հենված գահին նստած է հոսսրով Անուշիրվան արքան:

1912 թ. Հ. Օրբելին հնարավորություն ունեցավ ուսումնասիրել նաև Աղթամար կղզին, նրա հնությունները, հատկապես հուշակավոր տաճարը: Հետագայում նա մեծ աշխատություն գրեց այդ մասին, որը լույս տեսավ հետմահու:

Մոկս կատարած ուղևորությունը մեծապես ազդեց Հ. Օրբելու աշխարհայացքի վրա: 1895-1896 թթ. հայկական ջարդերն արձագանք գտան ամբողջ աշխարհում: Մասնավորապես Ռուսաստանում հայերի աղետավոր ճակատագրի մասին հաղորդվում էր և՛ հատուկ աշխատություններում, և՛ պարբերական մամուլում: Հայտնի է, որ ձգտելով ապահովել իր շովինիստական քաղաքականությունը, սովթանական կառավարությունը կաշառում էր քուրդ ցեղապետներին, քրդերին գրգռում հայ գյուղացիության դեմ: Այդ բոլորի մասին Հ. Օրբելին գիտեր, անշուշտ, ոչ միայն գրավոր աղբյուրներից: Եվ ահա նա ընկնում է լեռնային մի մարզ, ուր խաղաղ հարեանություն են անում հայերն ու քրդերը, ուր միահյուսվում են նրանց կենցաղը, զուգընթաց զարգանում ժողովրդական բանավոր ստեղծագործությունը: Երիտասարդ գիտնականի վրա մեծ տրավավորություն էր թողել Մուրթուլա բեգը: «Ապրում եմ մուդիրի (տեղսմասային պրիստավի) քրդական բեյի՝ հայկական կոտորածի ժամանակ հայերի պաշտպաններից մեկի և մեծ ռուսասերի տանը: Ես հաղվագեպ եմ հանդիպել այդպիսի հա-

մակրելի և գեղեցիկ ծերունու: Եվ ամենից գլխավորը՝ նա զարմանալիորեն բարեկիրթ է, թեև Վանից այն կողմ ոչ մի տեղ չի գնացել: Ինձ հիանալի է վերաբերվում», — նկարագրում է Հ. Օրբելին 1911 թ. սեպտեմբերի սկզբին ծնողներին ուղղված նամակում: Ընդգծելով Մուրթուլա բեգի դերը հայերի կոտորածի ժամանակ, նկատի է ունեցել հետևյալը. 1895 թ. Ողիմ գյուղը շրջապատված էր գազազած ֆանատիկոսների ամբոխով, և միայն Մուրթուլա բեգի անձնազոհ միջամտությամբ փրկեց այդ գյուղի բնակչությանը:

Մոկսի բրդերի, նրանց հոգեկան հատկանիշների մասին Հովսեփ Օրբելին միշտ սիրով էր հիշում: Կրկնում ու կրկնում էր, թե ինչպես նա Մոկսում հասկացավ, որ ոչ թե քուրդ ժողովուրդն է հայերի ոխերիմ թշնամին, այլ բրդերին հայերի դեմ սադրող թուրքական վարչակազմը:

Ավարտելով Մոկսին նվիրված աշխատությունը, գիտնականը ցավով նշում էր, որ 1915 թ. եղեռնից փրկվեց միայն մի քանի հայ ընտանիք. բնակչության մի մասը բնաջնջվեց, մյուս մասը փախուստի դիմեց, Մոկսն ամայացավ: «Իսկ 1911-1912 թթ., երբ ես եղա Մոկսում, այնտեղ շատերն էին ապրում, կյանքն աշխատանքի մեջ էր ընթանում և զուրկ չէր փոքր ուրախություններից, թեև պայմանները անիրավ էին ու ծանր: Եվ հատկապես ցավալի է գիտակցել, որ այն քիչը, որը ես կարողացա գրառել Մոկսում՝ և՛ բնագրերի այս փոքր ժողովածուն, և՛ հայկական, և՛ քրդական բառարանները, կարծես, վերջին վկայություններն են հայերի և բրդերի՝ երկու ժողովուրդների մի քանի հազար զավակների լեզվի, կացութաձևի, սովորությունների, աշխատանքի և ուրախության մասին»¹¹:

Վանում եղած ժամանակ Հ. Օրբելին մասնակի պեղումներ սկսեց Վան քաղաքի մոտակայքում գտնվող Թոփրակ-կալե (Հողաբերդ) բլուրում, տեղացի բնակիչներից և հնավաճառներից գնեց մի շարք հետաքրքիր հնագիտական-ազգագրական առարկաներ, որոնք հետագայում հանձնեց էրմիտաժ:

Վերադառնալով Պիտերբուրգ, Հ. Օրբելին իր աշխատանքների մասին հանգամանորեն գեկույցեց Գիտությունների

սեփական Պատմա-բանասիրական բաժանմունքում և Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքում: Գիտական աշխարհն այդ ելույթներն ընդունեց մեծ հետաքրքրությամբ: Այնուհետև երիտասարդ հայագետը ձեռնամուխ եղավ մագիստրոսական աստիճան ստանալու համար նախատեսված քննություններ հանձնելուն և սկսեց պատրաստվել Արևելյան լեզուների ֆակուլտետում դասավանդելու համար: 1914 թ. ապրիլի 25-ին նա կարգաց իր փորձնական դասախոսությունը՝ «Սելջուկյան գմբեթային դամբարանների և տապանաքարերի կախյալությունը համապատասխան հայկական հուշարձաններից» թեմայով: Նույն թվականի սեպտեմբերի 6-ին, արդեն որպես դասախոս, նա սկսեց իր՝ հայկական վիմագիր արձանագրություններին նվիրված դասընթացը:

1892 և 1893 թթ. Անիում պեղումներ կատարելիս Ն. Մառը հավաքեց նաև արձանագրություններ, միաժամանակ ստուգելով այլ գիտնականների կողմից առաջարկված ընթերցումները: Ն. Մառը մտադիր էր արձանագրությունների լիակատար գիվան կազմելու սկիզբ դնել, սակայն, ծանրաբեռնված լինելով այլ աշխատանքներով, նա գրեթե դադարեցրեց իր պրպտումներն այդ ուղղությամբ, իսկ երկու տասնամյակ հետո վերահանձնարարեց այդ գործը Հ. Օրբելուն: Արդեն Ղարաբաղում եղած ժամանակ (1909 թ.) Հ. Օրբելին ընդօրինակել էր շուրջ 220 վիմագիր արձանագրություն, իսկ 1913 թ. սկսած նրա կարևորագույն աշխատությունները պատկանում են հենց այդ բնագավառին: Հ. Օրբելին ձեռնամուխ եղավ հատկապես Անիի արձանագրությունների հավաքմանը՝ մի գործ, որ լույս տեսավ, ցավոք, հետմահու:

Հ. Օրբելու հետաքրքրությունների շրջանակը շարունակ ընդլայնվում էր. 1916 թվականը նրա կյանքում նշանավորվեց ուրարտագիտությանը մատուցած կարևոր ծառայությամբ:

Դարասկզբին ուրարտագիտությունը տակավին նոր գիտություն էր, որը դժվարությամբ էր անջատվում ասորագիտությունից: Արձանագրական նյութը բավականին առատ էր, ուրարտերին լեզվի ուսումնասիրությունը շոշափելի արդ-

յունքներ էր տալիս, սակայն Վանի թագավորության հնագիտական ուսումնասիրությունը դեռևս սաղմնային վիճակում էր: Սիստեմատիկ պեղվում էր միայն Թոփրակ-կալէ բերդը, մինչդեռ Վանի հնությունների նկատմամբ հետաքրքրությունն աճում էր տարեցտարի, իսկ Մառը իրեն հատուկ կերպոտությունամբ պաշտպանում էր ուրարտացիներից դեպի հայերն ու վրացիները ձգվող պատմական ու մշակութային կապերի գրույթը: Զեկուցելով Վանի շրջակայքում կատարած պեղումների մասին, Հ. Օրբելին շեշտում էր, որ «զգալի արդյունքներ կարելի է սպասել հետագա պեղումներից»: Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքը բաղմիցս հարց էր հարուցել դեպի Վան արշավախումբ ուղարկելու վերաբերյալ, սակայն նման ձեռնարկումը հաջողվեց իրականացնել միայն 1916 թ., երբ խնդիր առաջացավ անհապաղ արշավախումբ ուղարկել հարավային Հայաստան՝ պատերազմական գործողություններով ու կոտորածներով վտանգված հայկական մշակութային արժեքները գեթ մասամբ փրկելու համար: Նախաձեռնողը դարձյալ Ն. Մառն էր: Ն. Մառը, Հ. Օրբելին, Ս. Տեր-Ավետիսյանը և այլք ուղևորվեցին Վան, որն այդ ժամանակ գրավված էր ռուսական զորքերի կողմից: Հունիսի 11-ից մինչև հուլիսի 16-ը Մառը պեղեց Թոփրակ-կալէ բլուրը, իսկ Հ. Օրբելին (հունիսի 22-ից մինչև հուլիսի 16-ը)՝ Վանի ժայռի մոտակայքը: Թուրքական հարձակումը և ռուսական զորքերի նահանջը ստիպեցին գիտնականներին արագացնել իրենց վերադարձը:

Վանի ժայռի նկարագրությունը Հ. Օրբելին պիտի ծանոթացած լիներ դեռևս ռուսանոգական տարիներին, երբ ընթերցում էր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» (գիրք Ա, գլ. 16): Ժայռի հյուսիսային լանջերին, Վանի Միջնաբերդի պարիսպների մոտ, երևում էին քարաժայռի մեջ փորված երկու խոր որմնախորշեր, որոնք կիսով չափ լցված էին հողով: Արևմտյան որմնախորշի արևելյան պատի վրա փորագրված էր ուրարտական Սարգուրի Բ թագավորի սեպագիր արձանագրությունը: Արձանագրության վերջին տողի տակ ինչ-որ տառեր էին երևում: Պեղումները ցույց տվին, որ դրանք հայե-

րեն տառեր են, որոնք հայտնի են եղել արձանագրության արդեն առաջին հետազոտող Յ. Շուլցին:

Թվում էր, որ որմնախորշերը ունեն աննշան բարձրություն, և Շ. Օրբելին ցանկացավ պարզել արևմտյան որմնախորշի ձևն ու նշանակությունը: Հունիսի 22-ին սկսեցին այն պեղել: Աշխատանքը ծանր էր և թվում էր ապարդյուն: Ե՛վ բանվորները, և՛ ինքը՝ Շ. Օրբելին, արդեն սկսել էին հուսահատվել, երբ հունիսի 28-ին, երեկոյան ժամը 4-ին, Ձ մետր խորություն վրա երևաց ուղղանկյուն կտրվածք ունեցող, երկու կողմերից մշակված մի մեծ կոթող: Երբ կավը հեռացրին, պարզվեց, որ բոլոր շորս հղկված կողերի վրա կան սեպագրեր: Դա մի բնորոշ ուրարտական կոթող էր՝ զուգահեռանիստ ձևի, կլոր վերնամասով, ըստ որում՝ կոտրված: «Դժվար չէ պատկերացնել, — հաշվետվության մեջ գրում էր Շ. Օրբելին, — թե ինչպիսի անհամբերության մթնոլորտում էին շարունակվում մեծ զգուշություն պահանջող և անձնակազմի անդամների կողմից հիանալի կատարվող աշխատանքները՝ ձոթողը մաքրելու և փորել-հանելու համար. շատ հուզմունք և ուրախություն էր պատճառում այն, որ արձանագրությունն անսահման էր թվում. կոթողի վերին, այսինքն՝ հարավային նիստի մաքրմանը զուգընթաց, այն շարունակ դեպի խորն էր գնում»: Շուտով որմնախորշի հետնապատի վրա հայտնաբերվեց և մաքրվեց ևս մեկ արձանագրություն:

Պեղումները շարունակվում էին. երևաց խորանարդաձև պատվանդանը՝ իր բնով, ուր մտնում էր կոթողի ելուստը, որի ջարդված լինելու պատճառով կոթողը թեքվել էր: Երբ պեղումները դադարեցրին, կոթողը նախապես երեք անգամ պտտեցին իր առանցքի շուրջը, որպեսզի հնարավոր լիներ արձանագրությունը լուսանկարել ամբողջությամբ, ապա այն դրին իր տեղը:

Պեղվեց նաև արևելյան որմնախորշը: Այստեղ հայտնաբերվեց մեր թվարկության 949-950 թթ. տապանախաչ, հայերեն արձանագրությամբ. «ԶԳՈՒՐԳԵՆ ՅԻՇ(Ե)Ա Ի Ք(ՐԻՍ-ՏՈ)Ս»: Շ. Օրբելու կարծիքով տապանը Վասպուրականի թագավոր Գագիկ Ա Արծրունու եղբայր Գուրգենինն էր:

Արևելյան որմնախորշի հատակի գույնը ցույց էր տալիս, որ այստեղ երբեք կոթող է եղել:

Հ. Օրբելու հայտնաբերած ուրարտերեն արձանագրությունները բովանդակում էին մ. թ. ա. VIII դարի կեսերին իշխած Սարգուրի Բ թագավորի տարեգրության նշանակալից հատվածներ: Այն վերաբերում էր Ուրարտուի ծաղկման շրջանին, հաղորդելով կարևորագույն տեղեկություններ դարաշրջանի իրադարձությունների մասին: Բնական է, որ արձանագրությունների հայտնաբերումը Հ. Օրբելուն բերեց մեծ և արժանի փառք: Մինչդեռ գիտնականը համարում էր, որ կատարված է աշխատանքի միայն շնչին մասը՝ այն էլ ոչ ընդհանրապես ուրարտական հնությունների, այլ անգամ Վանի ժայռի ուսումնասիրության բնագավառում «Որմնախորշերի պեղումներով, — գրում էր նա իր հաշվետվության մեջ, — այս տարի հանված է սոսկ մի շնչին բուռ հող այն հսկայական նյութերից, որոնց ձեռք չի տրված, և որոնք մեծ քանակությամբ, բոլորովին բաց վիճակում գտնվում են հողի մակերեսին»:

Վանում կատարված պեղումներն, ասես, խորհրդանշում էին Հ. Օրբելու գիտական ուղու մի որոշ շրջանի ավարտը. 29 տարեկան էր, բայց արդեն ճանաչված գիտնական, ուներ 21 անգամ ավարտված աշխատություն, դասախոսում էր համալսարանում, 1914 թ. ընտրվել էր Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքի իսկական անդամ, դարձել այդ բաժանմունքի գիտնական քարտուղար: Այս շրջափուլի ուսումնասիրություններում զգալիորեն գերակշռում է վերլուծությունը, սակայն առանց լայն ամփոփումների: Հեղափոխությունից հետո Օրբելու կերպարը հիմնովին փոխվեց:

* * *

Հեղափոխությունից հետո Պետրոգրադի, ինչպես նաև ողջ Ռուսաստանի գիտական աշխարհի առջև ելակետային մի հարց ծագեց՝ ինչպես վերաբերվել կատարված պատմական իրադարձությանը: Ոմանք հավատարիմ մնացին իրենց համամենի հայացքներին և անցան հեղափոխությունը մերժողների ճամբարը: Մի մասը լքեց հայրենիքը: Շատերը շփոթության

մեջ էին, մանավանդ որ ստիպված էին հրաժարվել աշխատանքի սովորական ձևերից, նյութապես ծայրահեղ ծանր վիճակում էին գտնվում, կորցրել էին երբեմնի գիտական կապերը: Բայց քիչ չէին նաև այնպիսիները, որոնք կողմնորոշվեցին դեպի նոր կարգերը և շարունակեցին ծառայել հայրենական գիտությանը: Պետրոգրադում աշդպիսի գիտնականները (մեր խոսքը հումանիտար գիտությունների գործիչներին մասին է) համախմբվեցին Ն. Մառի շուրջը: Նրանց թվում էր նաև Հովսեփ Օրբելին:

Այդ տարիներին հատկապես բացահայտվեցին նրա կազմակերպչական ունակությունները: Զդադաբեցնելով հետազոտական աշխատանքը, նա հռանդուն կերպով նվիրվում է մի շարք հիմնարկների վերակառուցմանը: Առաջին հերթին դա վերաբերում է նյութական մշակույթի պատմության ակադեմիային:

Մինչև հեղափոխությունը հնագիտական հետազոտությունների պաշտոնական կենտրոնը եղել է արքունի մինիստրությանն առնթեր հաստատված Կայսերական հնագիտական հանձնաժողովը (հիմնադրվել է 1859 թ.): Նրա խնդիրների շարքին էին պատկանում պեղումների կազմակերպումը և հնությունների ուսումնասիրությունը: 1889 թ. սկսած միայն այդ հանձնաժողովը կարող էր թույլատրել պեղումներ կատարել կամ վերականգնել եղած կոթողները: Նկատի ունենալով էրմիտաժ թանգարանի շահերը, հանձնաժողովը խրախուսում էր նախ և առաջ անտիկ և սկյութական-սարմատական առարկաների որսնումները: Հանձնաժողովը գլխավորում էին ուսական բարձր ազնվականության ներկայացուցիչները, նրա վերջին նախագահը կոմս Ա. Ա. Բոբրինսկին էր:

Հսկմամբերյան հեղափոխությունից հետո Կայսերական հնագիտական հանձնաժողովը վերակազմվեց Ռուսական պետական հնագիտական հանձնաժողովի (1918 թ. նոյեմբեր), իսկ ընտրովի առաջին նախագահը դարձավ Ն. Մառը: Սկսվեց վերակառուցման ծանր աշխատանքը, որին Ն. Մառի, Ս. Յ. Օլդենբուրգի, Վ. Վ. Բարթոլդի, Ս. Ա. Ժեբելյովի հետ միասին հռանդուն մասնակցություն ցուցաբերեց Հ. Օրբելին: Նոր հիմ-

Նարկուժյունը շուտով ստացավ «Նյութական մշակույթի պատմության ուսական ակադեմիա» անունը, իսկ հետագայում վերանվանվեց «Պետական»: Համախմբելով պատմաբաններին, հնագետներին, արվեստի մասնագետներին, Ակադեմիան մեծ դեր կատարեց գիտության մի շարք բնագավառներում:

2. Օրբելին ընտրվել էր Ակադեմիայի իսկական անդամ, ստանձնել գիտական բարոտուղարի պարտականությունները, ղեկավարում էր 2 բաժին՝ Հայաստանի և Վրաստանի պատմության, Հայաստանի և Վրաստանի արվեստի: Բայց հենց այդ տարիներին տարածայնություններ առաջացան Մառի հետ, որոնց պատճառը դուրս գիտական էր՝ 2. Օրբելին կտրականապես մերժում էր Ն. Մառի՝ լեզվի «նոր ուսմունքը»: Նշանավոր է հետևյալ փաստը. 1921 թ. սեպտեմբերին 2. Օրբելին ընտրվում է Գիտությունների ակադեմիային առընթեր Հաբեթական ինստիտուտի անդամ, որը ղեկավարում էր Ն. Մառը և որը կոչված էր զարգացնելու և տարածելու վերջինիս «նոր ուսմունքը»: Բայց արդեն հաջորդ տարվա մարտին 2. Օրբելին թողնում է հաստիքը, իսկ հետո առհասարակ հրաժարվում մասնակցել ինստիտուտի աշխատանքներին:

1931 թ. 2. Օրբելին հեռանում է նաև Նյութական մշակույթի ակադեմիայից, թողնում է համալսարանը (ուր վարում էր Արևելքի նյութական մշակույթի պատմության ամբիոնը), տալով մի ընդարձակ դիմում՝ լեզուների և բանասիրական առարկաների կրճատման անթույլատրելիության մասին: Նա փաստորեն խզում է իր հարաբերությունները Մառի հետ, շատ ծանր ապրելով այդ քայլը: Հարաբերությունները վերականգնվում են Մառի մահվանից մի քանի ամիս առաջ, երբ Մառը (2. Օրբելու ասելով) ինքն էր հրաժարվել իր «նոր ուսմունքից»:

Սակայն լեզվաբանության բնագավառում եղած տարածայնությունները չէին կարող կասկածի տակ դնել Մառի մեծությունը: Գրախոսելով Ն. Մառի «Անի» հոշակավոր գիրքը, նվիրելով Ն. Մառին հատուկ հոդված, 2. Օրբելին շարունակում էր դիտել նրան որպես ուսական խոշորագույն արևելագետներից մեկը: Այն տարիներին, երբ գրվում էին այդ հոգ-

վածները, Մառի նկատմամբ այդպիսի վերաբերմունքը հատուկ էր գիտնականների մեծամասնությանը, այդ թրվում նաև նրանց, ովքեր չէին բաժանում «նոր ուսմունքի» հիմնական դրույթները: Բայց ուսուցչի նկատմամբ ունեցած հավատարմությունը Հ. Օրբելին պահպանեց նաև այն ժամանակ, երբ լեզվաբանությանը նվիրված Ի. Ստալինի հոդվածներից հետո Ն. Մառի անունը դարձավ պախարակելի, նրա աշխատությունները հախուռն կերպով վատաբանվում,՝ իսկ թվացող կամ իսկական հետևորդները ամենուրեք ենթարկվում էին «մշակման»: Եվ հենց այդ պահին, լեզվաբանությանը նվիրված Ի. Ստալինի հոդվածների մասին խոսելիս, էրմիտաժի տնօրեն Հ. Օրբելին ասաց. «Խոր կերպով օգտագործելով այն ամենը, ինչ որ Մառը գրել է առանձին բանասիրական հարցերի և լեզվաբանության մասին, կարելի է հենարան գտնել հերքելու այն, ինչ որ մտցրել է մեր գիտակցության մեջ մուլար «նոր ուսմունքը»: Մինչդեռ հանել Մառի դիմանկարները, հայտարարել նրան «մերկ արքա», երբ ճշալով այդ անում են նրանք, ովքեր քարոզում էին Մառի անսխալականության մասին՝ հեշտից հեշտ է... Ես ինքս ինձ անվանել եմ, անվանում եմ և կշարունակեմ անվանել Մառի աշակերտ, սակայն առանց չափերտների: Քանի Մառը կենդանի էր և շփման համար մատչելի, ես կատարում էի աշակերտի այն պարտքը, որին սովորեցրել էր ինձ ինքը՝ Ն. Մառը, այն է՝ ուղղել ուսուցչի սխալները: Ես դա արել եմ. մինչև որ մեր մեջ անանցանելի պատեն չէր առաջացել: Ամենամեծ կորուստը ուսուցչի կորուստն է: Ես ապրել եմ այդ կորուստը, բայց, բարեբախտաբար, ժամանակավորապես, որովհետև կյանքի վերջին 3-4 ամիսներին Մառը վերադարձավ իր նախկին հայացքներին դեպի լեզվագիտությունը»: Այնուհետև, խոսելով պատմության և լեզվաբանության գոհակացված դրույթների դեմ մղած իր պայքարի մասին, Հ. Օրբելին ընդգծեց, որ էրմիտաժում Մառի կույր պաշտամունք չի եղել, սակայն «եղել է խոր հարգանք դեպի նրա ծառայությունները: Այդ հարգանքը չէր ընդունում անքննադատական ձևեր, նրա վրա, ինչպես ավետարանի, աղոթելու ցանկություն: Բայց

շատ հարցերում անհասկանալիություն էր տիրում: Անձամբ
ևս Մառից ընդունել եմ այն, ինչ որ ինքս եմ ստուգել, այդ
ինձ սովորեցրել էր Մառը»:

Իսկ 1955 թ. մարտին, ելույթ ունենալով Լենինգրադի հա-
մալսարանի դասախոսների և ուսանողության առջև, Հ. Օր-
բելին ասաց. «Մեր արևելագետների, բանասերների, լեզվա-
բանների սրբազան պարտականություններից մեկն է՝ սահ-
մանադատել լեզվաբանության և մշակույթի հարցերում խոր,
ամենախոր ուսումնասիրության հողի վրա կանգնած Մառին
այն Մառից, որին մարդիկ (որոնց համար դա ավելի հեշտ
էր՝ քան լեզուներ սովորելը) դարձրին իրենց դրոշմ: Իրենց
դրոշմ դարձրին, որպեսզի հետո կոխոտեն այդ դրոշմ և նե-
տեն ցեխի մեջ»¹²:

Հետհեղափոխական տարիներին բացառիկ մեծ էին Հ.
Օրբելու ծառայությունները խմբագրական-հրատարակչական
ասպարեզում: Խմբագրի պարտականություններին նա վաղուց
էր ծանոթ: XXII հատորի № 3-4 պրակից սկսած նա խմբա-
գրել է Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բա-
ժանմունքի աշխարհահռչակ պարբերականը: Դա մի ծանր և
պատասխանատու աշխատանք էր, կապված բաղմամբիվ արե-
վելյան գրչությունների հետ: 1917-1918 թթ. նա առհասարակ
յուրացրել էր գրաշարի մասնագիտությունը, որին ծանոթ էր
այն տարիներից, երբ սկսել էին լույս տեսնել նրա՝ հայ վիմա-
գրությանը նվիրված աշխատությունները: 1918 թ. լույս տե-
սավ Հ. Օրբելու ձեռքով շարված իր իսկ գրքույկը, նվիրված
Անանիա Շիրակացու «Յաղագս հարցման և լուծման» խնդրա-
գրքին, շարված ճշմարիտ ճաշակով և շքեղությամբ:

Նվաճա, 1920 թ. մայիսին Հ. Օրբելուն ընտրում են Մը-
շակույթի պատմության ակադեմիայի հրատարակչական բաժ-
նի վարիչ, իսկ 1921 թ. Գիտությունների ակադեմիայի տպա-
րանի տնօրեն: Ակադեմիայի 1728 թ. հիմնված տպարանը
հռչակված էր իր տառատեսակների բաղմազանությամբ, որոնց
շարքում պատվավոր տեղ էին գրավում արևելյան տառատե-
սակները: Այստեղ տպագրվում էին ոչ միայն ուս, այլև ար-
տասահմանյան գիտնականների աշխատություններ: Իսկ Հ.

Օրբելու ստանձնման տարիներին, ընդհանուր քայքայման պատճառով, պայմանները շատ ծանր էին. պակասում էր էլեկտրաէներգիան, թղթի խիստ կարիք էր զգացվում, բացակայում էին որակյալ աշխատողներ: Եվ ահա, Հ. Օրբելին հավաքում է գիտական աշխատողների մի խումբ, նրանց գրաշարություն սովորեցնում և ապահովում «Նյութական մշակույթի պատմության ռուսական ակադեմիայի տեղեկագրի» առաջին հատորի լույս ընծայումը:

Խմբագրելով մի շարք գիտական պարբերականներ, Հ. Օրբելին միաժամանակ հայթայթում է տպագրական մեքենաներ, ապահովում բանվորների մթերային մատակարարումը, ձգտում է վերադարձնել որակյալ աշխատողներին, պայքարում ակադեմիական տպարանի դիմազրկման դեմ: Նրա օրոք տպարանը ենթարկվում է Գիտությունների ակադեմիայի և Նյութական մշակույթի պատմության ակադեմիայի տնօրինությանը և կատարում միայն մասնագիտական պատվերներ:

Թե որքան բարձր է գնահատվել Հ. Օրբելու գործունեությունը որպես տպարանի տնօրենի, կարելի է հավաստիանալ 1922 թ. մարտի 6-ին Գիտությունների ակադեմիայի մշտական քարտուղար, ականավոր հնդկագետ Ս. Ֆ. Օլդենբուրգի նամակից.

«Մեծարգո Իոսիֆ Աբգարովիչ,

Ռուսական գիտությունների ակադեմիայի կոնֆերանսը (ընդհանուր ժողովը — Կ. Յ.) փետրվարի 4-ին իր նիստում լսեց Ձեր հրաժարականը ակադեմիայի տպարանի տնօրենի պաշտոնից: Կոնֆերանսը միաձայն որոշեց իր խորին շնորհակալությունը հայտնել Ձեզ այն ամենի համար, ինչ արված է ակադեմիայի տպարանի օգտին: Կոնֆերանսը քաջ գիտե, որ եթե Ռուսաստանում իր բացառիկ սարքավորումներով այդ միակ տպարանը չկործանվեց հեղափոխության ժամանակ, ապա դրա համար ռուս գիտնականները և, առաջին հերթին, Ակադեմիան, պարտական են Ձեզ: Ձեր բացառիկ եռանդն և անձնագոյությունը փրկեցին գիտական աշխատանքի այդ կարևորագույն միջոցը: Որպես գիտնական և տպագրական գործ-

ծի գիտակ, Դուք, ավելի քան որևէ մեկը, կարողացաք ակադեմիայի տպարանի աշխատանքն այնպես կազմակերպել, որ այնտեղ շարվեին և հրատարակվեին գիտական գրքեր այն դեպքում, երբ մյուս տպարանները չէին կարող այդ անել:

Թույլ տվեք նաև ինձ, որպես մշտական քարտուղարի և տպարանի Ձեր աշխատակցի, ավելացնել անձնական շնորհակալությունս այն անխոնջ և բարեկամական պատրաստակամության համար, որով օգնության էիք գալիս մշտական քարտուղարին՝ ակադեմիական հրատարակության գործում. հաճախակի տված արժեքավոր խորհուրդների և ցուցումների համար, որոնք վերաբերում էին Ակադեմիայի աշխատությունների տպագրությանը:

Խորապես և անկեղծորեն Ձեզ հարգող
Սերգեյ Օլգենբուրգ»¹³:

Հ. Օրբելին այն մարդկանցից էր, որոնք հետհեղափոխական ծանր տարիներին ապահովում էին գիտական օջախների կենդանի շունչը, այն է՝ գիտահետազոտական արտադրանքի հրատարակումը, դարձնելով այն հասարակական սեփականություն:

Զարմանում ես, թե որքան բազմակողմանի է եղել Հ. Օրբելու գործունեությունն այդ տարիներին: Նա շարունակում էր դասավանդել համալսարանում, 1919-1922 թթ.՝ նաև Հնագիտության ինստիտուտում, մեկ տարի Արվեստի պատմության ինստիտուտի պրոֆեսոր էր, մասնակցում էր նաև կազարյան ճեմարանի աշխատանքներին:

1815 թ. հիմնադրված կազարյան ճեմարանը 1919 թ. մարտի 4-ին, Վ. Ի. Լենինի ստորագրած դեկրետով, դարձավ Հայկական ինստիտուտ, ասլա վերակառուցվեց Առաջավոր Ասիայի ինստիտուտի, 1920 թ. կոչվեց Արևելյան կենդանի լեզուների կենտրոնական ինստիտուտ, իսկ 1921 թ. վերածվեց Մոսկվայի արևելագիտության ինստիտուտի: Դեռևս 1918 թ. Ն. Մառը մյուս թեկնածությունների հետ միասին, առաջարկում էր դասախոսության ներգրավել նաև Հ. Օրբելուն («Հայագետ, հայկական վիմագրության, Անի քաղաքի հնություն-

ների, Կովկասի քրիստոնեական և մահմեդական հուշարձան-ների մասնագետ — Առաջավորասիական Արևելքի պատմութ-յան մամբիոնի և Արևելյան արվեստի ու Կովկասի հնություն-ների մամբիոնի գծով): Զ. Օրբելին մասնակցեց Լազարյան ճեմարանի վերականգնմանը և դասախոսական աշխատանքից հրաժարվեց միայն 1921 թ.: Մշտապես ապրելով Պետրո-գրադում, նա միայն ժամանակ առ ժամանակ կարող էր գնալ Մոսկվա:

Այդ նույն ժամանակաշրջանում տեղի ունեցավ մի իրո-դություն, որը երեք տասնամյակով կանխորոշեց Զ. Օրբելու ճակատագիրը. 1920 թ. նոյեմբերի 1-ին որպես ավանդապահ նա աշխատանքի անցավ Էրմիտաժում, որին նվիրվեց ամբողջ էությունը: Անխից հետո այդ թանգարանը դարձավ նրա սիրո իսկական առարկան, որտեղ ամենամեծ չափով բացահայտ-վեցին և ծաղկեցին նրա՝ գիտության խոշորագույն կազմա-կերպի լավագույն կարողությունները: Ավանդապահ ընտր-վելուց շատ շանցած, նա գլխավորեց Մահմեդական Արևելքի բաժինը, 1924 թ. ամռանից մինչև 1925 թ. աշունը կատարեց տնօրենի օգնականի պարտականությունները: 1926 թ. Զ. Օր-բելին դարձավ իր իսկ նախաձեռնությամբ ստեղծված Արևել-քի բաժնի վարիչ, 1933 թ.՝ գիտական մասնագետ-խորհրդա-տու: 1934 թ. հունիսին Զ. Օրբելին նշանակվեց Էրմիտաժի տնօրենի տեղակալ, իսկ մեկ ամիս անց ստանձնեց տնօրենի պաշտոնը: Հասարակության աչքում երկար տարիներ Օրբե-լին և Էրմիտաժը ի մի էին ձուլվել:

Երբ որպես աշխատակից Զ. Օրբելին առաջին անգամ ոտք դրեց Էրմիտաժի շենքը, թանգարանը կիսադատարկ էր: Դեռևս 1914 թ. Արքունի մինիստրությունը, որի տնօրինության ներքո էր գտնվում Էրմիտաժը, Մոսկվա էվակուացրեց հա-րավ-առասական և սիբիրյան հնությունները, գրեթե բոլոր թանկարժեք իրերը, արևելյան արժանթեղենը և դրամական հա-վաքածոների մի մասը: 1917 թ. սեպտեմբերին երկու գնաց-քով Մոսկվա ուղարկվեցին նկարներ, քանդակներ, ճենա-պակի և այլն: 811 արկղ և ուղեսնդուկ տեղավորվեցին Կրեմ-

լում: Երրորդ գնացքի ուղևորումը կասեցվեց հեղափոխական իրադարձություններով:

Չնայած հիմնական հավաքածուների բացակայությանը, էրմիտաժում մշակվում էր թանգարանի նոր կառուցվածքը, աշխատակիցները զբաղված էին հեղափոխությունից հետո ազգայնացված արվեստի բազմաթիվ հուշարձանների հաշվառմամբ և նկարագրությամբ: Բայց ամբողջական կյանքով էրմիտաժը կարող էր ապրել միայն իր արժեքների վերադարձից հետո: 1918 թ. հունիսից էրմիտաժի խորհուրդը սկսեց պահանջել իր հավաքածուների վերադարձը, որոնց, այլ վերտանգներից բացի, սպառնում էր ցրումը տարբեր թանգարաններով մեկ: Եվ ահա, 1920 թ. հունիսի 23-ին վերջապես որոշում կայացվեց էրմիտաժի հավաքածուները վերադարձնելու մասին: Թանգարանի մի շարք աշխատակիցներ, այդ թվում նաև Հ. Օրբելին, գործուղվեցին Մոսկվա: Տեղափոխումը կատարվեց բացառիկ հմտությամբ, առանց կորստի և վնասվածքի: Արդեն նոյեմբերի 28-ին բացվեց Ռեմբրանդտի դահլիճը: Վերաէվակուացմանը մասնակցող Հովսեփ Օրբելին կարող էր արդյոք մտածել, որ քսան տարի անց, ռեակցիոնիստ դրդերի տակ, ստիպված կլինի դեպի Սվերդլովսկ ուղարկել այդ նույն հուշարձանները, իսկ 1945 թ. կրկին անգամ խորապես ապրել դրանք վերադարձնելու ուրախությունը:

Տասնյակ տարիների ընթացքում էրմիտաժի համաշխարհային հռչակը գլխավորապես կապված էր արևմտաեվրոպական գեղանկարչության հավաքածուների հետ: Արևելյան արվեստի հուշարձանները (շուրջ 10.000 առարկա) ցրված էին տարբեր բաժանմունքներում և հաճախակի դուրս էին մնում հետազոտողի տեսադաշտից: 1909 թ. հայտնի «Արևելյան արժաթ» աշխատությունը հրապարակած Յա. Ի. Սմիռնովը ըստ էության մնացել էր միայնակ: Ցուցադրվում էր հուշարձանների միայն փոքր մասը: Ընդամենը մեկ դահլիճ էր հատկացված Եգիպտոսին և Միջագետքին, փոքր սրահներ էին առանձնացվել հինարևելյան, դպտի, վաղ քրիստոնեական առարկաներին: Արևելյան իրերի մի մասը մտցված էր «Ռուսական մինչմոնղոլական հնություններ» և «Ռուսաստանյան

սլավոնների հարեանների հնություններ» ցուցադրումների մեջ: Արեւելյան զենքը առանձնացվել էր մյուս առարկաներից և ցուցադրվում էր արեւմտաեվրոպականի հետ միասին:

Հեղափոխութիւնից հետո արեւելյան հուշարձանների ուսումնասիրութիւնն ու ցուցադրումը դարձել էին խիստ արդիական, ուստի հարց դրվեց առանձին Արեւելյան բաժանմունք ստեղծելու մասին: Բաժանմունքը (որը հետագայում կոչվեց Մահմեդական Արեւելքի բաժանմունք) ստեղծվեց Ն. Մառի, Վ. Վ. Բարթոլդի, Ս. Ֆ. Օլգենբուրգի գործուն մասնակցութեամբ: Հենց այդ բաժանմունքի աշխատակից դառնալով Հ. Օրբելին:

Երիտասարդ գիտնականն իր գործունեութիւնն սկսեց թանգարանի այլ բաժիններում ցրված հուշարձանների հավաքումով և ցուցահանդեսի նախապատրաստումով: Շատ հաճախ այդ առարկաներն ունեին ոչ այնքան զեղարվեստական, որքան պատմամշակութային արժեք, և հին ավանդույթներին կապված աշխատակիցները դիմադրում էին նման ցուցահանդեսների բացմանը: Բայց, հենվելով բաժանմունքի այն աշխատակիցների վրա, որոնք համամիտ էին իրենց ղեկավարի գաղափարներին, Հ. Օրբելին կենսագործեց իր ծրագիրը: Այստեղ տեղին է հիշել, որ գաղափարակիցների շարքում էր նաև Կամիլա Վասիլենա Տրեերը, որը, մասամբ Հ. Օրբելու ազդեցութեամբ, հակվել էր Միջին և Մերձավոր Արեւելքի մշակութային ուսումնասիրությանը, իսկ հետագայում հատուկ ըզբաղվել հայ մշակութային: 1920 թվականից սկսվեց Հ. Օրբելու և Կ. Վ. Տրեերի ամենօրյա ստեղծագործական համագործակցութիւնը, որը շարունակվեց 40 տարի: Մինչև Հ. Օրբելու կյանքի վերջին օրերը Կ. Վ. Տրեերը մնաց նրա անսահմանորեն հավատարիմ ընկերը և օգնականը գիտական բոլոր ձեռնարկումներում: Քսանական թվականներից սկսած Կ. Վ. Տրեերը առաջինն էր, որ ծանոթանում էր Հովսեփ Օրբելու տակավին չհրատարակված ձեռագրերին, և հեղինակը շատ բարձր էր գնահատում նրա կարծիքը: Իր մի շարք ուսումնասիրութիւններում Կ. Վ. Տրեերը զարգացնում էր Հ. Օրբելու մտքերն ու կոահումները,

իսկ երկու աշխատություն նրանք պատրաստեցին որպէս հեղինակակիցներ:

Արդեն առաջին ցուցահանդեսը (1922 թ.), որ նվիրված էր սասանյան արվեստին, արժանի փառք բերեց բաժանմունքին: Էրմիտաժում սասանյան արվեստը հարուստ էր ներկայացված, որովհետև բազմաթիվ առարկաներ գտնվել էին Ռուսաստանում, մասնավորապես նախկին՝ Պերմի և Վյատկայի նահանգներում: «Այստեղ՝ կուլտուրական աշխարհի այս խուլ ծայրամասերն էին բերվում արժաթե սկուտեղներ և այլ ամաններ՝ փոխանակելու համար մորթիների հետ. դա կիսավայրենի գազանորսների գլխավոր հարստությունն էր, որոնք դաբերի ընթացքում իրենց սրբավայրերում պահպանել էին հեռավոր Իրանի ապրանքները», — գրում էր Հ. Օրբելին: Ցուցահանդեսին նախորդեց տարբեր բաժիններում ցրված առարկաների հավաքման երկար աշխատանք: Ցուցադրված էին նաև այն նմուշները, որոնք էրմիտաժ էին բերվել հեղափոխությունից հետո: Ներկայացված էին էրմիտաժից դուրս պահվող ցուցանմուշներ՝ սկուտեղներ, ափսեններ, գավաթներ, սափորներ, թասեր, կանթեղներ, ջրլիցներ, կաթսաներ, փորագրված քարեր, ոսկե, արծաթե և բրոնզե դրամներ: Անդրադառնալով այդ ցուցահանդեսին, Ա. Յու. Յակուբովսկին հետագայում գրեց, թե այն միշտ կմնա որպես «գիտական ցուցադրման առաջին հաջողված փորձ, որպես ցուցադրվելիք հուշարձանների հետ կապված որոշակի գիտական պրոբլեմի կամայերսային լուծում»¹⁴:

Էրմիտաժին միացված Շտիգլիցի թանգարանի մեծ դահլիճում 1923 թ. Հ. Օրբելին կաղամակերպեց մահմեդական հախճապների ցուցահանդես, որին 1925 թ. հաջորդեց երրորդ մեծ ցուցահանդեսը՝ նվիրված գլխավորապես մահմեդական արվեստին:

Այդ երեք ցուցահանդեսները պայմաններ ստեղծեցին, որպեսզի բաժանմունքը (1921 թ. արդեն անվանվում էր «Կովկասի, Իրանի և Միջին Ասիայի բաժանմունք») վերածվի ինքնուրույն Արևելքի բաժնի: Վերջինս պիտի ի մի բերեր էրմիտաժում եղած արևելյան մշակույթի բոլոր նմուշները: 1926 թ.

մայիսին Հ. Օրբելին գլխավորեց նորաստեղծ Արևելքի բաժնի աշխատանքները:

Գիտակաղմակերպչական աշխատանքով զբաղված Հ. Օրբելին շարունակում էր նաև մանկավարժական գործունեությունը: 1925 թ. աշնանից մինչև 1929 թ. դարունը նա ղեկավարում էր համալսարանի Հաշվառական բանասիրության ամբիոնը, իսկ 1929 թ. աշնանից՝ նոր կազմակերպված Արևելքի նյութական մշակույթի պատմության ամբիոնը: Քսանական թվականների կեսերին նրա ունկնդիրների թվում էին Ա. Վ. Բանկը, Վ. Ա. Բոգոսլովսկին, Լ. Տ. Գյուզալյանը, Ն. Վ. Դյակոնովան, Ե. է. Լիպշիցը, Ա. Հաջյանը, Ա. Լ. Յակոբսոնը: Ավելի ուշ նա դասավանդում է նաև քրդերեն, նրա մոտ սովորել են Ի. Ի. Յուկերմանը, Ղ. Ք. Քուրդուրը և ուրիշներ: Բայց հիմնական գործունեությունը ծավալվում էր էրմիտաժում: Այստեղ նա մշակում և իրապործում է ցուցադրման նոր ըսկզբունքներ, շարունակում նմուշների կենտրոնացման աշխատանքը:

Էրմիտաժի գործերով ծանրաբեռնված Հ. Օրբելին երկար ժամանակ ստիպված էր հրաժարվել հնագիտական հետախուզումներից: Բայց ահա 1928 թ. հնարավորություն առաջացավ մեկնել Դաղստան: Այստեղ մի քանի տեղացի գիտնականների հետ նա ձեռնամուխ եղավ XII—XIII դդ. բարձրաքանդակների ուսումնասիրությանը, այցելեց Կուբաչի գյուղը, ծանոթացավ տեղական արհեստներին: Հաշվառման վերցվեցավելի քան 100 բարձրաքանդակ, որոնցից մի քանիսը տեղափոխվեցին էրմիտաժ: Հ. Օրբելին այցելեց նաև Դերբենդի ամրոց, որի պարիսպների վրա հայտնաբերեց մի շարք պարսկալեզու արձանագրություններ:

Հաջորդ՝ 1929 թ. Հ. Օրբելին կազմակերպեց մի նոր գիտական արշավ, այս անգամ ոչ միայն Դաղստան, այլև՝ Հայաստան: Նրա հետ էին Կ. Վ. Տրևերը, Ա. Հաջյանը, Լևինգրադի համալսարանի փորձնականեր Ս. Զոլյանը և Ա. Լ. Յակոբսոնը: Արշավախումբը պետք է ծանոթանար պատմական հուշարձանների վիճակին, ուսումնասիրեր հեղափոխությունից հետո թանգարաններ մուտք գործած առարկաները, վեր-

ջապէս՝ կապ հաստատելու նյութական մշակութի պատմութեան ակադեմիայի և Կովկասի հետազոտական հիմնարկներին միջև:

Հուլիսի 22-ից մինչև սեպտեմբերի 3-ը խումբը աշխատեց Հայաստանում: Մասնակիցները զբաղվեցին էջմիածնում և Ներսիսիանում պահվող նմուշներով, նպաստեցին նոր ցուցահանդեսի բացմանը, օգնեցին բրոնզի դարից մնացած փայտյա սալի վերականգնմանը: Հ. Օրբելին հատուկ ուշադրութեամբ վերաբերվեց Հայաստանի պետական թանգարանում պահվող՝ Անիից փրկված առարկաներին, որոնք շէր տեսել 13 տարի: Ուղևորութիւններ կազմակերպեցին դեպի Սևան, Արթիկ, Արամու, Քասախ, Փարպի, Բլուրական, Աշտարակ, Պտղնի, Զվարթնոց, Գառնի, Էլար, Նավան, Բաշքենդ և այլ վայրեր: Հ. Օրբելին եղավ Ամբերդում՝ Պահլավունի իշխանների հոյակապ ամրոցում, և այդ ժամանակ էլ ծրագրեց ապագա արշավախմբի աշխատանքը:

Հայաստան ուղևորվելիս Հ. Օրբելին և Կ. Վ. Տրեբլը մեկ շաբաթ մնացին Դաղստանում, ուր ծանոթացան Մախաչկալայի և Դերբենդի թանգարանային հավաքածուներին, պիտեցին շիրմաքանդակները: Հայաստանից Լենինգրադ վերադառնալու ճանապարհին Հ. Օրբելին նորից եղավ Դաղստանում: Դերբենդի քաղաքային սովետում նա մի ղեկուցում կարգաց քաղաքի պարիսպների և միջնաբերդի մասին, որից հետո հատուկ որոշում ընդունվեց դրանց պահպանութեան վերաբերյալ:

Վերադառնալով Լենինգրադ, Հ. Օրբելին իր ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացրեց այն առարկաների վրա, որոնք 1931 թ. պիտի ցուցադրվեին միջազգային ցուցահանդեսում:

1926 թ. Պենսիլվանիայում (ԱՄՆ) տեղի ունեցավ իրանական արվեստի և հնագիտութեան առաջին միջազգային համաժողովը: Այդ սովորվ բացվեց նաև մի հատուկ ցուցահանդես: Համաժողովը որոշում ընդունեց երկրորդ ցուցահանդեսը բացել Լոնդոնում, որոշեց նաև հրատարակութեան պատրաստել մի բաղմահատոր՝ «Պարսկական արվեստի տեսութիւն» (A Survey of Persian Art): Լոնդոնի երկրորդ համաժողովին մասնակցեց նաև Սովետական Միութիւնը:



Մի. Մանգլաս Է. Յոյ Լի



Հ. Օրբելին ռաանդ

2. Օրբելին ընտրվեց համաժողովի կազմակերպչական կոմիտեի կազմի մեջ, նրա ղեկավարությամբ էրմիտաժի աշխատակիցները ցուցանմուշների ընտրություն կատարեցին, և ահա, 1930 թ. վերջերին նա մեկնեց Լոնդոն՝ իր հետ վերցնելով սասանյան տորետիկայի մի շարք նմուշներ:

Համաժողովը բացվեց 1931 թ. հունվարի 5-ին. նրան մասնակցեցին խոշորագույն գիտնականներ Մ. Ի. Ռոստովցևը, Ֆ. Զառեն, Դ. Թալբոտ Ռայսը, Ա. Պոռպը, Յո. Ստրիգովսկին, Վ. Ֆ. Մինորսկին և ուրիշներ: Հ. Օրբելուց բացի, Սովետական Միության պատվիրակ էր նաև պրոֆ. Ֆ. Վ. Կիպարիսովը: Զեկուցողները համերաշխ էին այն բանում, որ պարսկական արվեստն իր հուժկու ազդեցությունն է գործել հարևան ժողովուրդների արվեստների վրա:

Հունվարի 7-ին տեղի ունեցավ ցուցահանդեսի բացումը: Հետագայում Հ. Օրբելին հիշում էր, որ երբ այդ հանդիսավոր պահից 6 օր առաջ ինքը ծանոթացավ նախապատրաստական աշխատանքների վիճակին, նրա մոտ այն տպավորությունն ստեղծվեց, որ նշանակված ժամկետին աշխատանքները ոչ մի կերպ չեն ավարտվի: Բայց գործում էին համերաշխ, և ցուցահանդեսը բացվեց սահմանված օրը: Դործը թեթևացրեց պիտակների բացակայությունը, անհրաժեշտ բոլոր տեղեկությունները կարելի էր քաղել տպագրված ցուցակից: Ցուցահանդեսում ներկայացված էր 27 ներկներից բերված 3.000 առարկա:

Սովետական Միությունը ներկայացրել էր էրմիտաժում, Արևելյան մշակույթների թանգարանում, Պատմության թանգարանում, Ասիական թանգարանում պահվող իրանական հուշարձանները: Սկզբում, ճիշտ է, Լոնդոն ուղարկվեց ընդամենը 30 ցուցանմուշ (էրմիտաժն, օրինակ, վախենում էր, որ արծաթե իրերը տեղափոխման ժամանակ կվնասվեն), բայց արդեն հունվարի 25-ին, ի պատասխան Հ. Օրբելու վճռական հեռագրի, էրմիտաժը լրացուցիչ նմուշներ ուղարկեց, որոնց արժեքը, ինչպես հաղորդում էր «Թայմս» թերթը, հասնում էր մինչև 50.000 ֆունտի: Սովետական Միության ցուցանմուշների քանակը կրկնապատկվեց: Դրանք «սասանյան շրջանի»

գերազանցապես ոսկե, արծաթե և բրոնզե իրեր էին: Սովետական թանգարանների և հատկապես էրմիտաժի ցուցանմուշները զգալիորեն հարստացրին ցուցահանդեսը և այնպիսի տպավորություն թողեցին համաժողովի մասնակիցների վրա, որ նրանք մեր պատվիրակությանը դիմեցին III միջազգային համաժողովը, համապատասխանաբար նաև ցուցահանդեսը, Սովետական Միությունում կազմակերպելու խնդրանքով. կառավարական պատասխանը դրական էր:

1931 թ. բացվեց Հ. Օրբելու և նրա աշխատակիցների կողմից պատրաստված Արևելքի բաժնի մշտական ցուցահանդեսը: Ցուցադրումը ծավալուն էր. ներկայացված էին Հյուսիսային Աֆրիկայի և Միջերկրական ծովի, Առաջավոր Ասիայի, Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Իրանի, Միջին Ասիայի, Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի երկրները: Այդ ցուցահանդեսը մնաց մինչև 1935 թ., երբ նրա հիման վրա բացվեց մի նոր ցուցադրություն: Այն հարմարեցված էր մոտակա իրանական արվեստի և հնագիտության միջազգային համաժողովին:

Իր գործունեությունը Հ. Օրբելին չէր սահմանափակում Արևելքի բաժնով. նրա տեսադաշտում էր ողջ էրմիտաժը, հատկապես 1934 թ. հետո, երբ նա նշանակվեց թանգարանի տնօրեն: Նոր նշանակումը ընդլայնեց Հ. Օրբելու հնարավորությունները՝ իրականացնելու իր մտահղացումները, բայց միաժամանակ աճեցին նաև պարտականություններն ու հոգսերը: էրմիտաժը դարձել էր տարբեր խնդիրներով զբաղվող խոշոր գիտական հաստատություն: Թանգարանի բոլոր օղակներ թափանցելու և նրանց ղեկավարելու համար լայն գիտելիքներ էին պահանջվում, և Հ. Օրբելին օժտված էր դրանցով: Նա հսկայական նշանակություն էր տալիս պահպանման աշխատանքին, ուստի նրա օրոք աշխատատար գույքագրում և ցուցակագրում անցկացվեց, որի ընթացքում այնպիսի հուշարձանների հայտնաբերվեցին, որոնք արժանի էին ցուցադրության և գիտական լայն շրջանառության մեջ մտնելու: Գիտական պահպանման հարցերի հետ միասին Հ. Օրբելին մտահոգված էր նաև հուշարձանների փաստական պահպանու-

թյամբ: Ձեռնարկվեցին գործուն միջոցառումներ, որոնց շնորհիվ էրմիտաժի գանձերը պահվում էին լիակատար անվտանգության մեջ:

Կազմակերպչական և տնտեսական հարցերը շատ ժամանակ էին խլում: Ժամանակ էր պահանջում նաև հասարակական աշխատանքը (մի քանի անգամ Հ. Օրբելին ընտրվել էր Լենինգրադի քաղաքային սովետի դեպուտատ): Աշխատանքային օրը սկսվում էր արշալույսին և ավարտվում ուշ գիշերը: Տնօրենը խորամուխ էր լինում թանգարանի տեխնիկական հագեցվածության բոլոր մանրուքների մեջ, զբաղվում լուսավորության, ջեռուցման հարցերով, սանիտարական վիճակով և այլն: Էրմիտաժը շենքի կարիք էր զգում, և Հ. Օրբելին երկարատև պայքար էր մղում, որպեսզի եղած շենքերից հանվեն ոչ թանգարանային հիմնարկները: Այդպիսիք էին, օրինակ, Փոքր էրմիտաժ կոչված շենքի տակ գտնվող հեծելազորային դպրոցը կամ նոր էրմիտաժում տեղ գտած գինու պահեստները: Հ. Օրբելու հաստատակամության շնորհիվ էրմիտաժին միացվեցին Ձմեռային պալատի առանձին սրահներ, իսկ 1945 թ. թանգարանին անցավ ամբողջ Ձմեռային պալատը:

Հ. Օրբելին ելույթներ էր ունենում էրմիտաժի դասախոսարանում, վարում էքսկուրսիաներ, ղեկավարում դպրոցական խմբակներ, դասախոսություններ կարդում բանվորական և գյուղացիական լսարանի առջև:

30-ական թվականները Հ. Օրբելու գործունեության առավել մեծ թափի ժամանակաշրջանն են: Նա հանդես է գալիս որպես մի շարք գիտամշակութային միջոցառումների կազմակերպիչ, նրա ղեկավարությանը այդ միջոցառումները վեր էին ածվում իսկական տոնախմբությունների:

1934 թ. ՄՍՀՄ-ում, Իրանում և մի շարք այլ երկրներում նշեցին պարսից մեծ բանաստեղծ Աբու-Կասիմ Ֆիրդուսու հազարամյա հոբելյանը: Լենինգրադում նախապատրաստական աշխատանքը ղեկավարում էր Հ. Օրբելին: Էրմիտաժի և ՄՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի ուժերը համախմբվեցին, մայիսի 29-30-ին տեղի ունեցավ ներկայանալի գիտաժողով: Էրմիտաժի թատրոնի

դրոսասարահում բացվեց Ֆիրդուսուն նվիրված ցուցահանդես, որը պատրաստել էր, բնականաբար, Արևելքի բաժինը: Հորելյանը նշվեց նաև Մոսկվայում (Մեծ թատրոնում կայացած նիստում գլխավոր ելույթը Հ. Օրբելունն էր), ապա Երևանում, Բաքվում, Թբիլիսիում, Տաշքենդում, նաև մյուս քաղաքներում: Հոկտեմբերին հորելյանական տոնակատարություններ սկսվեցին Իրանում: Սովետական Միության պատվիրակության կազմում էր նաև Հ. Օրբելին, որը Թեհրանում տեղի ունեցած համաժողովում խոսեց սասանյան արծաթի և Շահ-նամեի աղերսների մասին:

Ֆիրդուսու հորելյանի հաջող ավարտից հետո, Հ. Օրբելին զբաղված էր իրանական աղվեստի և հնագիտության III միջազգային համաժողովի կազմակերպմամբ (որը, ինչպես վերևում ասացինք, որոշված էր գումարել Սովետական Միությունում): Այդ տարիներին նա արդեն բացառիկ հեղինակություն ուներ ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: 1924 թվականից նա Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ էր, իսկ 1935 թ. հունիսի 1-ին ընտրվեց ակադեմիայի իսկական անդամ (միաժամանակ ակադեմիկոս դարձավ նաև նրա եղբայր Լևոն Օրբելին):

Սեպտեմբերի 11-16-ին Լենինգրադում տեղի ունեցան վերոհիշյալ համաժողովի նիստերը, իսկ եզրափակիչ երկու նիստերը կայանալու էին Մոսկվայում: Համաժողովի կապակցությամբ էրմիտաժում բացվեց մեծ ցուցահանդես՝ նվիրված Իրանի և նրա սահմանակից երկրների արվեստին: Սովետական մի շարք թանգարաններից բացի, արժեքավոր ցուցանրմուշներ էին տրամադրել Իրանի թանգարանները և մահմեդական սրբավայրերը, Լուվրը, Իրանական արվեստի և հնագիտության ամերիկյան ինստիտուտը, մասնավոր հավաքածուների սեփականատերերը:

Լենինգրադում հավաքված իրանագիտության խոշորագույն դեմքերի առջև Հ. Օրբելին հանդես եկավ սելջուկյան արվեստին նվիրված զեկուցումով, որն իր համարձակությամբ և թարմությամբ պիտի դիտվի իբրև ալդ շրջանի նրա գիտական խոշորագույն նվաճումներից մեկը: Նշելով Հ. Օրբելու

դերը ամբողջ միջոցառման նախապատրաստման գործում, Իրանի ժողովրդական լուսավորության մինիստրութիւնը նրան պարգևատրեց շքանշանով: Միաժամանակ նա ընտրվեց Թեհրանի համալսարանի պատվավոր պրոֆեսոր:

1936 թ. Հ. Օրբելին մի մեծ արշավախումբ է գլխավորում, որը պիտի հետազոտեր Ամբերդ ամրոցը: Իբրև էրմիտաժի և ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի ընդհանուր միջոցառում, դրան մասնակցում էին 15 գիտնական՝ Կ. Վ. Տրևերը, Ա. Յա. Բորիսովը, Գ. Գյուլամիրյանը, Ս. Տ. Երեմյանը, Տ. Ա. Իզմայլովան, Ա. Լ. Յակոբսոնը, Կ. Ղաֆադարյանը, Բ. Բ. Պիոտրովսկին, Ն. Մ. Տոկարսկին, Ա. Վրույրը և ուրիշներ: Աշխատանքներն ընթանում էին 1936 թ. սկզբներից մինչև օգոստոսի կեսերը: Մաքրվեցին Պահլավունի իշխանների պալատի առանձին մասեր՝ բաղնիքը, մատուռը, դեպի կիրճը տանող ստորերկրյա գետնուղին, X—XI դդ. անցկացված ջրմուղը: Ճարտարապետական կառույցների պեղումները և գտնված առարկաները պատկերացում էին տալիս XI—XIII դդ. ավատական ամրոցի տնտեսական ու մշակութային կյանքի մասին, մի շրջանի, որի հետազոտութանը Հ. Օրբելին հմտացել էր դեռևս: Անիում:

Գիտամշակութային խոշոր միջոցառումները մեծ տեղ են գրավում Հ. Օրբելու 30-ական թվականների գործունեութան մեջ: 1937 թ. նա մասնակցում է Ա. Ս. Պուշկինի մահվան հարյուրամյակին նվիրված Համամիութենական ժողովին, էրմիտաժում Պուշկինին նվիրված մեծ ցուցահանդես է կազմակերպում: Հաջորդ՝ 1938 թ. նա գործուն մասնակցություն է ունենում Շոթա Ռուսթավելու 750-ամյա հոբելյանի կազմակերպման և անցկացման աշխատանքներին: Հոբելյանական հանձնաժողովը գլխավորում էր Ա. Սվանիձեն, Լենինգրադում նրա տեղակալն էր Հ. Օրբելին: Բայց շուտով իրադարձություններն անսպասելի ընթացք ստացան, ուստի հոբելյանի հետ կապված մի շարք հրապարակումներ ձախողվեցին: Եվ, այնուամենայնիվ, Հ. Օրբելին ձգտում էր հատուկ փայլ տալ տոնակատարություններին:

1938 թ. հունվարի 16-ին, ՍՍՀՄ ԳԱ հանդիսավոր նիստում Հ. Օրբելին զեկուցում կարդաց «Ռուսթավելու դարա-

շրջանը» վերնագրով, իսկ Կ. Գ. Դոնդուան խոսեց Շոթա Ռուս-
թավելու և վրաց գրականության մասին: Փետրվարին այդ գե-
կուցումները կրկնվեցին Լենինգրադում, իսկ էրմիտաժում
բացվեց Ռուսթավելու դարաշրջանին նվիրված մեծ ցուցա-
հանդես:

Լրագրերում լույս տեսան Զ. Օրբելու հոդվածները՝ նվիր-
ված Շոթա Ռուսթավելուն, նրա խմբագրությամբ հրատարակ-
վեց «Ընձենավորի» ուսերեն թարգմանությունը (թարգմ.
Պ. Պետրենկո, շարունակեց՝ Կ. Շիճինաձե): Միաժամանակ
հրատարակվեց նաև «Ռուսթավելու դարաշրջանի հուշարձան-
ները» ժողովածուն, որը Զ. Օրբելին էր ստեղծել բառիս բուն
իմաստով: Այդ ժողովածուի առաջաբանը, ներածականը և 7
հոդված ինքն էր գրել, մյուսները՝ նրա մերձավոր աշխատա-
կիցները¹⁵:

Հովսեփ Օրբելին երկար տարիներ կապված էր Անդրկով-
կասի, հատկապես Հայաստանի գիտական հիմնարկություն-
ների հետ: Այստեղ աշխատում էին նրա դեռևս Անիի պեղումնե-
րի շրջանի ընկերները: 1938 թ. Զ. Օրբելին ընտրվում է ՍՍՀՄ ԳԱ
Հայկական ֆիլիալի նախագահության նախագահ (հավանա-
բար նաև այդ կապակցությամբ նա ստիպված եղավ թողնել
ԳԱ Նյութական մշակույթի պատմության ինստիտուտի տնո-
րենի պաշտոնը, որը համատեղության կարգով ստանձնել էր
1937 թ.): Իբրև ֆիլիալի նախագահ Զ. Օրբելին գլխավորեց
«Սասունցի Դավիթ» դյուցազներգության 1000-ամյա հոբել-
յանը: Նախապատրաստական աշխատանքներն ընթանում էին
Նրևանում և Լենինգրադում (էրմիտաժում):

Հայկական այդ հույակապ դյուցազներգությունը (որի
հնագույն շերտերը ծագել են անհիշելի ժամանակներում, իսկ
ընդհանուր առմամբ այն արտացոլում է հայերի պայքարը
արաբական տիրապետության դեմ) մեզ է հասել մի քանի
պատումներով: Առաջին գրառումը 1873 թ. կատարել է հայտ-
նի բանահավաք, բանագետ, երախտաշատ Գարեգին Սրվան-
ձըտյանը: Նրան հաջողվեց գտնել ասացող (Մշո դաշտի գյուղա-
ցի Կրպոն), որն իր հիշողության մեջ պահել էր դյուցազներգու-
թյան կարևորագույն տարբերակներից մեկը: Այդ տարբերակը

հրատարակվեց 1874 թ.՝ Մշո բարբառով: Հետագայում գրի առնվեցին նորանոր տարբերակներ, սակայն գիտական առօրյայի սահմաններից այդ բնագրերը դուրս չեկան: 1902 թ. Հովհաննես Թումանյանը լույս ընծայեց «Սասունցի Դավիթ» հանձարեղ ստեղծագործությունը, և հենց այդ ձևով դյուցազներգությունը տարածվեց ընթերցողների մեջ: Բայց էպոսն իր նախնական վիճակում ծանոթ էր միայն մասնագետներին: Եվ ահա գալիք հոբելյանի կապակցությամբ սկսվեց համահավաք բնագրի պատրաստման աշխատանքը:

Գիտական պատշաճ հող վաղուց էր առաջացել. 1936 թ. Մանուկ Աբեղյանը, որը դեռևս 1886 թ. գրի էր առել պատումներից մեկը և այնուհետև շարունակում էր զբաղվել դյուցազներգությամբ, Կարապետ Մելիք-Օհանջանյանի հետ միասին հրատարակեց 25 պատում՝ «Սասնա ծռեր» վերնագրով: Այդ պատումներից մի քանիսը լույս էին տեսնում առաջին անգամ: Աշխատանքն այդ ուղղությամբ շարունակվում էր, ընայած 1937 թ. Կ. Մելիք-Օհանջանյանն այլևս չէր կարող նրան մասնակցել: Համահավաք բնագրին ձեռնամուխ եղան Մանուկ Աբեղյանը, նրա աշակերտ Արամ Ղանալանյանը և բանաստեղծ-բանասեր Գևորգ Աբովը: Աշխատանքին մասնակցեց նաև Հ. Օրբելին:

Խնդիրը դյուրին չէր: Պատումները տարբերվում են իրենց կազմով, բարբառով (նրանք ասվել են երբեմն միայն մասնագետին հայտնի բարբառներով): Այնուամենայնիվ, դժվարությունները հաջողվեց հաղթահարել: Մասնակիցները վերլնթերցեցին հազարավոր տողեր, մինչև կանգ առան համահավաք բնագրի ընդունելի խմբագրության վրա, որը կազմված էր չորս ճյուղից՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ» և «Փոքր Մհեր»: Կազմված խմբագրությունը օբյեկտիվորեն արտացոլում էր դյուցազներգության հիմնական գաղափարները, նրա առանցքը. և ընդգրկում էր առավել կարևոր միջադեպերը: Բնագիրը հրատարակվեց 1939 թ. Հ. Օրբելու խմբագրությամբ ու նրա առաջաբանով և ընդունվեց որպես գիտական-մշակութային խոշոր նվաճում: Լույս տեսավ նաև ուսուներեն թարգմանությունը (կատարել էին Վ. Վ.

Դերժավինը, Ա. Ս. Կոչետկովը, Կ. Ա. Լիպսկերովը և Ս. Վ. Շերոխինսկին)¹⁶։

Հորեկյանը նշվեց շքեղությանմբ, իսկ քիչ անց՝ Մոսկվայում սկսվեց հայկական արվեստի և գրականության տասնօրյակը, որը խոշոր իրադարձություն էր երկրի մշակութային կյանքում։

Հետագա մեկուկես տարում Հ. Օրբելին կլանված էր Նիզամու և Ալիշեր Նավոյի հորեկյանների նախապատրաստական աշխատանքով, մասնակցում էր ՍՍՀՄ ճարտարապետության ակադեմիայի (ներառյալ անգամ էր ընտրվել 1941 թ. մարտին) գործունեությանը, մտահոգվում էր էրմիտաժում բացվելիք ռուսական բաժնի հարցով։

Բայց ահա՝ սկսվեց Հայրենական պատերազմը։ Հովսեփ Օրբելին տարիքն առած մարդ էր (մտել էր վեցերորդ տասնամյակը), հիշողության մեջ, անշուշտ, տպավորվել էին անառջին աշխարհամարտի և քաղաքացիականի արհավիրքները, ուստի դժվար չէ կռահել, թե ինչպես պիտի նա ընկալեր ֆաշիստական Գերմանիայի հարձակման լուրը։ Նա քաջ գիտակցում էր այն հսկայական պատասխանատվությունը էրմիտաժի հանդեպ, որ ընկած էր իր ուսերին։ Հասարակական պարտքի բարձր գիտակցությունը պատերազմի հենց առաջին ժամերից, երբ որոշում կայացվեց էրմիտաժի անհապաղ էվակուացման մասին, պայմանավորեց նրա վարքագիծը։ Նա գիտեր, որ պատերազմի դեպքում էրմիտաժի արժեքներն փրկության համար միայն սերն ու նվիրվածությունը, որքան էլ դրանք անկեղծ ու անձնագոհ լինեն, բավարար լինել չեն կարող։ Հ. Օրբելու ղլխավորած էրմիտաժի տեղափոխման ծրագրերը մշակված էին՝ նկատի ունենալով ամենաշնչին մանրամասնություններն անգամ, կազմված էին նմուշների ցուցակներ՝ ըստ էվակուացման հերթականության, էրմիտաժը ապահովված էր փաթեթավորման անհրաժեշտ բոլոր պարագաներով։ Հունիսի 30-ին, այն է՝ պատերազմը սկսվելուց 3 օր հետո, առաջին գնացքաշարը շարժվեց դեպի արևելք։ Հովսեփ Օրբելին օր ու գիշեր ղեկավարում էր փաթեթավորման աշխատանքները։ Դրան մասնակցում էին համաշխարհային

անուն ունեցող այլ գիտնականներ ևս, որոնց փորձը և թան-
գարանային հմտությունը անփոխարինելի եղան այդ օրհա-
սական պայմաններում: Հուլիսի կեսերին արևելք ուղարկվեց
նաև երկրորդ գնացքաշարը: Սվերդլովսկում կազմավորվեց
էրմիտաժի մասնաճյուղ, ուր աշխատակիցները Վ. Ֆ. Լևին-
սոն-Լեսինգի ղեկավարությամբ ապահովում էին էրմիտաժի
գանձերի պահպանումը:

Լենինգրադի շատ գիտնականների նման Հովսեփ Օրբե-
լին մնաց քաղաքում: Նրա ղեկավարությամբ կարգավորվեց
չուղարկված իրերի պահպանումը. բացի այդ, պահպանելու և
հնարավորության դեպքում՝ էվակուացնելու համար էրմիտաժ
էին բերվել Կեպլերի և Լոմոնոսովի ձեռագրերը, Ա. Ս. Պուշկի-
նի գրադարանը, Պուլկովո աստղադիտարանի աստղագետների
դիմանկարները, Կրոնի պատմության թանգարանի մի շարք
հավաքածուներ, նյութեր ճարտարապետների միությունից,
արվարձանային թանգարանների իրերը և այլն: Այդ արժեք-
ների մի մասը այնպես էլ մնաց Լենինգրադում, իսկ Գիտու-
թյունների ակադեմիայի հավաքածուների էվակուացման հա-
մար Հ. Օրբելին 1944 թ. պարգևատրվեց Լենինի շքանշանով:

Ձմեռային պալատի ընդարձակ նկուղներում սարքեցին
ումբապաստարաններ, ուր գնդակոծությունների և ուժեղու-
ծությունների ժամանակ պատսպարվում էր մինչև 2000 մարդ:
Թանգարանի աշխատակիցներն իրենց ընտանիքներով տեղա-
փոխվեցին այնտեղ: Շատ գիտնականներ, որոնք պաշարված
քաղաքում հազիվ թե կարողանային տանել կյանքի նեղու-
թյունները, Հ. Օրբելու օգնությամբ թիկունք տեղափոխվեցին:
Փորձության այդ դժվարին տարիներին Հովսեփ Օրբելին շա-
տերին օգնության հասավ. այդ մասին են վկայում նրան հաս-
ցեագրված մի շարք շնորհակալական նամակներ:

Նրանք, ում վիճակված է եղել դիմանալ Լենինգրադի պա-
շարմանը, վկայում են, որ ամենածանրը եղել է 1941 թ. նո-
յեմբերի կեսերից մինչև 1942 թ. հունվարի վերջն ընկած ժա-
մանակը: Ձմեռը ծանր էր, սառնամանիքը հասնում էր մինչև
30°: Էլեկտրաէներգիայի մատակարարումը սահմանափակ-
ված էր, կենտրոնական ջեռուցումը չէր աշխատում, ջրմուղը

առեւ էր, կոյուղին շարքից դուրս եկել: Դեկտեմբերի 10-ին տրամվայները դադարեցին երթեկեկել: Այդուհանդերձ, քաղաքը շարունակում էր ապրել ու պայքարել, չդադարեց նաև գիտական հիմնարկների գործունեությունը: Այդ սխրագործությունը մասնակցեցին նաև կենսագրադոմ մնացած էրմիտաժի աշխատակիցները. աշնանը և ձմռանը էրմիտաժում նշվեց երկու հոբելյան՝ բանաստեղծ Նիզամու 800-ամյակը և ուղբեկական գրականության հիմնադիր Ալիշեր Նավոյի 500-ամյակը:

Հոկտեմբերի 17-ին, պատմում է Բ. Բ. Պիոտրովսկին, էրմիտաժում կայացավ Նիզամուն նվիրված նիստ, որի մասնակիցներից շատերը և երկու զեկուցող եկել էին ուղղակի ռազմաճակատից: Նիստը բացեց Հ. Օրբելին, նրանից հետո հանդես եկավ բանաստեղծ Ն. Ի. Տիխոնովը: Այնուհետև իրենց զեկուցումները կարդացին Ա. Ն. Բուդիրևը («Նիզամին և նրա ժամանակը»), Գ. Վ. Պտիցինը («Նիզամին և համաշխարհային գրականությունը») և Մ. Մ. Դյակոնովը («Նիզամին Արեւիկայի նկարչության մեջ»): Բանաստեղծ Վս. Ռոժդեստովենսկին կարդաց Նիզամուց կատարած իր թարգմանությունները:

Դեկտեմբերի 10-ին կայացավ Ալիշեր Նավոյին նվիրված նիստը: Հ. Օրբելու ներածական խոսքից հետո «Նավոյին և նրա ժամանակը» զեկուցումով հանդես եկավ Ա. Ն. Բուդիրևը, իսկ էրմիտաժի աշխատակից Ն. Ֆ. Լեբեդևը կարդաց Նավոյի քնարերգական բանաստեղծությունների՝ իր թարգմանությունները, որոնք կատարել էր ռմբապատարանների կառուցման և հրշեջ պոստում հերթապահությունների միջև ընկած ժամերին: Օդային տաղնապը մի քանի անգամ ընդհատեց նիստը: Դեկտեմբերի 12-ին, երկրորդ նիստում Բ. Բ. Պիոտրովսկին կարդաց իր զեկուցումը, նվիրված Ալիշեր Նավոյի ստեղծագործություններում առկա հինարևելյան թեմաներին, իսկ Ն. Ֆ. Լեբեդևը՝ հատվածներ «Յոթ մուրալ» պոեմի թարգմանությունից: Օգտագործելով Նավոյի պոեմների սյուժեները, Ն. Մոխր հատկապես այդ օրերի առթիվ զարդանկարեց ճենապակյա մի գավաթ և տուփ, որոնք ցուցադրվեցին նիստերի դահլիճում: Ե՛վ զարդանկարը, և՛ թրքո-

վածքը կատարվել էին էրմիտաժում, դժվարին պայմաններում: «Հաջորդ օրը, — հիշում էր հետագայում Հ. Օրբելին, — մեզ մոտ եկավ իմ ուսուցիչը՝ ակադեմիկոս Ս. Ա. Ժեբելյուզը, իմ ուսուցիչներից միակը, որն այն ժամանակ դեռ կենդանի էր և, շնայած իր ուժասպառությանն ու հյուծվածությանը, եկավ, որպեսզի շնորհակալություն հայտնի էրմիտաժին, ինչպես սասց նա, գիտության այդ տոնը կազմակերպելու համար: Նրա բառերում, նրա այն բոլոր մտքերում, որոնց նա հաղորդակից դարձրեց ինձ, ես մեկ անգամ ես զգացի, թե որքան մեծ է մարդկային հոգու ուժը, այն մարդու հոգու, որն իր ամբողջ կյանքի ընթացքում անշեղորեն ու սրբությամբ կատարել է իր պարտքը՝ գիտնականի, ուսուցչի և քաղաքացու պարտքը: Այն ժամանակ մենք նրա հետ խոսեցինք վերջին անգամ. քսան օր հետո նա վախճանվեց: Մենք շատ խոսեցինք նրա հանգուցյալ բարեկամի և իմ ուսուցչի, որն այլ պայմաններում, բայց նույնպես մինչև կյանքի վերջին օրը իր բոլոր ուժերը տալիս էր ուսուցչի և համալսարանական պրոֆեսորի բարձր պարտքը կատարելուն՝ խոսեցինք ակադեմիկոս Յա. Դ. Սմիռնովի մասին»:

Հ. Օրբելին ամեն կերպ պահում էր իր աշխատակիցների ուժն ու աշխատունակությունը, տոկունորեն կրում բոկադային կյանքի դժվարությունները՝ սովն ու ցուրտը: Մնալով պաշարված քաղաքում, տասնյակ անգամ ելույթներ էր ունենում ռազմաճակատի զինվորների և համաքաղաքացիների առջև:

1942 թ. ապրիլին Հ. Օրբելին գործուղվեց Երևան. նա պետք է տեղում անցներ ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի նախագահի իր պարտականություններին: Առողջությունը բոլորովին քայքայված էր: Երևանում ստիպված եղավ աչքի ծանր վիրահատության ենթարկվել: Հազիվ առողջացած՝ ամբողջությամբ թաղվեց գործերի մեջ:

Հայկական ֆիլիալը* կազմակերպվել էր ՍՍՀՄ ԳՍ նախագահության 1935 թ. մայիսի 25-ի որոշմամբ: Իր գոյության առաջին տարիներին ֆիլիալը բավականին համեստ դեր էր կատարում: 1938 թ., ֆիլիալի նախագահ դառնալով, Հ. Օրբելին սկսեց գործունեություն ծավալել, որպեսզի մասնաճյուղը դառնա իսկական գիտական օջախ: Երևան տեղափոխվելուց հետո նրա հնարավորություններն, իհարկե, լայնացան: Բայց դեռ նախքան այդ Հ. Օրբելու ղեկավարությամբ հաջողվեց լուծել կազմակերպչական մի շարք կարևոր հարցեր, ընդլայնվեց ասպիրանտուրան, ընդ որում երիտասարդ շատ մասնագետներ իրենց ասպիրանտական պատրաստությունը ստանում էին Մոսկվայում և Լենինգրադում: 1941 թ. մասնաճյուղի աշխատանքներին ներգրավվեցին Երևան էվակուացված գիտնականներ:

Ելնելով ռազմական ժամանակի պահանջներից, գիտական պլանների մեջ մտցվեց երկրի պաշտպանության հետ կապված հարցերի հետազոտությունը, հասարակական գիտություններով զբաղվող հաստատություններում, ավելի քան երբևիցե, մշակվում էր հայրենասիրական թեման, սկիզբ դրվեց «Հայաստանի զավակների սխրագործությունները» գիտահանրամատչելի շարքին: Ռուսերեն և հայերեն լեզուներով լույս տեսավ շուրջ 15 գրքույկ: 1942 թ. Հ. Օրբելին կազմակերպեց Հայրենական պատերազմի գիտական կաբինետ, որի աշխատակիցները թարմ հետքերով հավաքում էին զինվորական ստորաբաժանումների հրատարակություններ, նամակներ ռազմաճակատից, օրագրեր, ինքնակենսագրություններ և այլն, որոնք այսօր հնարավորություն են տալիս մանրամասն վերականգնել հայերի դերը պատերազմում:

Մասնաճյուղի գործունեության ընդլայնմամբ ավելի ու ավելի էր հասունանում հանրապետական գիտությունների ակադեմիայի գաղափարը: 1943 թ. նոյեմբերի 10-ին Հայաս-

* Ռուսերեն Арм. ФАН համառոտագրությունը թափանցել էր նաև հայերենի մեջ. այդ տարիների խոսակցական լեզվում մասնաճյուղը անվանվում էր Արմֆան:

տանի ժողովրդական կոմիսարներին սովետը հատուկ որոշում
ընդունեց ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի հիման վրա Նրա-
նում Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի կազմա-
կերպման մասին: Նոյեմբերի 25-ին հաստատվեց ակադեմի-
կոսների առաջին կազմը՝ 23 հոգի, իսկ նոյեմբերի 29-ին կա-
յացաւ նորածնունդ Ակադեմիայի իսկական անդամների ա-
ռաջին ընդհանուր ժողովը: Այդ ժողովում Հովսեփ Օրբելին
(որն, ինչպես ասացինք, 1935 թվականից ՍՍՀՄ ԳԱ իսկական
անդամ էր) ընտրվեց պրեզիդենտ:

Գիտությունների ակադեմիայի հիմնադրմամբ սկիզբ
դրվեց մի շարք գիտությունների զարգացմանը, որոնք մինչ
այդ սաղմնային վիճակում էին: Ընդլայնվեցին աշխատանք-
ները նաև այն բնագավառներում, որոնք վաղեմի ավանդույթ
ունեին՝ պատմություն, բանասիրություն, լեզվաբանություն:
Զուր չէ, որ Ակադեմիայի կանոնադրության մեջ (վերջնական
խմբագրումը պատկանում է Հ. Օրբելուն) ասված է՝ Ակադե-
միան «հատուկ ուշադրություն է դարձնում հայ ժողովրդի
պատմության և կուլտուրայի ուսումնասիրությանը»: Համա-
նման միտք էր արտահայտել նաև ակադեմիկոս ընտրված
Ավետիք Իսահակյանը. «Հայկական ՍՍՀ Գիտությունների ա-
կադեմիայի մշակութապատմական կարևորագույն խնդիրնե-
րից մեկն է, — գրում էր նա «Կոմունիստ» լրագրում, — բարձ-
րացնել հայ ժողովրդի ինքնագիտակցությունը, խորացնել
հայրենասիրությունը, գիտակցական սեր զարգացնել նրա
(ժողովրդի) մեջ դեպի մայրենի լեզուն, գրականությունը և
հավատ՝ իր լուսավոր ապագայի նկատմամբ»:

Ազգային գիտությունների ակադեմիայի ստեղծումը հա-
ջարակալան մեծ նշանակություն ունեցող իրադարձություն
էր*: Այդ գիտակցությամբ համակված՝ Հ. Օրբելին ամբողջու-
թյամբ նվիրվում է նրա կազմակերպմանը: Նորից գրսևորվեց
նրա հիանալի ունակությունը՝ մոբիլիզացնել գործուն ուժեր,

* Որպես կենտրոնական շենք Ակադեմիային հատկացված էր Աբովյան
և Լեւոնտով (այժմ՝ Սայաթ-Նովա) փողոցների անկյունում գտնվող
գլորոցը, որը պատերազմի սկզբին վեր էր ածվել հոսպիտալի:

ստեղծել լիարժեք գիտական կոլեկտիվ: Երևանում նա մնաց մինչև 1944 թ. ամառը, բայց և այդ կարճ ժամանակամիջոցում կարողացավ լիցք տալ մի շարք նոր կամ վերակառուցված ինստիտուտների:

Պրեզիդենտի պաշտոնում Հ. Օրբելին մնաց մինչև 1947 թ., երբ վերջնականապես որոշեց իր ուժերը կենտրոնացնել էրմիտաժում: 1947 թ. հունվարի 16-ին Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը բավարարեց նրա խնդրանքը՝ իրեն պրեզիդենտի պարտականություններից ազատելու մասին, միաժամանակ նշելով նրա անձնական մեծ ավանդը հանրապետության առաջատար գիտական օջախի ստեղծման գործում:

1944 թ. Հ. Օրբելին վերադարձավ Լենինգրադ: Էրմիտաժը սարսափելի վիճակում էր. պատերազմի ժամանակ նրա շենքերի վրա ընկել էր 30 արկ և 2 ավիառումբ, տասնյակ արկեր ու ավիառումբեր պայթել էին շրջակայքում, ջարդվել էր 20.000 քառակուսի մետր լուսամուտների և ցեբեկային լույսի լապտերների: ապակի, բոլորովին ավերվել էին ջեռուցման և ջրմուղի սարքավորումները, տուժել էին մանրահատակները, պատերը, որմնակարներն ու նկարազարդ առաստաղները: Թանգարանին հսկայական վնաս էր հասցվել: Առաջին իսկ հայացքից պարզ էր, որ Էրմիտաժին իր երբեմնի տեսքը վերադարձնելու համար անհրաժեշտ են երկարատև ու բարդ աշխատանքներ: Թանգարանի գլխավոր ճարտարապետ Ա. Վ. Միվկովի հետ միասին Հ. Օրբելին մշակեց Էրմիտաժի վերականգնման ընդհանուր նախագիծը և սկսեց միջոցներ հայթայթել այդ աշխատանքների համար: Իսկ մինչ այդ, իրենք՝ Էրմիտաժի աշխատակիցները, կարգի էին բերում թանգարանը, մաքրում սրահները: փայլեցնում հատակը, լվանում լուսամուտները, վերականգնում Տաղավարային դահլիճի ջահերը: Հենց այդ դահլիճում նոյեմբերի 8-ին բացվեց պաշարման տարիների Լենինգրադում մնացած նմուշների մի փոքր ցուցահանդես: Մի քանի օրում ցուցահանդես այցելեց շուրջ 30.000 մարդ: Միաժամանակ Էրմիտաժը պատրաստվում էր 1941 թ. էվակուացված հուշարձաններն ընդունելուն: Դրանք Լենին-

գրադ ժամանեցին 1945 թ. հոկտեմբերի 10-ին, իսկ նոյեմբերի 7-ին արդեն այցելուների առջև բացվեց էրմիտաժի 69 սրահ: Թանգարանը, առանց որի չի կարելի պատկերացնել Լենինգրադը, սկսեց ապրել իր նախկին բուռն կյանքով:

Այդ տարիներին Հ. Օրբելու գիտական ծառայությունները նորից միջազգային ճանաչում գտան. 1944 թ. նա ընտրվեց Լոնդոնի Հնագիտական ընկերության պատվավոր անդամ, իսկ 1945 թ.՝ Իրանի Գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ:

1944-1945 թթ. Հ. Օրբելին մասնակցում է Լենինգրադի արվարձաններում գտնվող պալատների հետազոտման և դրանց հասցված վնասի չափը սահմանող պետական արտակարգ հանձնաժողովի աշխատանքներին (ներգրավվել էր ա. կարգ. Ե. Վ. Տարլեի առաջարկությամբ): Քաջածանոթ լինելով Լենինգրադին և նրա շրջակայքին, Հ. Օրբելին հանձնաժողովի մյուս անդամների հետ շրջում էր քաղաքի արվարձանները, որոնք, թվում էր, հավետ կորցրել էին իրենց շքեղությունը: Այն իրավիճակը, որ պարզ դարձավ հանձնաժողովին, ցնցեց Հ. Օրբելուն: Եվ պատահական չէ, որ մեծ ուժով ու համոզիչ հնչեց նրա խոսքը, երբ նա պատերազմից հետո որպես վկա սկսեց իր ցուցումները նյուրնբերգի դատավարության նիստում: Նա ցատումնալի ու կրքոտ մեղադրում էր վայրենացած ֆաշիստական զավթիչներին, որոնք սառնասրտորեն գնդակոծել էին էրմիտաժը, պղնձի ձուլել Պետերհոֆի ամենաշքեղ առյուծին պատառոտող Սամսոնի արձանը, Պուշկին քաղաքում ափերել ու թալանել Ռաստրնոլիի հույակապ գործը՝ Եկատերինյան մեծ պալատը...


Հետպատերազմյան տարիներին Հ. Օրբելու գործունեությունը առաջին հերթին կապված է էրմիտաժի վերականգնման հետ: Նրա ղեկավարությամբ մեկը մյուսի հետևից վերանորոգվում էին ցուցասրահներ, պատրաստվում նոր ցուցադրումներ, սեղադրվում ցերեկային լույսի լապտերներ: Առաջվա պես՝ Հ. Օրբելին հանդես էր գալիս գիտական զեկուցումներով, սակայն հետադոտական աշխատանքի համար քիչ ժամանակ էր մնում. էրմիտաժի ընթացիկ գործերը ամբողջու-

Թյամբ կլանում էին նրան: Եվ անսպասելիորեն 1951 թ. ամառնը նա հեռացվեց այն թանդարանից, որի պատերի ներսում անց էր կացրել 31 տարի: Դժվար է պատկերացնել այն ցավն ու վիշտը, վիրավորանքը, որ այդ օրերին կրեց Օրբելին:

Վարչական ծանր պարտականություններից ազատվելով, Հ. Օրբելին վերադարձավ կիսավարտ թողած իր աշխատություններին. վերսկսեց հայ-քրդական հետազոտությունները, ավարտեց Մոկսում կազմված բառաբանների խմբագրությունը, մեծ ուսումնասիրություն գրեց Աղթամարի տաճարի մասին, հանույթով զբաղվեց հայ պատմիչների թարգմանությունը: Ավարտեց նաև հայկական առակների թարգմանությունը: Այդ տարիներին նրա ղեկավարությունամբ ասպիրանտական պատրաստություն ստացան Հայաստանից Լենինգրադ գործուղված մի քանի երիտասարդներ:

1953 թ. Հ. Օրբելին աշխատանքի ներգրավվեց ԳԱ Լեզվաբանության ինստիտուտում և հրատարակման պատրաստեց Մոկսում կատարած գրառումները: Ուշադիր հետևում էր Գառնիի պեղումներին՝ որպես գլխավոր խորհրդատու:

1953 թ. վերջին Հ. Օրբելին գլխավորում էր ՍՍՀՄ ԳՖԱ Արևելագիտության ինստիտուտի գործունեությունն ստուգող հանձնաժողովը և ջանքեր գործադրում, որպեսզի վերականգնվի մեր արևելագիտության նախկին փառքը: Քառասնական թվականների վերջերին և հիսնականների սկզբին սովետական արևելագիտությունը լուրջ դժվարություններ ապրեց. արևելագիտական մի շարք բնագավառներում կրճատվեց հետազոտական գործունեությունը, նվազեց բանասիրական աշխատությունների թիվը, Լենինգրադի համալսարանի Արևելյան ֆակուլտետը զրկվեց մի շարք խոշորագույն դասախոսներից (մի մասը վախճանվեց, մյուսը՝ ստիպված եղավ թողնել դասավանդումը): Համալսարանը դադարեցրեց ասորագետների, եգիպտագետների, եբրայագետների պատրաստումը: 1950 թ. հուլիսին ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտը տեղափոխվեց Մոսկվա, Լենինգրադում մնաց միայն Արևելյան ձեռագրերի բաժինը՝ աշխատակիցների խիստ սահմանափակ կազմով:



2. Օրբելին 1930-ական թվականներին



Հ. Օրբելին ակադեմիկոս Ս. Բ. Վավիլովի հետ

Ահա թե ինչու 1954 թ. հոկտեմբերին Հ. Օրբելին Գիտությունների ակադեմիային ներկայացրեց իր՝ «Նկատառումներ արևելագիտության բնագավառում բանասիրական աշխատանքի վիճակի և խնդիրների վերաբերյալ» զեկուցագիրը: Նա հիշեցնում էր հանրահայտ այն փաստը, որ «XIX դ. երրորդ քառորդի և XX դ. մոտավորապես շորս տասնամյակների ընթացքում ռուսական և սովետական արևելագիտությունը համաշխարհային գիտության մեջ իրավամբ առաջատար դիրք էր գրավում, իր զարգացմանը զուգընթաց ավելի էր ամրապնդում այդ տեղը և արժանի հարգանք ու հեղինակություն վայելում ամբողջ աշխարհում»: Մանրամասն թվարկելով հին, դասական արևելագիտության արժանիքները, Հ. Օրբելին ընդգծում էր, որ այն մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում ոչ միայն անցյալի, այլև ներկայի նկատմամբ, իսկ նրա հիմքը կազմում էր լեզուների և մշակույթի իսկական ճանաչումը: Կոչ անելով վերականգնել նախկինում եղածը, նա ձգտում էր, որ մեզանում պատշաճ տեղ գրավի «այն արևելագիտությունը, որը պայքարի է դուրս գալիս հանուն Արևելքի ժողովուրդների իրական պատմության և հանուն նրանց երջանիկ ապագայի, կատարելապես զինված և՛ մեթոդաբանությամբ, և՛ այդ մեթոդաբանության շնորհիվ՝ նյութական հուշարձանների, հարստագույն գրականությունների և լեզուների լիարժեք գիտությամբ»: «Լեզուները, — հաստատում էր զեկուցագրի հեղինակը, — ոչ միայն գրավոր հուշարձանների ճանաչման միջոց են, այլև ուսումնասիրության առանձին առարկա, մի սքանչելի հայելի, որն արտացոլում է տվյալ ժողովրդի պատմությունն ու մշակույթը»: Հ. Օրբելու ընդհանուր միտքը բացահայտ է. պատմական անցյալը և ներկան հարկավոր է ուսումնասիրել դիմելով բուն սկզբնաղբյուրին, հարկավոր է հավատարիմ մնալ ճշմարտությանը և ոչ թե հետևել կանխակալ կարծիքներին:

Կարճատև դադարից հետո, Հ. Օրբելին վերադարձավ կազմակերպչական բարդ և պատասխանատու աշխատանքի: 1955 թ. նոյեմբերին նա նշանակվեց Լենինգրադի համալսարանի Արևելյան ֆակուլտետի ղեկան: Հիշենք, որ նա եղել էր

այդ ֆակուլտետի և՛ սանը, և՛ դասախոսը: Կարճ ժամանակում ֆակուլտետը վերադարձրեց իր հին փառքը, դարձավ ոչ միայն երիտասարդ մասնագետների հոլակապ դպրոց, այլև արևելագիտության օջախներից մեկը: 1956 թ. Հ. Օրբելին գլխավորեց նաև ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի նորաստեղծ Լենինգրադյան բաժանմունքը: Նորածնունդ լինելով հանդերձ, այդ հաստատությունն օժանդակում էր խորք գնացող ամատներ. դեռևս 1818 թ. Պետերբուրգում, Գիտությունների ակադեմիային առընթեր հիմնվել է Ասիական թանգարանը: Այնուհետև այստեղ են կենտրոնացվել արևելյան բազմալեզու գրչագրերը, դրամները և այլն, այստեղ է ծավալվել ներառյալ ուսումնասիրման աշխատանքը: Ի դեպ, Ասիական թանգարանն է եղել հայագիտական և վրացագիտական առաջին իսկական օջախը Պետերբուրգում՝ շնորհիվ հոլակալոր կոպկասագետ, ակադեմիկոս Մարի Բրոսեի գործունեության: Անգամ այն ժամանակ, երբ հիմք էր դրվել համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետին, մեծ թափ էր ստացել Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքը, Ասիական թանգարանը լիովին պահպանել էր իր նշանակությունը, նրա հարկի տակ գործել են խոշորագույն գիտնականներ: Ասիական թանգարանը շարունակել է իր գործունեությունը նաև հեղափոխությունից հետո, հիմք ծառայել ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի համար, որը կազմավորվել է 1930 թ.: Այդ ինստիտուտը դարձել էր մեր երկրի արևելագիտության գլխավոր կենտրոնը: Բայց, ինչպես ասվեց, 1950 թ. ինստիտուտը փոխադրվեց Մոսկվա՝ նպատակ ունենալով աշխուժացնել աշխատանքները արևելագիտության բնագավառում: Սակայն նոր գրանցումն իրեն չարդարացրեց. ՍՄԿԿ XX համագումարում այդ մասին հատուկ խոսք ասաց Անատոլի Միկոյանը: «Գիտությունների ակադեմիայի ցանցում, — ասաց նա, — հիշելով Տնտեսագիտության ինստիտուտի անբաժանառ գործունեությունը, — կա ևս մեկ ինստիտուտ, որը զբաղվում է Արևելքի հարցերով, բայց նրա կապակցությամբ կարելի է ասել, որ ի՞նչ մեր ժամանակներում ամբողջ Արևելքը դարձնել է, ապա այդ ինստիտուտը նիրհում է ցայսօր»:

ինչպես ասացինք, Հ. Օրբելին վաղուց էր սկսել տագնապ հնչեցնել և ահա՝ հենց նրան էր վիճակված կենինգրադի արեւելեադիտական օջախի վերականգնման ծանր գործը: Արեւելագիտութեան ինստիտուտի կենինգրադյան բաժանմունքը վերականգնացրեց Արեւելյան թանգարանի կառուցվածքը, նրա առանձին ստորաբաժանումները, որոնցից յուրաքանչյուրը դբադվում էր այս կամ այն երկրի թե՛ պատմութեամբ, թե՛ մշակութով: Պահպանվեց անգամ ստորաբաժանումների հին անոնը՝ կաբինետներ: Նախապես կյանքի կոչվեց 5 կաբինետ՝ Արաբական, Հնդկական, Իրանական, Հեռավոր Արեւելքի, Բյուրք-մոնղոլական, շուտով սրանց միացան Մերձավոր Արեւելքի, Հին Արեւելքի, ապա նաև Կովկասյան և Քրդական կաբինետները: Վերջին երկուսի դեկավարն էր ինքը՝ Հ. Օրբելին (նշենք նաև, որ 1959/60 ուսումնական տարում կովկասագիտական առարկաները, ցավոք՝ առժամանակ, վերականգնվեցին նաև համալսարանի Արեւելյան ֆակուլտետում):

Բաժանմունքի հիմնական հարստութիւնն էին կազմում ձեռագրերը՝ շուրջ 40.000 գրչագիր արեւելյան 45 լեզուներով: Դրանց նկարագրութիւնը, ուսումնասիրութիւնն ու հրատարակումը դարձան կենինգրադյան բաժանմունքի կարևորագույն ուղղութիւններից մեկը: Կարճ ժամանակամիջոցում այն վերաճեց արեւելագիտութեան կարևորագույն կենտրոնի: Տարեցտարի ընդլայնվում էր մշակվող հարցերի ընդգրկումը, աճում էր գիտական արտադրանքը: Բաժանմունքում պատրաստված ձեռագրացուցակները համաշխարհային ճանաչում ստացան: Զեռնարկվեց գրչագիր հուշարձանների նմանահանութիւնների հրատարակութիւնների հատուկ շարք, որի շրջնորհիվ գիտական շրջանառութեան մեջ մտան հազվագյուտ ձեռագրեր: Սկսեցին լույս ընծայվել նաև մենագրական առանձին ուսումնասիրութիւններ: Արխիվից հանվեցին և տպագրութեան հանձնվեցին կյանքից հեռացած գիտնականների տասնյակ տարիներ ձեռագիր վիճակում մնացած աշխատութիւններ (հատկապես հիշարժան է Ա. Ն. Նևսկու «Տանգուտյան բանասիրութիւն» աշխատանքը, որը 1962 թ. արժանացավ կենինյան մրցանակի):

Ծրագրելով Լենինգրադյան բաժանմունքի գործունեությանը, նրա վարիչը պիտի նախ և առաջ որոշեր իր ապագա աշխատակիցների կազմը: Հ. Օրբելին երկընտրանքի առաջ էր կանգնած. նա կարող էր բաժանմունքի հարկի տակ համաքել փորձված գիտնականներին, պոկելով նրանց այլ հիմնարկներից, ընդամին հաշտվելով այն իրողության հետ, որ այդպիսիների թիվը սահմանափակ է (վերջին 20 տարվա ընթացքում արևելագիտության մշակների շարքերը նոսրացել էին): Բայց կար մի ուրիշ ճանապարհ ևս՝ աշխատանքի հրավիրել համալսարաններն ու ասպիրանտուրան վերջերս ավարտած երիտասարդների, թեպետ նրանք հետադոտական աշխատանքին փորձ չունեին և միայն ապագան կարող էր ցույց տալ՝ որքան են համապատասխանում ընտրած ասպարեզին: Հ. Օրբելին նախընտրեց երկրորդ ուղին և չսխալվեց. 60-70-ական թվականներին բաժանմունքի աշխատակիցները ապացույցեցին, որ հանգուցյալ ղեկավարի ընտրությանը ճիշտ է եղել: Աշխատելով վաստակավոր հետադոտողների հետ կողք կողքի՝ նրանք ծրագրապես կապվեցին իրենց աչքի առաջ ծնունդ առած գիտական օջախին, մյուսների հետ բաժանեցին գործի ընդհանուր պատասխանատվությունը: Ապագան հաստատեց, որ կարճ ժամանակում Հ. Օրբելին կարողացավ ստեղծել գիտական իսկական կուլեկտիվ:

Կյանքի վերջին տարիներին անգամ Հովսեփ Օրբելին չէր հոռանդում ու աշխատունակությունը: Նրա աշխատանքային օրը շատ լարված էր. մասնակցում էր տասնյակ գիտական և գիտակազմակերպչական նիստերի, հոգ տանում Արևելյան ֆակուլտետի և Լենինգրադյան բաժանմունքի համար հաստիքային նոր միավորներ ձևոր բերելու մասին, զբաղվում էր աշխատակիցների հրատարակչական գործերով, խորհուրդներ տալիս բազմաթիվ և բազմազան հարցերով իրեն դիմող անձանց, խմբագրում արևելագիտական աշխատություններ, ընդգիմախոսում դիսերտացիաներ, հանդես գալիս գիտական զեկուցումներով, ընդունում արտասահմանյան գիտնականներին և հասարակական գործիչների, մշակում Լենինգրադում Արևել-

յան դպրութեան թանգարանի ծրագիրը, միջամտում բնակարանային դժվարութիւնների լուծմանը և այլն:

Գիտական հասարակայնութեան երախտագիտութիւնը բազմաշխատ վաստակավորին իր վառ արտահայտութիւնը գտավ Հ. Օրբելու հանդիսավոր մեծարման ժամանակ՝ 1957 թ. մարտի 20-ին, նրա ծննդեան յոթանասունամյակի օրը (այդ օրը նա պարգևատրվեց Լենինի Երկրորդ շքանշանով):

1960 թ. որպէս փոխնախագահ Հ. Օրբելին մասնակցում էր արևելագետների XXV միջազգային համաժողովին (Մոսկվա, 1960 թ., օգոստոսի 9-17): Նա կովկասագիտութեան մասնաճյուղի ղեկավարն էր, մի քանի անգամ ելույթ ունեցավ մտքերի փոխանակութեան ժամանակ: Նայելով նրա եռանդուն շարժումներին, լսելով նրա ուժեղ ու կրքոտ ձայնը, երբեք չէին ասի, որ Հովսեփ Օրբելին հրաժեշտ էր տալիս գիտական աշխարհին, որ նրա կյանքի ամիսները հաշվված են:

Նա վախճանվեց 1961 թ. փետրվարի 2-ին: Մինչև իր կյանքի վերջին րոպեները շրջապատված էր աշխատակիցներով և բարեկամներով: Մարմինը հողին հանձնվեց Լենինգրադի Բոգոսլովսկոյե գերեզմանատանը, իր եղբոր՝ Լևոն Օրբելու և վերջինիս դստեր կողքին: Տապանաքարը՝ հայկական վարդազույն տուֆից է՝ Կ. Վ. Տրեերի խնդրանքով Հայաստանի կառավարութեան կողմից ուղարկված, վրան գրված է հայերեն ու ռուսերեն՝ Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի. 1887-1961: Գերեզմանի վրա գրված է Լևոն Լազարեի քանդակած կիսանդրին:

Բ. ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հովսեփ Օրբելու սկզբնական շրջանի աշխատությունները շեշտակի տարբերվում են հաջորդ՝ 20-50-ական թվականներին գրված գործերից: Առաջին աշխատություններում, ինչպես արդեն ասվեց, գերակշռում է վերլուծականը, հեղինակը խուսափում է լայն ընդհանրացումներից: Նա դիմում է առանձին փաստերի, ձգտելով գտնել նրանց տեղը ընդհանուրի մեջ, պարզել հնարավոր աղբյուրները մյուս երևույթների հետ: Նրա տեսադաշտում եղած փաստերը բաղմազան են, պատկանում են մշակութային տարբեր ոլորտների, բայց բոլոր պարագաներում հանդես են գալիս որպես հետազոտության անհրաժեշտ ելակետեր: Այդպիսի մոտեցումը հատուկ է եղել Հ. Օրբելու երիտասարդ տարիների արևելագիտությանը, և հետազոտողը հավատարիմ է մնացել իր ուսուցիչների ավանդներին:

20-ական թվականներից նա ձգտում է ավելի պարզել ընդհանուրը, ամփոփել հայտնի փաստերը, ներկայացնել դարաշրջանի, նրա մշակույթի համապատկերը:

Գիտության պատմության մեջ Հ. Օրբելին մտել է գերազանցապես իբրև հայագետ, թեև նա ունի կարևոր աշխատություններ նաև այլ բնագավառներում: Հայագիտությունից ոչ պակաս արժեքավոր են նրա քրդագիտական, իրանագիտական, վրացագիտական աշխատությունները: Նա հանդես է եկել որպես պատմաբան, բանասեր, հնագետ, լեզվաբան, բանագետ, արվեստագետ: Պետք է ասել, սակայն, որ նրա ուսումնասիրությունների բաժանումը ըստ բնագավառների ինչ-որ չափով պայմանական է, ուստի հետագա շարադրանքում մենք կհետևենք գլխավորապես ժամանակագրական կարգին:


Հ. Օրբելու անդրանիկ աշխատությունը՝ «Իդալիական արձանագրության Simitose ընթերցումը և ΣΕΜΙΑΔΑΙΣ „Simila, Similago“ վերնագրով, լույս տեսավ 1908 թ. «Ժողովրդական լուսավորության մինիստրության հանդեսում»¹: Դա մի պատկանելի պարբերական էր, որի էջերում իրենց աշխատություններն էին տպագրում խոշորագույն գիտնականներ: Հոգովածը նվիրված է մ. թ. ա. 391 թ. հունարեն արձանագրության վիճելի մի արտահայտության. հեղինակը ենթադրում է, որ արձանագրության մեջ խոսքը σίμιδος ἀχροῦρα-ի մասին է, այսինքն՝ ինչ-որ դաշտի, որտեղ ցանված են հացահատիկային բույսեր: Նա ձգտում է ապացուցել, որ հունարեն σίμις գոյականը (որից ծագել է σερμιδῶνις ածականը) առաջացել է վրացերեն սոմոճո—simindi հնագույն ձևից: Ժամանակակից վրացերենում սոմոճո-ն եզրպատացորենն է, սակայն հնում այդ բառը կարող էր վերաբերել ցորենին և մյուս հացազգիներին:

Ժամանակակից գիտության տեսանկյունից Հ. Օրբելու ստուգաբանությունը չի կարող անվիճելի ճանաչվել: Սակայն հոգովածում ակնառու է երիտասարդ ուսանողի հմտությունը, նա համարձակորեն օգտվում է հին հունարենի, հին վրացերենի, հին հայերենի, ասորերենի, արաբերենի, սանսկրիտի տվյալներից: Հետազոտությունը նվիրելով մասնավոր հարցի, նա միևնույն արմատի արտացոլումներին վերաբերող հսկայական նյութ էր հավաքել: Սակայն ինքը հեղինակը հետագայում խստությամբ է արտահայտվել իր այդ աշխատության մասին. «Երբ 19 տարեկան էի, ես հաջող զեկուցում կարդացի, որն այնուհետև տպագրվեց Ժողովրդական լուսավորության մինիստրության հանդեսում: Ինձ գովեցին, ես ոգևորվեցի և հոգովածի «պակասները լրացնելով», օրինակներ ավելացրի լեզուներից, որոնք ես այն ժամանակ կամ վատ գիտեի (արաբերեն), կամ բոլորովին չգիտեի (սանսկրիտ): Ցանկություն էր՝ ցույց տալ իմ ողջ բազմահմտությունը: Արդյունքն այն եղավ, որ ես այնպիսի ճիպոտահարության ենթարկվեցի, որք երբեք չեմ մոռանա: Այդ օրվանից ես հաստատապես յուրացրի, որ լեզվաբանական հետազոտության մեջ որպես օրինակ

իրավունք ունեն բառեր բերել միայն այն բնագրերից, որոնք կարդացել են, և ոչ թե կորզել այդ բառերը բառարաններից»²:

Նույն այդ պարբերականում լույս տեսավ Հ. Օրբելու նաև երկրորդ հոդվածը, որտեղ դասական բանասիրության հարցը նույնպես կապված էր կովկասյան լեզուների տվյալների հետ³: Հենվելով անտիկ հեղինակների վրա, Հ. Օրբելին անպացուցում էր, որ Դիոսկուրիաս քաղաքի ավերակները հարկավոր է որոնել Կողոր գետից 23-25 վերստ հեռավորության վրա, Պիտիոնտի (Պիցունդայի) ուղղությամբ: Այստեղ հոսում է մի գետակ, որի անուններից մեկը հնչում է Իսկուրիա: Նա ծով է թափվում Իսագուր (Իսկուրգե) Իսկուրիա անունը կրող հրաբանդանի մոտ: Հեղինակը մերժում է այն տեսակետը, իբր հունարեն Դիոսկուրիաս տեղանունը առաջացել է տեղական Իսկուրիայից, ավելի ճիշտ է համարում հակառակ ենթադրությունը: Մյուս կողմից՝ Դիոսկուրիաս անվանումը կապված է առասպելական արգոնավորդների՝ դիոսկուրներ Կաստորի և Պոլիդեկի հետ, և պատահական չէ, որ հույները այդպես են անվանել այդ վայրը: Իսկ վերլուծելով Սուխում քաղաքի ներկա անունը, Հ. Օրբելին հանգում է այն եզրակացության, որ տվյալ տեղանունը ծագում է Լեչխում՝ «Երկվորյակների երկիր» անունից, որն իր հերթին առաջացել է „Dgum, Dgum“ (Երկվորյակներ) բառից: Այդ հանգամանքն է ստիպել հույներին քաղաքն անվանել Դիոսկուրիաս, քանի որ, նրանց պատկերացմամբ՝ արգոնավորդների ուղին սնցնում էր Կողքիսով, և տեղական անունը հիշատակ էր պահպանել հենց դիոսկուրների յայտեղ լինելու մասին: Հոդվածում ցույց է տրված նաև, որ Սև ծովի արևելյան մասում բնակվող ցեղերից մեկի անունը՝ *HNOXOI (կառապաններ) պետք է շտկել՝ դարձնելով* *HNOXOI, քանի որ իրապես դա սլանական ցեղանուններից մեկն է:

Հայկական մակագրությամբ մուգ կանաչավուն նեֆրիտից պատրաստած երախակալ... Ինչ խնդիր պետք է դնել իր առաջ նրա հետ ծանոթացող հետազոտողը. նկարագրել ճշտությամբ, գտնել նրա տեղը նման հուշարձանների շարքում, վերծանելով մակագրությունը՝ որոշել նրա տիրոջ ա-



Հ. Օրբելու մահարձանը

ներսնը: Հենց այդպիսի աշխատանք կատարեց Հ. Օրբելին, երբ նրա ուշադրությունը գրավեց նախկին Կովկասյան թանգարանում պահվող այդ նրբագեղ առարկան: Ուսումնասիրությունն արդյունքները նա լույս ընծայեց առանձին հոդվածով: Երախակալի արձանագրությունը կցագիր է, Հ. Օրբելու ընթերցանությամբ՝ ՀԱՍԱՆ ԶԱԼԱԼ ԻՇԽԱՆ ԽԱԶՆՈ[3]: Այդ իշխանը հայտնի դեմք է, ապրել է XIII դարում, իսկ նրա դաշույնի հետազոտությունը թույլ է տալիս առաջ քաշել մի շարք հետաքրքիր պատմամշակութային հարցեր: Հոդվածը գրված է աշխարհի հմտություններ, ասես հեղինակը երկար ժամանակ զբաղվել է նյութական մշակույթով, կիրառական արվեստով, մինչդեռ դա Հ. Օրբելու առաջին հոդվածն էր՝ նվիրված նյութական մշակույթի առարկային: Եվ ահա՝ այստեղ զգացվում է այն իսկական սերը դեպի հին մշակույթի հուշարձանները, որը Հ. Օրբելին պահպանեց իր սրտում մինչև կյանքի վերջը:

Հրապտարակված հոդվածը ինքնուրույն արժեք էր ներկայացնում, հեղինակը, սակայն խնդիրն ավարտված չէր համարում. նա հրատարակեց նաև շարունակությունը՝ այս անգամ ընթերցողին ներկայացնելով դաշույնի տիրոջ կերպարը: Մանրագնին աշխատանքի շնորհիվ նա ի մի բերեց պատմիչների տեղեկությունները, ձեռագրերի հիշատակարանների և վիճադիր արձանագրությունների տվյալները, որոնք վերաբերում են հաչենի տեր Հասան Զալալին (մահ. 1261 թ.): Մանգուխանի օրոք Հասան Զալալը հինգ տարի մնաց Ոսկե Հորդանում և այդ ժամանակ էլ որպես նվեր ստացավ նեֆրիտե երախակալ ունեցող դաշույնը: Հ. Օրբելու հոդվածը ոչ միայն միջնադարյան հայ տիրակալի կենսագրությունն է, այլև հաչենի մոնղոլական տիրապետության շրջանի քաղաքական կյանքի ու կենցաղի ընդհանուր պատկերը:

Ինչպես նախորդ գլխում ասվեց, 1909 թ. Հ. Օրբելին գիտական մի ճանապարհորդություն ձեռնարկեց դեպի Խաչեն, ծանոթացավ այնտեղ եղած հնություններին, ուսումնասիրեց 13 խաչքար, որոնց վրա պահպանվել էին բարձրաքանդակ կենցաղային տեսարաններ: Այդ նյութը գրվեց հրատարակված

Հողվածի հիմքում⁶: «Համարյա բոլոր այդ բարձրաքանդակները, — գրում է Հ. Օրբելին, — պատկերում են զինված հեծյալների՝ միայնակ կամ մարդկային այլ կերպարների հետ կապակցված: Հեծյալների մեծամասնությունը, բացառությամբ մեկի, զինվորներ են, և նրանց պատկերումը առավել հետաքրքիր է այնու, որ ուղղակի կյանքից վերցրած, վաղ մոնղոլական դարաշրջանի հայ զինվորների համարյա միակ վերարտադրությունն է... Այդ բարձրաքանդակների արվեստը ծայրաստիճան կոպիտ է, և գեղարվեստական տեսակետից դրանք ոչ մի հետաքրքրություն չեն ներկայացնում, դրանք կարևոր են իրենց բովանդակությամբ»⁷: Հողվածում հրապարակված են նաև քարերի վրա եղած արձանագրությունները:

Շուտով սկսեցին լույս տեսնել նաև Անիին և նրա հրեություններին նվիրված աշխատություններ: 1911 թ. Ն. Մառի հիմնադրած «Անույ շարքում» լույս տեսավ Հ. Օրբելու կազմած Անիի ուղեցույցը⁸: Այն մատչելի ձևով հաղորդում էր հնություններին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ, հանձնարարում այցելության նախընտրելի ուղերթներ: Գիրքը բովանդակում է Անիի հուշարձանների ճշգրիտ գիտական նկարագիրը: Ուղեցույցի հեղինակը համարձակորեն արտահայտում է իր սեփական կարծիքը, ծանոթացնում ընթերցողին իր անձնական հետազոտությունների հետ: Դա, եթե կարելի է այսպես արտահայտվել, Անիի գիտական ուղեցույց է: Աշխատանքին կցված է քարտեզագիր Ֆ. Կ. Մոսիևիչի կազմած ավերակ քաղաքի ընդհանուր հատակագիծը: Օգտվելով այդ հատակագծից, կարելի է հեշտությամբ որոշել հուշարձանների տեղադրությունը:

Գիտական առավել մեծ արժեք ունի Հ. Օրբելու կազմած հնագրարանի ցուցանմուշների նկարագրությունը⁹: Ներածականում համառոտակի շարադրում է 1892 թվականից մինչև 1909 թ. կատարված պեղումների պատմությունը, նշում առկա մատենագիտությունը: Այս աշխատության հեղինակը պահվող առարկաների հոյակապ գիտակ է, կարողանում է հակիրճ և ստույգ նկարագրության համար գտնել համապատասխան բառեր, շատ ղեպերում ինքնուրույն կերպով է ի-

մաստավորում դրանք: Այսպէս, վարպետորեն է նկարագրված Գագիկ Ա-ի արձանը, որը հայտնաբերվել է 1906 թ. (էջ 1-5), արձանի ձեռքերին գտնվող կլոր տաճարի մանրակերտը (էջ 5-6): Մանուկ աղջկա տապանին և նրա մեջ եղած 5-6 տարեկան իշխանազարմի հանդերձին նվիրված էջերը (էջ 33-39) փաստորեն մի փոքր ակնարկ են՝ Անիի ունեւոր դասակարգի հագուստ-կապուստի մասին: Հ. Օրբելին մանրամասն նկարագրում է Մայր տաճարի իր իսկ ձեռքով վերականգնված պղնձյա ջահը (էջ 39-43): Շատ հետաքրքիր է այսպես կոչված «սնդկանոթների» նկարագրութիւնը (էջ 73-74): Այդպիսի ամաններ մեծ քանակութեամբ հայտնաբերվել են Փոքր և Միջին Ասիայում: Նրանց նշանակութիւնը սնդիկ պահել կամ տեղափոխելն է: Այդ պարզվեց միայն այն ժամանակ, երբ հայտնվեց մի ամբողջական աման՝ սնդիկի հետքերով: Իր «Անույ աւերակները» աշխատութեան մեջ Հ. Օրբելին հետևյալ ձևով է նկարագրում այդ առարկաները. «Սովորական ամանեղենից պետք է տարբերել հատուկ, սովորաբար ձվաձև ամանները (XI-XIV դդ.)՝ շատ նեղ բերանով և հաստ պատերով, ծածկված տարատեսակ, մանր ու ցայտուն զարդանկարներով: Ամենահավանականն այն է, որ դրանք արդուզարդի սրվակներ են, որոնք հանդիպում են Առաջավոր Ասիայի գրեթե բոլոր երկրներում, ինչպես նաև Թուրքեստանում: 1910 թ. պեղումները տվեցին այդպիսի ամանների շտեմնված մեծ քանակ, ընդամենը 14 ամբողջական և 250 բեկոր: Այժմ այդ ամանների՝ Անիի հավաքածուն (24 ամբողջական և 600 բեկորներ) ամենահարուստներից մեկն է և հիանալի նյութ է տալիս հետազոտելու այդ ինքնատիպ առարկաների նշանակութիւնը, ինչպես նաև արտադրութեան տեղն ու եղանակը: Անվիճելի է, որ դրանք պատրաստված են Անիում, թեև հիմք չկա մտածելու, թե այդ ամանները ծագում են բացառապես Անիից»:

Գտնված իրերը խթան հանդիսացան, որպեսզի Հ. Օրբելին գրի մի հատուկ հետազոտութիւն սնդկամանների, նրանց պատրաստման եղանակի վերաբերյալ՝ մի աշխատութիւն, որը ցայսօր անտիպ է: Հետագայում, բաղադրելով Անիի և Դվինի «գնդակոնաձև անոթները», հաշվի առնելով հարցին

նվիրված բազմազան աշխատությունները, Հ. Օրբելու աշակերտուհի Հ. Զանփուլադյանը պարզեց, որ դրանք ծառայել են տարբեր յուղեր, դեղեր, անուշահոտ նյութեր և այլ արժեքավոր հեղուկներ պահելու և տեղափոխելու համար:

Հովսեփ Օրբելու կազմած ուղեցույցն ու թանգարանային նմուշների նկարագրությունը արդեն լույս ընծայման ժամանակ գիտական մեծ ներդրում են եղել, իսկ հետագա տարիներին նրանց նշանակությունը առանձնապես աճեց: 1917 թ. հետո Անիի պեղումներն այլևս չվերսկսվեցին: Թուրք զինվորները ավերեցին հնադարանը: Պեղումների արխիվը ժամանակավոր կառավարության օրոք Պետրոգրադից ուղարկվեց Թիֆլիս, սակայն ճանապարհին կործանվեց-չքացավ: Տարիներ անց Հ. Օրբելին դառնությամբ գրեց այդ մասին. «Կովկասյան ռազմաճակատի թիկունքում թափառող հրոսակների կողմից կատարած Անիի հնադարանի և Անիի գիտական օջախի ավերումը, Անիի հավաքածուների և արխիվային նյութերի անշնորհք էվակուացումը, պատասխանատու անձի անօրինակ թեթևամտությունը, որի պատճառով վագոնները թողնվեցին բախտի քմահաճույթին, երբ 1917 թ. հոկտեմբերի վերջին Պետրոգրադից Կովկաս, անժամանակ ստեղծված Կովկասյան ինստիտուտ էին ուղարկվում արխիվային նյութեր, լուսանկարներ, գծագրեր և այլ փաստաթղթեր՝ հանգեցրեց նրան, որ Մառի ու նրա զպրոցի կողմից թե կուտակված և թե ստեղծված գիտական հարստության զգալի մասը ոչնչացավ: Անվնաս մնացին միայն պատառիկներ, փրկվեցին այն թերթիկները, որոնցից տարիներ շարունակ օգտվում էր Մառը, կարդալով իր միշտ նոր ձեռք խորացված հրապարակային դասախոսությունները: Երևանում անվնաս մնաց Անիի հնագիտական հավաքածուների այն շնչին մասը, որը դուրս էր բերվել բառիս բուն իմաստով հեացանների կրակոցի տակ»¹⁰: Այդ իսկ պատճառով Ն. Մառի հաշվետվությունների և նրա հայտնի «Անի»¹¹ գրքի հետ միասին Հ. Օրբելու ստույգ նկարագրությունները ինչ-որ չափով սկզբնաղբյուրի նշանակություն են ձեռք բերում, թեև չեն կարող յոբեկ կերպ լրացնել այն բացը,

որն առաջացել է անգին հուշարձանների կորստով և կործանմամբ:

Ավարտելով ուղեցույցը և հնադարանի ցուցակը, Հ. Օրբելին ձեռնամուխ եղավ «Անույ աւերակները» հանրամատչելի ակնարկին¹²: Անիի քաղաքական պատմությունից հետո Հ. Օրբելին տալիս է ավերակ քաղաքի և նրա մոտակայքում գտնվող հուշարձանների, հնադարանի ցուցանմուշների նկարագրությունը և ավարտում ակնարկը Մառի խոսքերով. «Կոնկասի պարծանքը այն զարդերն ու գանձերն են, որոնցով օժտել է նրան բնությունը: Դրանցից լավագույնների հետ համահավասար Կովկասը կարող է հպարտանալ ի վերուստ տրված մշակութային մի այլ պարգևով՝ Անիի ավերակներով, իր հնագիտական պսակի այդ խոշորագույն մարգարտով»:

Դարասկզբին հրատարակված ակնարկը այժմ ևս կարող է ծառայել որպես Անիի պատմության, նրա հուշարձանների ծանոթության հիանալի ներածական:

1908 թ. Սլոբոդսկ (նախկին Վյատկայի նահանգ) քաղաքի զանգերի գործարանի տիրուհին հնագիտական հանձնաժողովին ուղարկեց Փոթիից ստացված մի զանգի լուսանկար (ներկայումս այդ զանգն էրմիտաժում է): Հ. Օրբելին ձեռնամուխ եղավ դրա ուսումնասիրությանը, կենտրոնանալով գերազանցապես խաչի վրա: «Այդ ասպարեզում, — հայտնում էր նա իր տպագրված աշխատանքում¹³, — ուսումնասիրողի տրամադրության տակ կա համեմատական շատ հարուստ նյութ՝ խաչերի, ավելի շուտ խաչքարերի, որոնք ցրված են Հայաստանով մեկ, քանակը պարզապես անհնարին է հաշվել: Բոլոր այդ խաչերը մի բնույթի են, և այդ հանգամանքը հնարավորություն է տալիս վստահությամբ ճանաչելու նրանց հայկական ծագումը»:

Ուշագրությունը քննելով խաչերի ձևերի զարգացումը, հեղինակը եկավ այն եզրակացության, որ «զանգը ավելի սերտորեն կապված է Անիի և նրա շրջակայքի հուշարձանների հետ, եթե միայն դա չի բացատրվում նրանով, որ այդ քաղաքի հնությունների մասին մենք համեմատաբար լավատեղյակ ենք (Անին միակն է Հայաստանում, որ ենթարկվում է սիստե-

մատիկ ուսումնասիրության) ... Եթե զանգը իրոք ձուլվել է Անիի մշակութային ազդեցության ոլորտում՝ մի բան, որ ավելի քան հավանական է, ապա նրա պատրաստման ժամանակը առանց կասկածի կարելի է վերագրել XII—XIII դդ.»¹⁴:

Այն տարիներին, երբ Հ. Օրբելին զբաղվում էր Անիի հուշարձանների ուսումնասիրությամբ, Ն. Մառից և Ս. Ա. Ժեբելյովից ստացավ շոյիչ առաջարկ՝ Բրոկհաուզի և Եֆրոնի հոշակավոր հանրագիտարանի համար հայկական արվեստի մասին ներկայացնել մի հոդված (հայոց լեզվին, գրականությանը, պատմությանը նվիրված հոդվածը հեղինակել էր Ն. Ադոնցը):

Հոդվածը¹⁵ գրելիս Հ. Օրբելին մասնագիտական գրականությունից բացի օգտվում էր հուշարձանների իր անմիջական իմացությունից և առաջարկում ճարտարապետության, քանդակագործության, զարդաքանդակի, որմնանկարչության և մանրանկարչության զարգացման իր սեփական տեսակետը (վերջին բաժինը, ճիշտ է, սեղմ էր ստացվել, քանի որ հայկական մանրանկարների ուսումնասիրության ուղղությամբ առաջին քայլերն էին արվում): Շատ հետաքրքիր են հոդվածի տեսական դրույթները. «Քրիստոնյա Հայաստանի արվեստը դիտվում է ազգակից վրաստանի արվեստի հետ շաղկապված, մինչդեռ այդ խիստ մերձեցումը բացատրվում է որոշ հուշարձանների տեղագրության անգիտությամբ. այստեղից է բխում վրացական հուշարձանների վերագրումը Հայաստանին և հակառակը» (սյուն. 664): Հեղինակը ցույց է տալիս, թե որքան ինքնատիպ է հայկական արվեստը, կտրականապես հրաժարվում է այն դիտել որպես բյուզանդական արվեստի ճյուղավորում: «Դեռ ավելին,—գրում է նա,—իրակվում են փաստեր, որոնք ցույց են տալիս, որ բուն հայկական արվեստը հանդիսացել է այն հոսանքների աղբյուրներից մեկը, որոնք յուրացվել են բյուզանդականի կողմից և արմատ ձգել նրա մեջ» (սյուն. 665): Ընդամին, հասկանալի է, գիտնականը ամենևին չի բացառում այն ազդեցությունները, որոնք կրել է հայկական մշակույթը հարևան մշակույթներից: Նա բացորոշ զուգահեռ է անցկացնում հայոց ճարտարապետության և գրա-

կանության միջև և երկու դեպքում էլ նկատում ասորական մշակույթի ազդեցություն, որը հետագայում, դավանական իրադրությունների հետևանքով, դուրս է մղվել հունականի ազդեցությամբ:

Հետագա տարիներին նույն այդ հանրագիտարանում լույս տեսան Հ. Օրբելու ևս երկու հոդված՝ նվիրված վրացական և մուսուլմանական արվեստներին: Խոսելով վրացական արվեստի մասին, Հ. Օրբելին ընդգծում էր, որ զարգանալով մեծ տարածության վրա, տեղագրական տարբեր պայմաններում, ենթարկվելով էթնիկական պարագաների, այն, թեև միավորված է ընդհանուր սկզբունքներով, բայց, այնուամենայնիվ, հանդես է գալիս բավականին բազմազան ձևերով և բաժանվում հատուկ խմբերի: Վրաստանի քրիստոնյա արվեստը սերտորեն կապված է հայկականի հետ, բայց, դիտելով դրանք մեկ ընդհանուր կապի մեջ, պետք է խուսափել դրանք իրար խառնելուց: Հուշարձանների հատուկ խումբ են կազմում հայ և վրացի խառը բնակչություն ունեցող տարածքում ստեղծվածները, «որոնք իրենց մեջ միակցում են և՛ հայկական, և՛ վրացական գեղարվեստական ստեղծագործությանը հատուկ տարրեր: Այստեղ հատկապես ուժեղ է զգացվում դավանական հոսանքների ազդեցությունը» (հ. 15, սյուն. 126):

Մուսուլմանական արվեստին նվիրված հոդվածը զգալի չափով զրկած է գրականության և հրապարակված նյութերի հիման վրա, սակայն նրանում ևս առկա է հեղինակի ինքնուրույն մոտեցումը: Շատ կարևոր են, օրինակ, նրա դրույթներն այն մասին, որ սելջուկյան գմբեթակերպ դամբարանները սերում են հայկական և վրացական տաճարների գմբեթներից: Անցած տասնամյակների ընթացքում գիտությունն, իհարկե, հարստացել է բազմաթիվ նոր տվյալներով, որոշ պատկերացումներ վերանայվել են, մինչդեռ «սելջուկյան» կոչված ճարտարվեստի վրա հայկականի ազդեցության դրույթը հաստատում գտավ Ա. Լ. Յակոբսոնի աշխատություններում: Հետագայում ինքը՝ Հ. Օրբելին առաջարկեց «մուսուլմանական արվեստի» նոր իմաստավորում: Այնուամենայնիվ, այդ հոդված-

ները, որոնք գրվել են դարասկզբին, տակավին չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը:

Ինչպես ասվեց, 1911-1912 թթ. Հ. Օրբելին հնարավորություն ունեցավ երկար ժամանակ Մոկսում հավաքել տեղի բանահյուսության նմուշներ, կազմել երկու բարբառագիտական բառարան՝ հայերեն և քրդերեն: Այդ աշխատությունից հրատարակվել են միայն բնագրերի ռուսերեն թարգմանությունները և ազգագրական ակնարկը¹⁵, մինչդեռ նրա ծավալուն կորիզը կազմում են հենց բառարանները և հայերեն բնագրերը: Ասվեց, որ Հ. Օրբելին գրանցել է Մոկսի մշակութային կյանքը (բառիս լայն իմաստով)՝ նրա կործանումից մի քանի տարի առաջ, և աշխատությունը մեծ արժեք է ներկայացնում, թեկուզ որպես վերջին վկայություն: Բայց նկատի առնենք, որ վկայությունը կաղմված է գիտության խստագույն պահանջների համաձայն. Հ. Օրբելին կարողացել է գրանցել բառապաշարը, տալ բառերի տեղական իմաստաբանությունը, Մոկսի երկու բարբառների՝ հայերենի և քրդերենի հնչյունաբանությունը: Այժմ հայերենի կամ քրդերենի հնչյունաբանությամբ զբաղվող ոչ մի հնչյունաբան չի կարող անցնել այդ աշխատության կողքով: Բառերը կամ բնագրերը գրանցելիս Հ. Օրբելին կիրառել է իր իսկ կողմից ստեղծված հնչյունադարձության հատուկ նշաններ, և դրանց շնորհիվ մենք այժմ ի վիճակի ենք լսելու մոկսեցու լեզուն: Իսկ գրի առնված բանահյուսության նմուշները զգալիորեն հարստացնում են մեր գիտելիքները ժողովրդի բանավոր ստեղծագործության մասին: Դա, իրոք որ վիթխարի աշխատանք է, այն էլ կատարված երեկվա ուսանողի կողմից:

Հայ բանահյուսության հարցերին Հ. Օրբելին վերադառնում է 30-ական թվականների վերջերին, երբ նրա անմիջական մասնակցությամբ պատրաստվում է «Սասունցի Դավիթ» դյուցազնների համահավաք բնագիրը, երբ նա խմբագրում է ռուսերեն թարգմանությունը և մի մեծ ուսումնասիրություն գրում որպես ռուսերեն հրատարակության նախաբան¹⁷: Այստեղ նա ցույց է տալիս, որ «Սասնա ծռերի» կորիզը անհամեմատ ավելի հին ծագում ունի, նրա առանձին կողմերը հեռա-

նում են մեզանից ոչ թե մեկ, այլ մի քանի հազարամյակներ: Դյուցազներգությունը շատ բարդ զարգացում է ապրել. «Դյուցազներգության հիմնական գծի զարգացումը՝ բնության ուժերի՝ իսկական մարդու վերամարմնավորելու ընթացքն է, այն ուժերի, որոնք մարդկային մտածողության կազմավորման արշալույսին գաղանային կամ մարդկայնացած ձևեր էին ընդունում: Հերոսների յուրաքանչյուր հաջորդ սերունդը էլ ավելի մոտ է երկրին, էլ ավելի մոտ է երկրային մարդու կերպարանքին»¹⁸: Դյուցազներգության հերոսները, որքան և կապված լինեն իրենց ծագումով, իրենց գերմարդկային ուժով, իրենց հատկություններով և իրենց գործերով՝ բնության և նրա ուժերի հետ (իսկ հնադարյան մարդը անհամեմատ ավելի է զգացել այդ ուժերը, քան նա, ով սովորել է ենթարկել իրեն դրանց թեկուզ մի մասը) — այդ հերոսները խորապես մարդկային են, դրանք կենդանի մարդիկ են, օժտված արիությամբ և բարձր հատկություններով, բայց իրենց մեջ կրում են նաև մարդկային թուլություններ, ուստի և ոչ միայն նրանց սխրանքները, այլև թուլություններն են վառ արտահայտվել նրանց երկրային կյանքի պատումներում»¹⁹: «Այդ դյուցազներգությունը, — շարունակում է Հ. Օրբելին, — ժողովրդական է ոչ միայն նրանով, որ ապրում է ժողովրդի խորքում և նրա կողմից ասվում, ոչ միայն նրանով, որ մինչև վերջին ժամանակները, մինչև մեր օրերը ապրում է ժողովրդի բանավոր հաղորդմամբ, ոչ միայն նրանով, որ տարբերակների լեզուն ժողովրդական է, կառուցվածքով և բառային կազմով շատ հեռու հին կամ նոր գրական հայերենից: Դյուցազներգությունը ժողովրդական է նախ և առաջ նրանով, որ նրա հերոսների ամբողջ աշխարհայացքը անխզելիորեն կապված է ժողովրդի հետ և ոչ թե նրանց հետ, ովքեր հազարամյակներ իրենց ձեռքում են պահել հայ ժողովրդի բախտը»²⁰:

Լրացված ձևով այդ ուսումնասիրությունը լույս տեսավ 1965 թ., առանձին հրատարակությամբ²¹:

Հ. Օրբելու գիտական ժառանգության կազմում հատուկ տեղ են բռնում նրա վիմագրագիտական աշխատությունները: Արդեն ասվեց, որ գիտական այդ բնագավառը Ն. Մառը

վստահել էր իր աշակերտին, և վերջինս ընդունեց առաջարկը մեծ ոգևորությամբ:

Պահպանված հայկական արձանագրությունների քանակը հաշվված չէ: Վանքերի և եկեղեցիների շենքերի դրսի (ոչ հազվադեպ նաև ներսի) որմերին կարող են լինել դարերի ընթացքում փորագրված տասնյակ կամ նույնիսկ հարյուրավոր արձանագրություններ: Այդպիսիք կան նաև խաչքարերի, տապանաքարերի, այլ կոթողների վրա: Որպես պատմական ըսկըզբնաղբյուր, վիմագիր արձանագրությունները չափազանց կարևոր են. նրանք տվյալներ են հաղորդում գնումների և նվիրատվությունների, տուրքերի և հարկերի, վանքերի և եկեղեցիների հիմնադրման մասին, հիշատակում պատմական իրադարձություններ և այլն: Արձանագրությունները, նշում էր Հ. Օրբելին 1914 թվականին կարգացած իր ներածական դասախոսության մեջ, կարևոր աղբյուր են «երկրի ներքին կյանքի, հասարակարգի, կառավարման, վերջապես՝ անձնական կյանքի» ուսումնասիրության համար:

Որպես պատմական աղբյուրի արձանագրություններին դիմել են արդեն միջնադարյան պատմիչները՝ Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, Զաքարիա Քանաքեռցին: XIX դարում արձանագրությունների հավաքման և հրատարակության գործով զբաղվեցին ականավոր գիտնականներ Մինաս Բժշկյանը, Մարի Բրոսեն, Հովհաննես Շահխաթունյանցը, Սարգիս Զալալյանցը, Վիկտոր Լանգլուան, Ղևոնդ Ալիշանը, հետագայում՝ Կարապետ Կոստանյանցը, Երվանդ Լալայանը և շատ ուրիշներ: Նրանց ջանքերով այդ կարևորագույն սկզբնաղբյուրները մտան գիտական լայն շրջանառության մեջ: Սակայն շատ դեպքերում նրանց վերծանությունները չէին համապատասխանում ժամանակակից գիտության պահանջներին: Արձանագրությունների հրապարակմանը ձեռնամուխ եղած Հ. Օրբելին շուտով համոզվեց, որ հրատարակիչների ձեռքով կատարված հավելումը կամ ուղղումը ներկայացվում էր իբրև բուն գրություն, լեզվական և հնագրական առանձնահատկությունները հաճախ անտեսվում էին, բազում դեպքեր

բում ընթերցումները ստույգ չէին, թերի էր նաև վերարտադրության եղանակը:

Օգտվելով հունա-հռոմեական վիմագրագիտության հարուստ փորձից, ինչպես նաև Ն. Մառի նոր հրապարակումներից, Հ. Օրբելին մշակեց հայկական վիմագրերը հրատարակելու սկզբունքները: Արձանագրություններին հատուկ է կապգրություն կամ կցագրություն, երբ մեկ տառի վրա շարված են լինում մի բանի այլ տառերի ելուստներ, այսինքն՝ գրությունը արտահայտում է մի քանի տառ միաժամանակ: Ահա այս առանձնահատկություններն արտահայտելու համար Հ. Օրբելին պատվիրում է հատուկ գրատեսակ, որն ընդգրկում էր հայոց վիմագիր արձանագրություններում հանդիպող գրեթե բոլոր կապգրերը: Արձանագրության մի շատ կարևոր, էական կողմը հնարավոր էր այնուհետև վերարտադրել տպագրական միջոցներով: Տեխնիկական այդ նորությունը պարզորոշ կերպով ցույց տվեց, որ կապգրերը պատահական չեն, այլ կազմում են քիչ թե շատ որոշակի համակարգ (շատ ցավալի է, որ Լենինգրադի տպարանի ջրհեղեղման տարիներին Հ. Օրբելու ուրվանկարներով ստեղծված հայկական վիմագրական տառատեսակը շարքից դուրս եկավ): Գիտնականի թրջթերում պահպանվել են բազմաթիվ նյութեր՝ ընդհուպ տառարկղի դասավորությունը, որոնց օգնությամբ կարելի է վերականգնել այդ գիրը՝ իր ողջ բազմատեսակությամբ:

Հաղթահարելով տեխնիկական բնույթի դժվարությունները, Հ. Օրբելին հնարավորություն ստացավ ազատություն տալ հետազոտական մտքին: 1913 թ. սկսած գիտական մամուլում մեկը մյուսի հետևից լույս տեսան նրա ուսումնասիրությունները, մեծ մասամբ նվիրված հայոց հնագույն արձանագրություններին²²:

Առանձին վիմագրեր հրատարակելիս Հ. Օրբելին տալիս էր նաև իր մեկնաբանությունը, լուսաբանում արձանագրության հետ կապված պատմական դեպքեր, կենսագրական տեղեյաններ, տերմինաբանություն և այլն. հրապարակումը հաճախ վեր էր ածվում իսկական հետազոտության: Աշխատությունների այդ շարքին է հարում նաև 1921 թ. լույս տեսած հոդվածը²³:

Այստեղ հեղինակը ցույց է տալիս, որ «արձան» բառը նշանակել է նաև աշտարակ, հանդես եկել որպես «բուրջ» բառի համանիշ: Հոդվածագիրը պարզաբանում է մի հարց ևս. եթե արձանագրություն մեջ ասված է, որ կառույցը շինել է այս կամ այն անձնավորությունը, ապա «շինել» տերմինը պետք չէ բուրձր դեպքերում հասկանալ բառացի: «Շինողը» կարող էր պարզապես վճարել արդեն կատարված աշխատանքի համար և իրավունք ստանալ արձանագրությամբ հավերժացնելու իր անունը:

2. Օրբելու վիճաբանական աշխատությունները, ինքնուրույն արժեք ներկայացնելով հանդերձ, պետք է հիմք դառնային հայոց արձանագրությունների դիվանի համար: Թե ինչպես էր հեղինակը պատկերացնում այդ հրատարակությունը՝ կարելի է դատել նրա կողմից պատրաստված «Հայկական վիճագիր հուշարձանների» առաջին պրակով²⁴: Այն ընդգրկում է Մարմաշեն վանքի արձանագրությունները: Աշխատությունն սկսվում է ինչպես վանական համալիրի, այնպես էլ նրա արձանագիր առանձին քարերի համառոտ նկարագրությամբ. Այնուհետև տրվում են կցագիր զրատեսակով վերարտադրված արձանագրությունները և նրանց ընթերցումները, կցադրերը բացվում են, որտեղ հնարավոր է՝ նշվում է բառանշատումը, վերականգնվում են հղծված տեղերը, առանձին դեպքերում լրացվում են փորագրիչի կողմից բաց թողած տառերը կամ նշվում տառերի անհարկի կրկնությունը: Եթե տվյալ արձանագրությունն արդեն հրատարակված է հղել, ապա նշվում է համապատասխան մատենագիտությունը: Պրակն ունի անձնանունների, աշխարհագրական և էթնիկական անվանումների ցանկեր, կցված են արձանագրությունների լուսանկարչական վերարտադրություններ:

Նույն սկզբունքներից ելնելով, Հ. Օրբելին ձեռնամուխ եղավ Շիրակի և հատկապես Անիի արձանագրությունների ժողովածուի պատրաստմանը: Աշխատանքը տեղեց տարիներ, վերջապես իջավ տպարան, հեղինակն անցել էր սրբագրությունը, երբ 1924 թ. Նևայի հայտնի ջրհեղեղի հետևանքով շարվածքը ոչնչացավ, մնացին միայն նրա արտատպություն-

ները, այդ թվում նաև շատ որակյալ տախտակները: Հ. Օրբելու ամենից կարևոր աշխատություններից մեկը, այսպիսով, մնաց անտիպ: Սակայն հայոց վիմագիր հուշարձանների դիվանի գաղափարը չէր կարող վերանալ: 1938 թ. Հ. Օրբելու ղեկուցադրի հիման վրա Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը հատուկ որոշում կայացրեց և դրամական միջոցներ առանձնացրեց այդպիսի դիվան հրատարակելու համար: Աշխատանքն ընդհատվեց պատերազմով և վերսկսվեց միայն 1954 թ., երբ ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիան Ս. Գ. Բարխուդարյանի գլխավորությամբ կազմեց արձանագրագիրտական մշտական գիտարշավ, սկզբում՝ Պատմության, հետագայում՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտին կից: Աշխատանքը հաջող էր ընթանում, և ահա՝ 1960 թ. լույս տեսավ դիվանի անդրանիկ պրակը, առաջին հատորի պատիվը վերապահելով Հ. Օրբելուն: Այն ընդգրկում է Գորիսի, Սիսիանի և Ղափանի արձանագրությունները: Պրակը կազմեց և նրա տպագրությունն ապահովեց անխոնջ գիտնական, գիտության հավատարիմ մշակ և փայլուն վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը (1898-1970)²⁵: Դիվանի հրատարակության ընդհանուր ղեկավարությունն իր վրա էր վերցրել Հ. Օրբելին:

Դիվանի հիմքում ընկած են այն սկզբունքները, որոնք մշակվել են տասնյակ տարիների ընթացքում. այդ սկզբունքների համաձայն արձանագրությունները պիտի վերարտադրվեն իրենց բոլոր առանձնահատկություններով: Վիմագրական հատուկ տառատեսակի բացակայության և որոշ այլ, ավելի էական պատճառներով, արձանագրություններն սկսեցին հրապարակվել տեխնիկական գծագրեր կատարելու եղանակով: Անդրանիկ պրակում այդ գծանկարները երբեմն անհաջող են ստացվել, հետագայում, սակայն, նրանց որակը բարձրացավ, և կիրառված եղանակն իրեն լրիվ արդարացրեց: Արդեն հաջորդ պրակում (իսկ դա Հ. Օրբելու հավաքած՝ Անիի արձանագրությունների պրակն է) բարելավումներն աչքի են ընկնում առաջին իսկ հայացքից:

Միասնություն մտցնելով կատարված աշխատանքի մեջ, ապահովելով արձանագրությունների բարձրորակ հրապարակումը, Ս. Բարխուդարյանը պատրաստեց և 1966 թ. լույս ընծայեց Հ. Օրբելու աշխատությունը՝ Անի քաղաքի վիմագրությունը²⁶: Դիվանի այդ պրակը բացվում է Հ. Օրբելու այն դասախոսությամբ, որը նա կարդացել էր Պետերբուրգի համասարանում՝ 1914 թ. սեպտեմբերի 6-ին՝ սկսելով Շիրակի վիմական արձանագրություններին նվիրված իր դասընթացը: Հրատարակված է Անիի 266 արձանագրություն՝ իրենց գծագրերով, ընթերցումներով: Նույն պրակով ընթերցողին հասան նաև այն 25 տախտակները, որոնք փրկվել էին Նեաչի ջրհեղեղից (ժամանակին տպագրվել էր 800 օրինակ, դրանով և որոշվեց պրակի տպաքանակը):

Հայ վիմագրության Դիվանի այդ պրակով շրջանառության մեջ մտան միջնադարյան Հայաստանի և հյուսիսային երկրների քաղաքական, սոցիալական, տնտեսական ու մշակութային պատմության համար առաջնակարգ նշանակություն ունեցող արձանագրություններ. Անիի պատմությամբ զբաղվողները ձեռք բերեցին բացառիկ կարևորության սկզբնաղբյուրներ: Վիմագրական աշխատանքները շարունակվում են. առ այսօր հրատարակված է 6 պրակ:

1910-ական թվականների Հ. Օրբելու կարևոր աշխատությունների շարքին են պատկանում նաև արձանագրություններ ունեցող արժաթյա շերտերին նվիրված ուսումնասիրությունները: 1913 թ. Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքի նիստում Հ. Օրբելին զեկուցում կարդաց այդ երկու առարկայի մասին, որը և հրատարակվեց «Քրիստոնյա Արևելք» պարբերականում²⁷: Հայկական արձանագրություններ ունեցող շերտեր թվակիր է՝ ԶՂԸ, այն է՝ մ. թ. 1549 թ.: Այստեղ կարդում ենք.

ԻՍԱՅ Է ԳԱԻԱԹ ԳԻՆՈՎ Ի ԼԻՆ,
ԱԻՐՀՆԵԱԼ ԱԶՈՎՆ ՅԻՍՈՒՍԻՆ
Ի ՎՍՅԵԼՈՒՄՆ ՀՈՐ ՈՀԱՆԵՍԻՆ ԵՒ ՅԻՈՒՐ ՈՐԴՈՅՆ՝
ԽՄԵՆՔ, ԵՂԲԱՐՔ, ԱՄԵՆԵՔԻՆ:

բաղմահատորյակի էջերում հրապարակված Հ. Օրբելու հոդվածը³⁰։

20-30-ական թվականներին իրանական արվեստը մեծ տեղ է գրավում Հ. Օրբելու հետազոտական կյանքում։ Դրա արդյունքներից մեկն է նրա «Սասանյան արվեստ» ակնարկը։ Վերլուծելով ճարտարապետությունը, մոնումենտալ բարձրաքանդակները, մետաղյա գեղարվեստական առարկաները, գործվածքները, փորագրված քարերը, դրամները, Հ. Օրբելին բացահայտում է նրանց կապը սասանյան արքունիքի կենցաղաձևերի հետ, տեխնիկական ու գեղարվեստական ձևերի ընդհանրությունը, արևմտյան արվեստի վրա ունեցած ազդեցությունը և խորամուխ հետազոտողի աչքից չվրիպող շատ այլ գծեր։ Այդ ակնարկը հաջորդեց էրմիտաժում կազմակերպված սասանյան հնությունների ցուցահանդեսին, այսինքն՝ բուն իրերի մանրադնին ուսումնասիրությունը։ Եվ արդեն ցուցահանդեսի կապակցությամբ գրված աշխատության մեջ Հ. Օրբելին մասնավորեցնում էր, թե ինչպիսի տարածում էր գտել այդ արվեստը, ինչպիսի ազդեցություն գործել հարևան ժողովուրդների գրականության (հատկապես ժողովրդական), հավատալիքների ու սովորույթների, կենցաղի վրա։ Գիտնականի կարծիքով «սասանյան» գծերը նկատվում են XVI-XVII և նույնիսկ XIX դարերի հուշարձաններում։ Այսպիսով, «սասանյան արվեստ» հասկացությունը դուրս է գալիս «սասանյան արքունական արվեստի» սահմաններից, արձագանք գտնում ոչ միայն Իրանում, այլև Կովկասում, Միջին և Փոքր Ասիայում³¹։ Ավելին՝ Հ. Օրբելին ապացուցում էր, որ «սասանյան» կոչված սկուտեղների, գավաթների, ջրլիցների և այլ գեղարվեստական առարկաների ստեղծմանը մասնակցել են ոչ միայն Իրանի, այլև հարևան երկրների ժողովուրդները։

Ինչպես նշվեց նախորդ գլխում, 1923 թ. էրմիտաժում բացվեց մահմեդական հախճապների ցուցահանդես։ Այդ ցուցահանդեսի կապակցությամբ Հ. Օրբելին հրատարակեց «Մահմեդական հախճապներ» ակնարկը։ Այստեղ առաջին անգամ հարց դրվեց «մահմեդական արվեստ» տերմինի մասին։ «Մահմեդական» տերմինը՝ ոչ միայն մշակութային, այլև

դավանական, չի ընդգրկում ստեղծարար այն բոլոր տարրերը, որոնք իրենցն են ներգրել այդ «մահմեդական մշակույթի մեջ», — գրում էր Հ. Օրբելին:

Իսկապես, հախճասալերը ստեղծվել են պատմամշակութային բարդ միջավայրում: Որպես նրանց հայրենիք ճանաչում են Միջագետք-Պարսկաստանը, բայց «յուրաքանչյուր երկիր, որտեղ զարգանում էր հախճասալերի արտադրությունը, նրա մեջ մտցրեց իրեն հատուկ գծեր, լրացնելով, հարստացնելով, նաև ծաղկեցնելով՝ երբեմն հօգուտ, երբեմն էլ ի վնաս, սկզբնաղբյուրից ժառանգած հիմնական ձևերը»³²:

Նրբ 1925 թ. էրմիտաժում բացվեց գլխավորապես մահմեդական արվեստի երկրորդ մեծ ցուցահանդեսը, Հ. Օրբելին հատուկ զգուշացնում էր, որ «Մահմեդական Արևելք» անվանումը պայմանական է: Նախ, ոչ բոլոր առարկաներն են ըստեղծվել մահմեդական միջավայրում: Բացի այդ, սխալ է «մահմեդական» անվանել այն իրերը, որոնք չեն եղել պաշտամունքային: Եվ վերջապես, դժվար թե հնարավոր լինի մըշակույթները բացարձակ ձևով սահմանազատել այն երկրներում, ուր կողք կողքի գոյակցել են երկու մարտնչող դավանանքներ՝ իսլամն ու քրիստոնեությունը³³:

Հետագայում ևս նա անդրադարձավ այդ հարցին: «Մահմեդական Արևելք» և «Քրիստոնյա Արևելք» տերմինների գոյակցությունը, որը մինչև այսօր էլ մեր ակադեմիական կենցաղից վերացված չէ, — գրում էր Հ. Օրբելին 1931 թ., — որոշել է նաև գիտական տեսակետների համապատասխան զարգացումը ու հանգեցրել այն մտքին, որ վրացիները, հայերը, ասորիները, ղպտիները և եթովպացիք որպես մեկ ամբողջություն հակադրվում են մեկ ուրիշ ամբողջության՝ պարսիկներին, թուրքերին, քրդերին և արաբներին ոչ թե դավանական, այլ պատմամշակութային առումով: Լրիվ մոռացության է տրվում այն, որ եթովպացիների շփումը հայերի հետ, անկասկած, տեղի է ունեցել, բայց միայն եկեղեցական ժողովներում և, գուցե, առանձին դեպքերում՝ մեկ-երկու վանքերի կենցաղում, իսկ ամբողջ մնացած հայության կյանքն ու պատմական ճակատագիրը իր հիմնական տարածքում անբաժան

է ընթացել պարսիկների, [հետագայում նաև] թուրքերի և քրդերի կյանքից, միավորվելով նրա հետ այն բոլոր հարցերում, որոնք չեն վերաբերել կրոնական հավատալիքներին և ծեսերին: Բայց եթե դուրս գանք տաճարների պատերից և հայացք ձգենք ժողովրդական հավատալիքների իսկական դեմքին, ապա [քրիստոնյաների կյանքը] կապված է նրանց՝ (մահմեդականների) կյանքի հետ նույնիսկ կրոնական առումով»³⁴: Եվ, վերջապես, ինչպես ասվեց, նույն այդ հարցերին նա անդրադարձավ սելջուկյան արվեստին նվիրված ելույթում, 1935 թ.: Զեկուլցողը ուշադրություն էր հրավիրում այն անվիճելի փաստին, թե «սելջուկյան մշակույթի ստեղծմանը մասնակցել են Միջին Ասիայի զգալի մասի, Փոքր Ասիայի, Անդրկովկասի և Իրանի ժողովուրդները: ...Քաղաքային կյանքի ծաղկման այդ հետնախորքի վրա (բայց ոչ երբեք «վերածնդի», ինչպես սիրում են երբեմն ասել) թռչնում են բնակչության տարբեր տարրերի միջև եղած ազգային և դավանական հակասությունները: Դրա վառ օրինակները բացահայտվեցին Մառի պեղումների ընթացքում Անիում, ուր բնակչության տարբեր խմբերի միջև բաժանման որոշակի գիծը, ինչպես պարզվեց, անցնում էր, մի կողմից, հայերի և վրացիների և, մյուս կողմից, պարսիկների և թուրքմենների ու թուրքմենական աղնվականության ու սրան հարող հարուստների՝ վաճառականների ու վաշխառուների և, մյուս կողմից, արհեստավորների ու աղքատների միջև»³⁵:

Սելջուկյան արվեստում, — շարունակում էր դարգացնել իր միտքը Հ. Օրբելին, — կան բազմաթիվ տարրեր, որոնք երեկվա քոչվորները յուրացրել էին տեղական մշակույթների գանձարանից, տեղի գեղարվեստական ավանդույթներից: Այդ եզրակացությունն է հանգեցնում և՛ ճարտարապետության, և՛ մետաղյա իրերի, և՛ մահարձանների ու շատ այլ տեսակի հուշարձանների ուսումնասիրությանը: «Արդեն քսաներկու տարի առաջ մենք առիթ ունեցանք ապացուցելու, որ սելջուկյան արվեստին հատուկ՝ բազմակող և գլանաձև, բրգաձև կամ կոնաձև ծածկ ունեցող դամբարանները (որոնց տիպարը սիրով պահպանել է հետագա դարերի մահմեդական ճարտարա-

պետութիւնը), իրենց հիմքում և ամենից վաղ օրինակներում ոչ թե կառուցներ են, սրունք կախում ունեն հայ և վրաց եկեղեցական ճարտարապետութեան ձևերից, այլ պարզապես հայկական և վրացական տաճարի թմբուկը և գմբեթն են՝ կտրված տանիքից և փոխադրված գետին. ընդ որում՝ թմբուկը կտրված էր իր ենթակառուցվածքով, այն է՝ նրա տակ եղած կամարներով: Իսկ գետնի վրա այդ ենթակառուցվածքը ոչ ընդունվ չի արդարացված և ըստ էութեան՝ անհեթեթ է: Նկատի ունենք, անշուշտ, ոչ թե եկեղեցու ֆիզիկական ավերումը՝ նրա թմբուկի և գմբեթի քարերից սելջուկյան նոր դամբարաններ կառուցելու նպատակով, այլ երկինք խոցացող շորս սյունների և կամարների վրա կառուցված թմբուկի կուրորեն վերից գետին փոխադրումը: Ուսումնասիրելով Խլաթի, Էրզրումի, Ոստանի դամբարանները, մենք տեսնում ենք, թե ինչպես է ծնվում ճարտարապետական մի նոր տեսակ. նա աճում է անտնկաշիվից, որը կտրել են այստեղ դարեր աճող քրիստոնյա՝ հայկական և վրացական տաճարից»³⁶:

20-րդական թվականներից սկսած Հովսեփ Օրբելու թե՛ գրքավոր աշխատութիւնները, թե՛ բանավոր ելույթները ձևեր են բերում հրապարակախոսային երանգ: Վերլուծելով առանձին երևույթներ, քննության առարկա դարձնելով դրանց առաջացման պատմամշակութային պայմանները, նա ընդգծում է այն կողմերը, որոնք իր ժամանակի համար եղել են հրատապ: Բանավիճային այդ աշխատութիւններում նա որոշ գրույթներ գիտակցաբար սրում է: Պնդելով, օրինակ, որ քրիստոնյա և մահմեդական արվեստների միջև եղած հակադրութիւնը երկվակայական է, նա, անշուշտ, միտք չունի ժխտել նրանց էական տարբերութիւնները: Չէ որ ինքն էր շարունակ շեշտում հայ և վրաց արվեստների ինքնուրույնութիւնը և ինքնատիպութիւնը: Բայց ակներև է նաև մշակույթների փոխադարձ ազդեցութիւնը, որը շարունակ վրիպում էր հետազոտողների տեսադաշտից: Հարկավոր էր խախտել կայունացած ավանդույթը, և Օրբելին անում էր այն իրեն հատուկ կրթոտութեամբ:

Այդ շրջանի աշխատութիւններին դիմելիս, անհրաժեշտ է հաշվի առնել մի հասկամանք ևս. դրանք սովորական հետազո-

տություններ չեն, այլ հաճախ՝ միաժամանակ պատմափիլիսոփայական մտորումներ: 20-ական և հատկապես հաջորդ տասնամյակների աշխատություններն ուղղված էին ոչ միայն մասնագետներին, այլև լայն ընթերցողին: Օրբելին հարկ չէր համարում յուրաքանչյուր դեպքում հիմնավորել իր դրույթը, կարեւոր էր մատուցել, այն էլ ընդհանրացված ձևով, իր գաղափարը: Այդ է պատճառը, որ անգամ այն դեպքում, երբ կոնկրետ իրողության լուսաբանությունը նոր փաստերի լույսի տակ կարող է կասկածի առնվել և անգամ լրիվ մերժվել, Հ. Օրբելու գրավոր ժառանգությունը, իբրև լայնախոհ և խոր գիտակի ամփոփում, պահպանում է իր արժեքն ու նշանակութունը:

Այդ հատկությունները բացահայտ են նաև Հ. Օրբելու՝ Շոթա Ռուսթավելուն և նրա դարաշրջանին նվիրված աշխատություններում: Հ. Օրբելու ներդրումը այդ բնագավառում լուսաբանվել է վերջերս Ի. Մեգրելիձեի կողմից³⁷: Ռուսթավելին եղել է Հ. Օրբելու ամենից սիրած հեղինակներից մեկը (որին նա, ավելացնենք փակագծերում, ընթերցել էր վրացերեն), և այդ սերն ու հիացմունքը իրենց կնիքն են դրել վրաց բանաստեղծին նվիրված յուրաքանչյուր աշխատության վրա: «Ռուսթավելին, — գրում էր Հ. Օրբելին իր 1938 թ. հրապարակված աշխատության մեջ, — մեծ է որպես իր դարաշրջանի զարմանալիորեն մաքուր, ճիշտ հղկված հայելի, և ոչ միայն Վրաստանի առավել ծաղկման դարաշրջանի, այլև մեր ամբողջ Արևելքի, որն այդ ժամանակ մեծ չափով առաջ էր անցել Եվրոպայից: Նա անապատում վեր խոյացած միայնակ կերպար չէ: Նա Վրաստանի, Կովկասի և այլ երկրների մշակութի զարգացման երկար ուղու հետևանքն է ու արդյունքը, նաև այն երկրների, որոնք անքակտելիորեն կապված են եղել Վրաստանի և Կովկասի հետ, և իրենց մշակութի բնագավառում շատ բանով էին պարտական Վրաստանին և Կովկասին, մինչդեռ քաղաքական իրադրության պատճառով՝ շղարշելով Վրաստանն ու Կովկասը, իրենց կողմը ձգեցին եվրոպական և ուսումնական միջավայրի գիտնականների ուղադրությունը... Իշխանական միջավայրից դուրս եկած Ռուսթավելու պոեմը, Անի քաղաքի իր բնակչության բազմազանությամբ և ժողովրդի

խորքից եկող, կծու և թաքմ հումորով լի առակները — ահա սրանք են այն գեղատեսիլ հայելու մասերը, որի ճառագայթների խաչաձևման մեջ իր իսկական տեսքով է խոյանում Ռուս-թավելու դարաշրջանի Կովկասը»³⁵:

«Ռուսթավելու դարաշրջանի «ուշարձանները» ժողովածուում Հ. Օրբելու հրապարակած հոդվածաշարքն ունի լայն ընդգրկում: Հեղինակն ընտրել էր այնպիսի առարկաներ և այնպիսի երևույթներ, որոնք նրա կարծիքով լավագույնս արտահայտում են XII-XIII դդ. հասարակական կյանքն ու մրջակույթը, դարաշրջանի ծնունդն են բառիս բուն իմաստով: Առանձին փաստերի լուսաբանության շուրջ Հ. Օրբելու հետ կարելի է վիճել: Այսպես, այն բարձրաբանդակները և բրոնզե կաթսաները, որոնց նվիրված է հոդվածներից մեկը, դժվար թե կարելի լինի բնորոշել իբրև «աղվանական»: Ինքը հեղինակը ցույց է տալիս, որ XII-XIII դարերում երբեմնի Աղվանքից միայն խավար հիշատակ էր մնացել: Բացի այդ, մենք այժմ գիտենք, որ ինչպես երբեք գոյություն չի ունեցել միասնական աղվանից էթնոս, այնպես էլ չի եղել միասնական մրջակույթ, որն ընդգրկեր Կուր գետի գետ ձախափնյակը: Բայց այդ հանգուցային հարցերը լուսաբանվել են միայն վերջերս (դրա համար մեծապես պարտավորված ենք Աս. Մնացականյանին), 30-ական թվականներին այդ հարցերին այլ կերպ էին մոտենում: Բոլոր պարագաներում՝ հոդվածաշարը պատկանում է Հ. Օրբելու ամենից հետաքրքիր աշխատությունների թվին:

Պետերբուրգի համալսարանի երկու ֆակուլտետների շրջանավարտ Հ. Օրբելին ստացել էր բանասիրական շատ լավ պատրաստություն: Այդ հանգամանքը բազմիցս դրսևորվել է նրա՝ հայերեն բնագրերի վրա կատարած աշխատանքում: Իբրև իսկական հետազոտող, նա անընդհատ դիմում էր բառարաններին, ստուգում և վերստուգում թարգմանությունը: Նրա թարգմանություններն աչքի են ընկնում իրենց բնագրի հետ ունեցած հարազատությունը, էլ չենք ասում՝ ինչպիսի փայլուն ոճաբանի ձեռքով են դրանք կատարված: 1918 թ. նա հրատարակում է Անանիա Շիրակացու «Յաղագս հարցման և

լուծման» խնդրագիրքը³⁹։ Հայերեն բնագրին կից տրված է ռուսերեն թարգմանությունը՝ ժանոթագրություններով և ղանադան ցանկերով։ 1921 թ. Հ. Օրբելին վերահրատարակում է 1950 թ. «Արարատ» հանդեսի № 7-ում լույս տեսած մի ուղեգրություն, ուր հեղինակը՝ մահոտեսի Շահմուրատ Բաղիշեցին, ներկայացնում է 1683 թվականին «Վերսալիայում» տեսած պալատները, պարտեզները, ջրավազանները և այլն։ Բնագրին կցված են թարգմանություն և ժանոթագրություններ⁴⁰։ Այդ աշխատության համար պահանջվեց Վերսալի հուշարձանների հատուկ ուսումնասիրություն։

50-ական թվականների սկզբին Հ. Օրբելին ձեռնամուխ եղավ հայ պատմիչների թարգմանությանը։ Նրա արխիվում պահվում են Նդիշեից, Ղազար Փարպեցուց, Հովհան Մամիկոնյանից, Թովմա Արծրունուց, Կեղծ-Շապուհ Բագրատունուց կատարված ռուսերեն թարգմանություններ։ Նդիշեի թարգմանությունը լույս տեսավ 1971 թ.⁴¹։

Սակայն նրա բանասիրական, ինչպես նաև գրականագիտական և հատկապես պատմամշակութային ուսումնասիրության գլխավոր առարկան ուսանողական տարիներից սկսած եղել են հայկական միջնադարյան առակները։ Վերջիններիս քննական ուսումնասիրությունը սկիզբ է առնում Ն. Մառի մագիստրոսական եռահատոր աշխատությունից՝ «Վարդանի առակների ժողովածուն» խորագրով (1894-1899)։ Ձեռնամուխ լինելով հայկական քանակությամբ պահպանված հում նյութի մշակմանը, Մառը նպատակ էր դրել, այլ հարցերի հետ մեկտեղ, լուսաբանել հայկական առակների կապը նույնանման այլալեզու հուշարձանների հետ։ Մառի հետազոտության շնորհիվ հայկական առակները գտան իրենց տեղը այդ գրական տեսակի միջադգային համակարգում։ Այդ աշխատությունն ունի հայկական ընդգրկում, հիմնական հարցերի հետ մեկտեղ այստեղ զուգընթացաբար պարզվում են բանասիրական, պատմական և պատմամշակութային բնույթի բազմաթիվ մանրամասնություններ։ Այդ աշխատությանը Հ. Օրբելին ծանոթացել էր դեռևս ուսանողական տարիներին, սկսել հատուկ հետաքրքրվել առակներով։ Ճիշտ է, շատ շուտ գիտակցեց,

որ հետաքրքրության առարկան չափազանց բարդ է, և, այնուամենայնիվ, հետ չկանգնեց խնդրից, իսկ 1931 թ. սկսած, ունենալով գիտական աշխատանքի մեծ փորձ, նորից անցավ առակների ուսումնասիրությանը և թարգմանությանը: Մըխիթար Գոշի, Վարդանի, Ողոմայիոսի հեղինակությամբ հայտնի առակները դարձան նրա պրպտումների մշտական թեման: 1938 թ. լույս տեսավ նրա «Ռուսթավելու հերոսները և նրանց հպատակները. ստորին խավերի ինքնագիտակցությունը XII-XIII դարերի առակներում»⁴² հոգվածը, 1956 թ.՝ առակներին նվիրված մեծ ուսումնասիրության համառոտված տարբերակը⁴³ և միայն հետմահու՝ «Միջնադարյան Հայաստանի առակները» մենագրությունը⁴⁴: Գիրքը պատկանում է Հ. Օրբելու ամենից հետաքրքիր, միաժամանակ գուցե նաև վիճելի աշխատությունների թվին: Ընդգրկելով հսկայական նյութ, հեղինակը ներկայացրել է XII-XIII դարերի Հայաստանի հասարակական կյանքն ու մշակույթը և փորձ կատարել պարզաբանելու, թե ինչպիսի արձագանք է գտել դարաշրջանը առակներում: Խոսքն, անշուշտ, անուղղակի արձագանքի մասին է (ո՛չ առակները, ո՛չ էլ նրանց խրատական բնույթի ամփոփումները անմիջապես չեն արտահայտել պատմամշակութային, հասարակական երևույթները): Սակայն ընտրած սյուժեները, հերոսների (լինեն տրանք կենդանիներ, թռչուններ կամ մարդիկ) վարքագիծը, նրանց հարաբերությունները, շատ դեպքերում, ենթադրում է Հ. Օրբելին, պատճառաբանված են իրականությամբ, XII-XIII դդ. հայ իրականությամբ: Նյութին կատարելապես տիրապետող Հ. Օրբելին սրամիա դիտողություններ է անում, կապ հաստատում իրարից երբեմն շատ հեռու գտնվող երևույթների միջև: Նա փորձում է որոշել առակագիրների դիրքը այս կամ այն հասարակական երևույթի նկատմամբ, զանազանել նրանց տեսակետները: Բաղմահմուտ հեղինակը օրինակներ է բերում տարբեր բնագավառներից, համագրում և հակադրում դրանք, պարզում տեղական առանձնահատկությունները և տեղում գործող ընդհանուր օրինաչափությունները:

XII-XIII դդ. հայկական կյանքում մեծ փոփոխություններ են տեղի ունենում, հասարակական զարգացումը մեծ չափով պայմանավորված է քաղաքների, քաղաքական կյանքի վերելքով: Աշխարհիկ տարրը մուտք է գործում մշակույթի բոլոր բնագավառները, և հաճախ հանգամանքներն են պայմանավորում առակագրության ծագումը, գանում է Հ. Օրբելին: Սակայն ամենից էական հարցը մնում է, այնուամենայնիվ, թեական. առակներն արդյո՞ք արտահայտում են XII-XIII դդ. իրադրություններ, թե՞ հանդես են գալիս որպես համամարդկային դարավոր փորձի հուշարձաններ: Այսպես թե այնպես, առակներին նվիրված աշխատությունը մեծ ներդրում է հայ միջնադարյան մշակույթի ունումնասիրման բնագավառում*:

Արևելագիտությունը եղել է, մասամբ մնում է կոմպլեքսային գիտություն: Հետազոտության ընթացքում արևելագետը դիմում է պատմագիտական, բանասիրական, լեզվաբանական, հնագիտական, արվեստաբանական մեթոդներին: ձգտում նրանց օգնությամբ մեկնել հուշարձանը կամ երևույթը: չէ՞ որ վերջինս դրսևորել է իրեն որպես առանձին, հաճախ մեկը մյուսից հեռու հատկանիշների համադրություն: Հ. Օրբելու աշխատությունների մի զգալի մասը կոմպլեքսային բնույթի է: Դա մասնավորապես աչքի է ընկնում նրա՝ Աղթամարի հռչակավոր տաճարին նվիրված աշխատության մեջ: 1921 թ. Հ. Օրբելին հրատարակեց տաճարի գմբեթի սկզբնական ձևին նվիրված հոդվածը⁴⁵: Նա հատուկ ուշադրություն դարձրեց արևմտյան պատին քանդակված Գագիկ Ա. Արծրունու ձևերին եղած տաճարի մանրակերտի վրա, որի գմբեթը

* Կապելով առակները նրանց ստեղծման դարաշրջանի հասարակական հարաբերությունների, դասակարգային պայքարի և այլնի հետ, Հ. Օրբելին բաժանել է իր ժամանակվա տեսակետները, հավատարիմ մնացել իշխող կարծիքին: Առակները նույնպես է մեկնաբանել նաև Մանուկ Աբեղյանը: Նկատելի է, սակայն, որ 1956 թ. (այսինքն՝ գիտնականի կենդանության օրոք) լույս տեսած գրքում այդպիսի մոտեցումը հստակ հրատարակված ընդարձակ տարբերակի համեմատությամբ որոշ չափով մեղմացված է:

Կիսազնոգածն է, մինչդեռ բուն տաճարն ունի 16 նիստից կազմված թմբուկ, որի վրա հենվում է ևս 16 նիստանոց բուրգ: Գիտնականի կաշօժիքով, սկզբնապես տաճարն էլ է ունեցել կիսազնոգածն դմբեթ, որը վերակառուցվել է XIV դ. առաջին կեսում, «տանալով այսօրվա տեսքը:

Աղթամարի հուշարձանները տարիներ շարունակ գրավել են Հ. Օրբելու ուշադրությունը. 1921, 1939, 1948 և 1950 թթ. նա ղեկուցումներ է կարգացել այդ հարցի շուրջ: 1948 թ. նա հիմնականում ավարտել էր իր մեծ ուսումնասիրությունը, որը լույս տեսավ հետմահու⁴⁶: Աշխատության մեջ Հ. Օրբելին նախ և առաջ ուսումնասիրության առարկա է դարձնում Թովմա Արծրունու (կամ ավելի շուտ՝ նրա շարունակողի) այն հատվածները, որոնք նվիրված են Վանա լճի հարավային ափին և Աղթամար կղզում Գագիկ թագավորի շինարարական գործունեությանը: Աղթամար կղզում ս. իսաշ տաճարից բացի ուրիշ շինություն չի մնացել, և հեղինակը ձգտում է իմաստավորել այն նկարագրությունները, որոնք տալիս է պատմիչը, պարզել նրանց իրական բովանդակությունը: Աշխատության կորիզը, սակայն, կազմում է տաճարի ուսումնասիրությունը, ընդ որում՝ Հ. Օրբելին շարունակում է ուշադիր հետևել պատմիչի ամենաշնչին ականարկներին: Կոռույցը և նրա հոյակապ քանդակները հետազոտված և նկարագրված են բացառիկ մանրամասնությամբ:

Այժմ Աղթամարի մասին գոյություն ունեն մի շարք հանգամանալից մենագրական ուսումնասիրություններ, և դրանց կողքին Հ. Օրբելու գործը շարունակում է պահպանել իր արժեքը՝ իբրև պատմամշակութային օրինակելի վերլուծություն:

* * *

Որպես գիտնական Հռվսեփ Օրբելին ձևավորվել է XX դ. սկզբին: 20-ական թվականներից սկսած նրա գիտական ձգտումները շեշտակի փոփոխության են ենթարկվել: 20-40-ական թվականներին նա յուրացրել է սովետական արևելագիտության հիմունքները, յուրացրել նրա նվաճումները և ազդ-

վել նրա կորուստներից: Դարաշրջանի կնիքն են կրում Հ. Օրբելու բոլոր քիչ թե շատ խոշոր աշխատությունները: Մի շարք հարցերում նրա դրույթները հնացել են, տեղի տվել նոր փաստերի, դուրս մղվել նոր տեսակետներով: Սակայն որպես ամբողջություն Հովսեփ Օրբելու դրավոր ժառանգությունը պահպանել է իր կշիռն ու նշանակությունը: Արեւելագետների (և հատկապես հայագետների) շատ սերունդներ—կղիմեններան՝ ձգտելով թափանցել անցյալ դարաշրջանների ու մշակույթների խորքերը:

Գ. ԽԱՌՆՎԱԾՔԻ ՈՐՈՇ ԳԾԵՐ

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին աշխատախցում մեկուսացած գիտնական չէր: Հնագիտական պեղումները, գիտական արշավները, ցուցահանդեսների նախապատրաստման աշխատանքը պայմանավորել են մարդկային լայն շփում: Դրան նրա պատել է նաև հասարակական, կազմակերպչական գործունեությունը: Երիտասարդական տարիներից սկսած՝ Հ. Օրբելին շրջապատված է եղել մարդկանցով, և այդ մարդիկ ճանաչել են նրա հմայքը: Բնավորությամբ ծանր էր, դյուրագրգիռ, հաճախակի չէր կարողանում (կամ չէր ուզում) զսպել իրեն: Շատ անգամ, բարկության պահերին, նրա ձայնը լսվում էր թանգարանի կամ ինստիտուտի հեռավոր անկյուններում: Ակադեմիկոսի առանձնասեյակում տեղի ունեցող անցուդարձերի համբավը պահպանվել է մինչև օրս, և, այնուամենայնիվ, մարդիկ զարմանալի ներողամիտ էին նրա հանդեպ և շարունակում էին նրան պաշտել: Այդպիսի հավատարմության պատճառներից մեկն այն է, որ զայրույթի բռնկումը սովորաբար լինում էր հասարակական հողի վրա, անձնական խնդիրներն այստեղ մեծ դեր չէին կատարում: Եվ ապա՝ ձայնը բարձրացնում էր ոչ թե էրմիտաժի տնօրենը կամ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտը, այլ Օրբելին՝ անկախ իր պաշտոններից: Ընդհանուր առմամբ սերն ու հարգանքը շրջապատել են Հ. Օրբելուն իր ողջ կյանքի ընթացքում: Եղել են, անշուշտ, նաև նախանձողներ, բայց անտարբեր՝ ոչ երբեք: Ժամանակակից գիտնականներից մեկը հետաքրքիր է արտահայտվել նրա մասին. «Օրբելուն ես չեմ սիրում, բայց որքան սրտովս է այդ մարդը» (Я не люблю Иосифа Абгаровича, но как же он мне нравится!)¹:

Ինքը Հ. Օրբելին սիրում էր մարդուն, հարկ եղած դեպքում հասնում օգնության՝ առանց հաշվի առնելու հնարավոր հետևանքները: Բայց եթե մեկին չէր սիրում, ապա ամենևին չէր թարցնում իր վերաբերմունքը և տեղի թե անտեղի՝ լարում հարաբերությունները:

Երբ նա մտնում էր էրմիտաժի դահլիճները, անցնում Նեվայի առափնյայով, մարդիկ շրջվում էին՝ նրան դիտելու: Նույն տպավորությունն էր գործում նաև Հայաստանում, ուր իր էթնիկական կերպարով չպիտի զանազանվեր մյուսներից: Բնավորությամբ նա լիարժեք աշխարհական էր, սակայն արտաքինապես ինչ-որ բանով հիշեցնում էր հայ հոգևորականի (հիշենք, որ եղել է տեր Հովսեփի թոռը):

Օրբելին վայելում էր փայլուն ճարտասանի համբավ*: Նրա խոսքը և՛ բարդ էր իր կառուցվածքով, և՛ գեղեցիկ, մահուն. հնչում էր բնական, արտասանում էր մի քիչ խուլ ձայնով, սկսում շատ հանգիստ, բայց հանկարծ ինքն իրեն ընդհատում էր, ձայնը բարձրացնում, և նրա խանդավից խոսքերը հասնում էին մարդկանց սրտին: Նրա ուսանողներն անթերի էր: Հայախոս ընտանիքից սերելը որևէ կերպ չէր ազդել առողջանություն վրա, և, այնուամենայնիվ, իսկույն զգացվում էր, որ խոսողը ուս չէ (արդյո՞ք նա չէր պահպանել հին Պետերբուրգի արտասանությունը, որը հետագայում անսովոր էր թվում): Խոսելիս խուսափում էր ուսական առածներից և ասացվածքներից (որոնք, իրոք որ, չէին պատշաճի՝ նրա այնքան հաջկական արտաքինին), խուսափում էր նաև օտար բառերից, բայց ընդհանրապես նրա բառապաշարը հարուստ էր և բազմազան: Ի դեպ, Հ. Օրբելու բանավոր խոսքի էլեկտները պարզորոշ

* Առաջին անգամ առիթ եմ ունեցել լսելու նրան 1941 թ. զարնանք, երբ Երևան էր եկել հուշակավոր բեռախույզ ակադեմիկոս Օ. Յու. Շմիդտի հետ: Նրանք ելույթ ունեցան օպերայի նոր շահագործման հանձնված շենքում, հաջորդ օրը՝ պիոներների պալատում: Օրբելու ասածն այժմ չեմ կարող վերականգնել, բայց սովորությունը մնացել է հիշողությանս մեջ, մանավանդ որ Շմիդտը նույն կարգի հոեւոր էր՝ ինչ և Օրբելին: Այդ օրերին, նրանք, ասես, մրցում էին ճարտասանական արվեստի մեջ:

նշմարվում են նաև տպագրված աշխատություններից շատերում*:

Հովսեփ Օրբելու անձնական հմայքը մեծ չափով նպաստել է իր կազմակերպչական գործունեության հաջողությանը: Նպաստել է, անշուշտ, նաև այն, որ իբրև մեծ կամքի տեր մարդ, նա իր կամքին է ենթարկել նաև մյուսներին: Բայց ամենից կարևորն այն է եղել, որ նա միշտ գործել է որպես գիտության բնագավառում սեփական ներդրում ունեցող, որպես սեփական գիտական կենսագրություն ունեցող անձնավորություն: Օրբելու հասարակական դեմքը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է այդ վերջին հանգամանքը միշտ նկատի ունենալ:

Նա, անշուշտ, արտակարգ կազմակերպիչ էր, գիտական կոլեկտիվի իսկական առաջնորդ: Էրմիտաժի հռչակը միշտ էլ բարձր է եղել, սակայն միայն նրա օրոք այդ թանգարանը դաժձավ մեծ գիտության օջախ, այն էլ՝ մի քանի ուղղությամբ գործող: 30-ական թվականներին նշված հոբելյանները, ցուցահանդեսները, իրենց փայլը ստացան և արձագանքն ունեցան նշանակալի չափով Հ. Օրբելու մասնակցության շնորհիվ: 3-4 տարվա ընթացքում նա վերականգնեց Լենինգրադի արևելագիտության երբեմնի համբավը: Նա կարճ ժամանակ մնաց Հայաստանում՝ անգամ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնն ստանձնելիս: Այնուամենայնիվ, առաջին պրեզիդենտի գործունեության որոշ բարերար հետևանքներ նշմարելի են անգամ այժմ: Իսկ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքը շարունակում է ճշտվել հետևել Հ. Օրբելու կողմից նշված ուղուն:

Որպես կազմակերպիչ Հ. Օրբելին եղել է հաջողակ, զգաստորեն կշռադատել է հնարավորությունները և սկսած ի կատար ածել: Գործել է համարձակ, պատասխանատվությունից

* Հ. Օրբելու հայերեն խոսելը լսելու առիթ չեմ ունեցել, թեև հաճախ էր գրաբարից կամ բարբառներից մեջբերումներ անում: Մեկ անգամ միայն հուզված վիճակում դարձավ ինձ ու ասաց. «Նրեխաս ձեռքից գնում է»: Խող ընթերցողը դատի, ինչի մասին է վկայում ծանր պահին սրտից ելած այդ բուն հայկական արտահայտությունը...

շի խուսափել: Արդեն ասացինք, որ 1931 թ. Լոնդոնից կտրուկ հեռագիր էր ուղարկել, որպեսզի Լենինգրադում մնացած նրմուշները ևս ուղարկվեն Անգլիայի մայրաքաղաք և իրենց տեղը գտնեն պարսկական արվեստի միջազգային ցուցահանդեսում: Մեկ տարի հետո նա հանդգնորեն պաշտպան կանգնեց այդ (և նման) հուշարձանների, որոնք նախատեսված էին վաճառքի: Ինդուստրացումը ապահովելու համար այդ տարիներին պետությունը հարկադրված էր արտասահմանին վաճառել արվեստի առանձին թանկարժեք նմուշներ՝ նկարներ, հին ձեռագրեր, ոսկերչական առարկաներ և այլն: Սպառնալիքի տակ գտնվեցին նաև էրմիտաժի՝ Արևելքի բաժնի հավաքածուները: Եվ ահա 1932 թ. աշնանը էրմիտաժի բաժնի վարիչ Հ. Օրբելին մի նամակ ուղարկեց Ի. Ստալինին, բողոքելով այն հիմնարկի դեմ, որը միջնորդի դեր էր կատարում նրման գործարքներում: Նամակում հայտնում էր, որ իր 24-ամյա գիտական կյանքի 12 տարին նվիրել է Արևելքի բաժնի ստեղծմանը և նմուշների հավաքման գործին, հրաժարվել գիտական աշխատանքի այլ եղանակներից: Այժմ գտնվում է ճգնաժամային վիճակի մեջ: «Անտիկվարիատի գործունեությունը, առաջներում էլ է ծանր արտահայտվել էրմիտաժի հանդեպ, իսկ վերջին տարիների ընթացքում հատկապես սպառնալի ձևեր է ընդունել, ընդ որում՝ Անտիկվարիատի հայտերը վտանգի տակ են դնում նաև Արևելքի բաժինը՝ այն ձևով, որը անխուսափելիորեն տապալման կհասցնի մեր գործը»: Հ. Օրբելին խնդրում էր, որպեսզի նրան հնարավորություն տրվի անձամբ ծանոթացնել հասցեատիրոջը բաժնի թև՝ արդյունքներին, թե՛ հեռանկարներին: Պատասխանը եկավ անմիջապես: Անտիկվարիատին կարգադրված էր Արևելքի բաժնի նմուշները թողնել իրենց տեղերում: Ակամայից միտք է ծագում, եթե Օրբելու պես մի շարք գիտական-հասարակական գործիչներ բողոքեին վաճառքի դեմ, ապա ինչպիսի գանձեր կմնային երկրի թանգարաններում...

Վերևում բերված փաստերի հետ լավ է շաղկապվում Հ. Օրբելու վարմունքը 1941-1942 թթ.: էրմիտաժի ցուցանմուշների էվակուացումից հետո, նա հնարավորություն ուներ

դուրս գալ Լենինգրադից, բայց մնաց պաշարված քաղաքում, մյուսների հետ հավասար ապրեց այդ սոսկալի ձմեռը:

Լայն երևակայության տեր մարդ էր Հ. Օրբելին և նպատակին հասնելու համար կարող էր դիմել անսովոր միջոցների: Արդեն ասվեց, որ նշանակվելով Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի վարիչ, աշխատանքի էլ ընդունել գերազանցապես երիտասարդների, մարդկանց, ովքեր դեռես չէին դրսևորել իրենց գիտական հնարավորությունները (այդ երիտասարդների կազմում է եղել նաև տոգերիս հեղինակը): Թվում է, թե սկսնակներին հարկավոր էր ոգևորել՝ նկարագրելով նրանց ապագան, կոչելով առաջ շարժվել առանց հետ նայելու: Իսկ Օրբելին վարվում էր ճիշտ հակառակ եղանակով. նա ներկայացնում էր փառահեղ անցյալը, անընդհատ շեշտելով, թե ինչպիսի ժառանգության տեր են այդ սկսնակները, ում օրինակին պիտի հետևեն: Այդ ժառանգությունը՝ հայրենական արևելագիտությունն է, այն, ինչ որ ստեղծվել է Ռոզենի, Մառի, նրանց ժամանակակիցների, նրանց անմիջական աշակերտների ձեռքով: Նա ինքը պատկանում էր վերջիններիս թվին, ուստի կարողանում էր ներկայացնել ուսական հին արևելագիտության լայն համապատկերը: Ամենից շատ Հովսեփ Օրբելու շնորհիվ էր, որ 50-ական թվականների կեսերից հին Պետերբուրգի արևելագիտությունը դարձավ զարմանալիորեն աչժմեական: Ժառանգությունը, իրոք որ, հարուստ էր, և այն շատ նպաստեց հետագա տարիների գիտական առաջընթացին:

Հ. Օրբելին երբեք չէր համակերպվում երիտասարդների սովորություններին, ճաշակին, նրա հետ շփվելիս երիտասարդությունը միշտ զգացել է իր և նրա միջև եղած ժամանակային տարածությունը: Բայց այդ տարածությունը չէր խոչընդոտում հոգեկան և մտավոր կապին, հաղորդակցությանը, վերին սոսիճանի անմիջականությանը:

Սովորական պայմաններում մարդկանց հետ խոսում էր պարզ ու բնական եղանակով: Բայց ահա, կոնգոնում ինչ-որ մեկը վիրավորել էր նրա ինքնասիրությունը, ականարկել իբր ոչ ազնվական ծագումը: Ուսերը սեղմելով Օրբելին պատաս-

խանկ էր, որ խոսակիցը շափազանցնում է. հոր պծով ինքը սերում է XII դ. իշխաններից, իսկ մոր դծով՝ անգամ XI դարի: Նշավակված անգլիացին ստիպված էր եղել խոնարհվել ալդպիսի ազնվականի առջև: Նման ձևով Օրբելին կվարվեր միայն արտակարգ պարագաներում, բայց գործակիցների շրջանում՝ երբեք:

Արժանապատվության զգացումը եղել է, ըստ երևույթին, ընտանեկան հատկություն: Մենք արդեն ասացինք, թե ինչպիսի ծանր կացություն մեջ էր գտնվում նրա ավագ եղբայր Լևոն Օրբելին 40-ական թվականների վերջերին: Գյուղատնտեսական գիտությունների համամիութենական ակադեմիայի 1948 թ. նստաշրջանում Լ. Օրբելին ենթարկվել էր խիստ քննադատության: Երկու տարի հետո, 1950 թ. հուլիսին գումարվել էր ակադ. Ի. Պ. Պավլովի ֆիզիոլոգիական ուսմունքին նվիրված նստաշրջան: Պավլովի լավագույն և հավատարիմ աշակերտ Լ. Օրբելին ոչ միայն քննադատության էր ենթարկվել, այլև զրկվել էր բոլոր պաշտոններից: Համաշխարհային անուն ունեցող գիտնականին հատկացվել էր ընդամենը չորս աշխատակից ունեցող մի փոքր աշխատանոց: Իր սկզբունքներին հավատարիմ Լևոն Օրբելին չէր խոնարհվել տգետների առջև*:

1951 թ. օգոստոսին էրմիտաժի աշխատանքից ազատվեց Հովսեփ Օրբելին (լուրը նրան հաղորդեց թանգարանի տնտեսվարը): Այդ հարվածը նա շատ ծանր ապրեց, սակայն կրտսեր եղբայրը ևս այն տարավ արժանապատվությամբ: Բայց արդեն 50-ական թվականների կեսերին դրությունը հիմնովին փոխվեց, և եղբայրների գիտական-հասարակական ծառայությունները կրկին համընդհանուր ճանաչում գտան:

Բարձր պահելով իր ազգային արժանապատվությունը, Հ. Օրբելին ճանաչել և հարգել է նաև մյուսների զգացմունք-

* Այդ բոլոր հարվածներին նա դիմացավ՝ ընկճված լինելով անձնական ողբերգությամբ, 1949 թ. վախճանվեց նրա միակ դուստրը՝ հորն ու մորը թողնելով միակ իր որդուն: Լ. Օրբելին որդեգրեց երեխային, որը քրթալով նրա ցավերի գլխավոր սփոփանքը:

ները: Նրա ներկայութեամբ ոչ ոք թույլ չէր տա իրեն որևէ ազգայնամուլ ոտնձգութիւն: Աւելին. մի առիթով նա հրապարակաւ կշտամբեց աշխատակիցներին մեկին այն բանի համար, որ նա ի վիճակի չգտնուէր պատշաճ կերպով պաշտպանել իր ազգային պատիւը:

Հովսեփ Օրբելու հայրենասիրական զգացմունքը անբաժան էր նրա ինտերնացիոնալիզմից:

Հ. Օրբելու գիտական կյանքը մեծապէս բովանդակալից է եղել ուսանողական առաջին իսկ տարիներից: Դասական գիմնազիայի սանը հարկաւ լիովին պատրաստ էր ընկալելու այն առարկաները, որոնք դասավանդվում էին Պատմա-բանասիրական ֆակուլտետում: Շուտով նա վճռեց հաճախել նաև Արեւելյան լեզուների ֆակուլտետը՝ լիովին գիտակցելով այդ քայլի անմիջական արդյունքները: XX դ. սկզբներին Պետերբուրգը շարունակել է մնալ այն միակ տեղը, ուր ապագա կովկասագետը ընտրած բնագավառում կարող էր ստանալ բարձրագոյն համալսարանական կրթութիւն: Եվրոպայի մյուս համալսարաններում կարելի էր ուսումնասիրել հայերենը (մասնավանդ որ հնդեվրոպական լեզվաընտանիքում այն ճանաչվել էր որպէս շատ կարեւոր լեզու), կարելի էր հաճախել առանձին կովկասագիտական դասընթացների, սակայն բազմակողմանի պատրաստութիւն կարող էր ապահովել միայն Պետերբուրգը: Հայկական բնագրերի թարգմանութիւնն ու մեկնութիւնը այստեղ վաղեմի ավանդույթ ունենէ՛ր՝ այն գալիս ձգվում էր դեռևս Մարի Բրոսից և Քերովբե Պատկանյանից: Փորձ էր ձեռք բերվել նաև լեզուների դասավանդման ասպարեզում: Մառի օրոք առարկաների քանակը բազմապատկւել էր, վեր էր ածվել լավ մտածված համակարգի: Բայց Հ. Օրբելու համար հայոց անցյալի պատմութիւնը ճշմարտապէս հարազատ դարձավ ոչ այնքան լսարաններում կամ գրադարաններում, որքան Շիրակի կիզիչ արեւի տակ՝ Անիում:

Արդեն հիշեցինք, որ Անիում ձեւավորվել էր կատարյալ պատմա-հնագիտական ինստիտուտ: Աշխատակցութեան էին ներգրավվել խոշորագոյն գիտնականներ՝ ոչ միայն կովկասագետներ, այլև հարակից հարցերով զբաղվողներ: Թե՛ ու-

սանողները, թե՛ հասուն մասնագետները այստեղ հղկում էին իրենց գիտելիքները: Պեղումների մթնոլորտն այնպիսին էր, որ թույլ չէր տալիս Անին ընկալելու սոսկ գիտական տեսանկյունից՝ որպես հնությունների յուրօրինակ հավաքածու: Անին, ասես, ամփոփել էր Բագրատունյաց և հետ-Բագրատունյաց շրջանների ողջ հայ կյանքը, դարձել էր մշակութային մի զանգված, որը պետք էր իմաստավորել իր ամբողջությամբ: Պեղումների մասնակիցների պատկերացումներում Անին շարունակում էր ապրել իր խորհրդավոր կյանքով: Նշանավոր դերասան, նաև Մառի գիտարշավի լուսանկարիչ Արամ Վրույրի Արտաշես որդին 1901-1917 թթ. եղել է Անիում, գիտել, ապա և մասնակցել պեղումներին: Ահա թե ինչ է գրում նա տասնամյակներ հետո. «Այս պատմական ոլորտում, երբ մարդ տարվում է խոր մտքերով և վառ երևակայությամբ, ... առարկաները դառնում են ավելի խորհրդավոր, — նկատում է Ա. Վրույրը: — Պատահում են ռոպեններ, երբ մարդու աչքերին խորախորհուրդ ու պայծառ պատկերներ են երևում՝ կապված միջավայրի կյանքի, դեմքերի և առարկաների հետ»: 1906 թ. Գագիկ Ա. Բագրատունու արձանը դրված է եղել հնադարանի սյունադարձ սրահի ծայրում: Նրեկության հանկարծ «Գագիկը շարժվեց... Եվ վեհապետին վայել, վսեմ ու ծանր քայլերով նա ընթանում է առաջ...»: Նրիտասարդ Օրբելին փշաքաղվում, նվաղած հատակին է ընկնում²:

Արտաշես Վրույրի գրքից բերենք մեկ հատված ևս: Գիշերը դեպի միջնաբերդ տանող «Մառի» փողոցով իր մտքերի մեջ խորասուզված անցնում է երիտասարդ Լևոն Քալանթարը: «Եվ հանկարծ... կախարդական քաղաքի խորհրդավոր գիշերվա ծանր լուսթյունը խանգարվեց... Ասես հինավուրց քաղաքի փլատակների, անդնդախոր ձորերի և մթին այրերի մեջ ապրում են դեռ գերբնական զորություններ... Նրա ականջին աղմկեցին դոփյունները ձիերի սմբակների, որոնք թնդացնում էին փողոցի սալերը անզուսպ հարվածներով... Ետ

դարձրեց գլուխը երիտասարդը և շանթաճար եղած արձանացավ տեղում... Յնո՞րք... Թե՞ իրականություն...»³։*

Թե ինչ ապրումներ են ունեցել XX դ. Անիի պեղող-քնակիչները՝ ցույց է տալիս մեկ ուրիշ միջադեպ։ Մի քանի գիշեր անընդհատ նրանք նկատում էին, թե ինչպես «խավարի մեջ դանդաղ տատանվում էր խորհրդավոր լույսը ու շարժվում առաջ...»։ Այդ լույսը նրանք կապում էին «Անիի Ոգու» հետ, բայց շուտով գաղտնիքը պարզվեց. «Անիի ոգին» Հովսեփ Օրբելին էր։ Առաքելոց եկեղեցու ներսի արձանագրությունները ճիշտ վերարտադրելու համար նա աշխատում էր գիշերները, գրեթե կարգում ձրագի թեք լույսի օգնությամբ⁴։ Բայց որչափ խորհրդավոր էին այդ լույսի տատանումները կեսգիշերին։

Անիի կերպարը առմիշտ տպավորվել էր Հ. Օրբելու երևակայության մեջ։ Տասնյակ հոգիածներում նա հիշատակում է քաղաքը, նրա զարմանալի մշակույթը։ «Դարձել է այստեղ նյութը գաղափար» արտահայտությունը կարող էր պատկանել ոչ միայն Ավետիք Իսահակյանին, այլև Հովսեփ Օրբելուն։ Մյուսների հետ նա ևս, անշուշտ, լավ էր գիտակցում, թե ինչպիսի մեծ նշանակություն ունեն պեղումների արդյունքները։

* Ինձ ասել են, որ Առն Քալանթարը թատերական ինստիտուտի ուսանողներին պատմելիս է եղել հետևյալը։ Պեղումների մասնակիցները նկատել են, որ Նիկողայոս Մառը գիշերները սկսել էր շքանալ։ Հարց են տվել, թե ի՞նչն է պատճառը, ասել է. «Գիշերները ես հանդիպում եմ Գագիկ թագավորի հետ»։ — «Կարելի է արդյո՞ք, մենք էլ ներկա լինենք այդ հանդիպմանը» — «Ինչու չէ»։ Գիշերը դուրս են գալիս Անիի գլխավոր փողոցը. շուտով լսվում է պալտերի դոփյուն, ապա երևում է հեծյալների մի խումբ, Գագիկի գլխավորությամբ։ Մառը դուրս է գալիս, լռելայն խոնարհվում թագավորի առջև։ Գագիկը, նույնպես լռելայն, գլխով է անում, և հեծելախումբը կորչում է մթության մեջ։ Լ. Քալանթարը իբր երգվել է, որ պատմածը կատարյալ ճշմարտություն է։

Այդ միջադեպը հիշեցնում է նախ և առաջ «Համլետի» հայտնի տեսարանը, սակայն եթե Լ. Քալանթարը պատմել է դրա մասին թատերական շրջանում, ապա հիմք չունենք կասկածելու նրա անկեղծության վրա։ Այդ դեպքը լավագույնս ցույց է տալիս, թե որքան հեռու էր գնացել պեղումների մասնակիցների երևակայությունը. նրանք, իրոք, ապրել են ավերակների քաղաքի երբեմնի կյանքով։

ի դեպ, ուսական գիտութեան համար դա առաջին դեպքն էր, երբ արևելյան մի հին քաղաք դառնում էր երկարատե, մեծ թափով կատարվող պեղումների վայր։ Պեղումները կարևոր էին նաև հասարակական առումով։ Հենց այն տարիներին, երբ ցարական կառավարութիւնը բռնագրավել էր էջմիածնի գույքի մի զգալի մասը, երբ ամենուրեք փակվում էին հայկական դպրոցները, ճիշտ այդ ժամանակ Մառը և նրա աշխատակիցները երևան էին հանում մի մեծ մշակութային հայերի մշակութային ժառանգութեան հարստագույն շերտերից մեկը։

Անին ոչ միայն նշույթով է ապահովել Օրբելու գիտական պրպտումները, Անին է դարձրել նրան մեծ գիտնական։ Եվ հանկարծակի այդ կենսատու աղբյուրը ցամաքեց։ Պեղումների 1917 թ. շրջանը եղավ վերջինը։ Քյաղիմ Կարաբեքիրի թուրքական հրոսակները մտան Անի և ավերեցին այն, ինչ որ խոնամքով հավաքել էին Մառն ու իր աշխատակիցները, տակնուվրա արին հնադարանը։ 1922 թ. Անիում վերջին անգամ եղավ Աշխարհբեկ Քալանթարը։ Նա լուսանկարել էր հնադարանի այն սրահը, որը կոչված էր բարեդարան։ Տեսնելով այդ լուսանկարը, նախկին հնադարանի նախկին տնօրենը պիտի համոզվեր, որ մեծ խնամքով կատարված հավաքական աշխատանքի արդյունքները ի դերև ելան։ Բարբարոսութիւնը հաղթանակեց։

Դժվար չէ կռահել, ինչպես պիտի ազդեր Հ. Օրբելու վրա պեղումների դադարումը։ Բայց միայն մահվանից հետո, ծանոթանալով նրա անձնական արխիվին, տասնյակ անգամ հանդիպելով «Անի» անվանը, կարելի եղավ գիտակցել, թե ինչպիսի ողբերգութիւն է ապրել Մառի երբեմնի աշխատակից-աշակերտը իր ամբողջ կյանքի ընթացքում։ Թվում է, թե նրա բնավորութեան որոշ գծեր, հատկապես դյուրաբորբորութիւնը, պայմանավորված են եղել հենց այդ ողբերգական ապրումներով, անզորութիւնը զգացումով*։

* Մի անգամ խոսք բացեցի այդ մասին Կ. Վ. Տրևերի հետ։ Լուսեց ասածս, կարճ պատասխանեց՝ «Իրավացի եք» և խոսակցութիւնը վերջ տվեց ...

Անիում որոշվեց Հովսեփ Օրբելու ո՛չ միայն գիտական ճակատագիրը. թվում է, այստեղ վերջնականապես ձևավորվեց նաև ազգային ինքնագիտակցութունը: Այստեղ նա զգաց, որ ուսումնասիրությունն նյութ դարձած հայոց հին մշակույթը իր նախնիների թողած ժառանգությունն է: Եվ հենց պեղումների վայրում սկսվեց նրա շփումը բուն ժողովրդի հետ: Հիշենք, որ նա եղել է քաղաքի բնակիչ, գիտակցական կյանքի առաջին տարիները անց է կացրել Թիֆլիսում, ապա տեղափոխվել Պետերբուրգ, ուր և մնացել է մշտապես, եթե չհաշվենք Երևանում անցկացրած 1942-1944 թթ.: Էությունը էլ նա քաղաքի, այն էլ մեծ քաղաքի մարդ էր, գյուղի հետ անձնականորեն կապ չունեցող: Իսկ Անիում նա գործ էր ունեցել պեղումներին մասնակցող բանվորների հետ, նյութ հավաքելիս շփվել հարևան գյուղերի բնակչության հետ, շրջել Ղարաբաղում և հենց այդ պտույտների ընթացքում իրապես ծանոթացել հայ մարդուն՝ հայ հողի վրա: Այդ առումով ամենից արդյունավետը, անշուշտ, եղել է Մոկսի ճանապարհորդությունը, երբ նա մի քանի ամիս ապրել է գյուղական պայմաններում, գյուղական կյանքով, լիովին ենթարկվել այդ կյանքի թելադրանքին: Կարևոր էր նաև բնակչության հետ շփման փորձը Վան քաղաքում (Վանում նա մնացել էր 1911-1912 թթ. ձմեռը): Այսպիսով, հայրենիքի բարձրագույն ճանաչման ուղին սկիզբ էր առնում Անիից:

Գիտությամբ զբաղվողները մի զգալի մասը տարված է լինում մտավոր աշխատանքի ընթացքով, առարկան որպես այդպիսին նրանց քիչ է մտահոգում: Հ. Օրբելին սիրել է այն հուշարձանները, որոնցով զբաղվել է՝ լինի դա ճարտարապետական կոթող կամ Մոկսի գյուղացու պատմած հեքիաթ: Հարկավ, զգացել է հարազատությունը, եթե դա եղել է հայ ստեղծարար հոգու ծնունդ, բայց հավասար կերպով սեր է տածել նաև վրացական, իրանական, քրդական կամ ուսսական մշակույթի առարկաների նկատմամբ: Այդ սերը, սակայն, չի շրջացրել աչքերը, գիտական զգաստությունը նրան չի դավաճանել: Այդ զգացմունքն է ստիպել նրան մեծ եռանդով նվիրվել

Ֆիրդուսուն, Շոթա Ռուսթավելուն, «Սասունցի Դավթին» նը-
վիրված տոնակատարությունների կազմակերպմանը:

Ակադեմիկոս Հ. Օրբելին մեծ կուլտուրայի տեր մարդ էր:
Նրա գիտելիքներն ընդգրկում էին դանազան բնագավառներ:
Այդ հանգամանքը աչքի է ընկնում թե՛ գրավոր (կամ բանա-
վոր) աշխատություններում, թե՛ նրա գործնական քայլերում:
Լայն գիտելիքներն էին հող պատրաստել այն դրույթի համար,
ըստ որի դավանական սահմանները մշակույթների համար
անանցանելի չեն, որ Մուրթուլա բեկի տանը տեսած բարձերը
նույն դերն են կատարել, ինչ որ և սասանյան արքունիքում
եղածները, որ «Սասնա ծռերում» բազմաթիվ զուգահեռներ
կան միջազգային բանահյուսական դիպաշարերի հետ և այլն:
Այդ գիտելիքների շնորհիվ է, որ նա ուղղակի թե անուղղակի
եղանակով միշտ ձգտել է որոշել հայոց հին մշակույթի տեղը
արևելյան մշակույթների համակարգում: Նրա աշխատություն-
ները շարադրված են ընտիր ոճով, և դա ինքնին մեծ կուլ-
տուրայի հատկանիշ է, բայց, իհարկե, գլխավորն այստեղ
կենդանի միտքն է:

Նրիտասարդական տարիներից նրան վիճակված է եղել
մասնակցել մեր երկրի մշակութային կյանքի մի շարք խոշոր
անցքերի: Եվ խոր իմաստ էս տեսնում, որ Հայաստանի Գի-
տությունների ակադեմիայի առաջին նիստերը վարել է դա-
սական հայագիտության մշակներից մեկը, իսկ Լենինգրադի
արևելագիտության նոր ընթացքն ապահովել՝ Պետերբուրգի
հին դպրոցի տաղանդավոր ներկայացուցիչը:

Գեղեցիկ է եղել Հովսեփ Օրբելու կենսագրությունը, որն
ինքնին մի ներդրում է մեր մշակութային ընդհանուր կյանքի
մեջ:

ՍԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա

1. XIX դ. կեսերին «Թիֆլիսի ազնվական գիմնազիայի» աշակերտ Պերճ Պոռչյանը կրոնի դասերն առել է Հովսեփ Օրբելուց: Ահա թե ինչ է գրում նա իր ուսուցչի մասին. «Սեր ու պատկառանք ներշնչում էր և գիմնազիայի կրոնի ուսուցիչ Տեր-Հովսեփ Օրբելին: Մի համեստ, մի քաղցրախոս հոգևորական էր նա: Ներսիսյան դպրոցում եղած ժամանակս Օրբելուն ես երբեմնապես տեսնում էի Ներսես կաթողիկոսի մոտ գնալուս և զալուս, անունը շատ էի լսել, և այդքան: Այժմ գիմնազիայում ես արժանացել եմ նրա խորին ուշադրությանը, իբրև ամենալավ հայագետ գիմնազիստը՝ պատվերներ էի ստանում նրանից օգնել յուր աշակերտներին՝ դասերը պատրաստելու, որ և սիրով կատարում էի:

Հայր Օրբելուն ոչ միայն ես, բոլոր աշակերտները հարգում էին, նրա դասերը շատ խաղաղ էին անցնում, մի տեսակ պատկառանք տիրում էր դասատանը Օրբելու դասերին. թեպետ ո՛չ Առաքել [Արարատյան] վարժապետի պես հղճում էր և ո՛չ բարձր խոսում կամ աշակերտներին նախատում».— Պերճ Պոռչյան, Երկերի ժողովածու, հատոր երրորդ, Երևան, 1954, էջ 439:

2. *Տե՛ս Профессор Рубен Абгарович Орбели. Исследования и изыскания. М.—Л., 1947.*

3. *Л. Г. Лейбсон. Леон Абгарович Орбели. Л., 1973: «Л. А. Орбели в воспоминаниях современников». К 100-летию со дня рождения. Л., 1983.*

4. Ահա թե ինչ խոսքերով է հիշել Իվ. Զավախովին Հ. Օրբելին, պատմելով իր ուսանողական տարիների մասին. «Ի. Ա. Զավախովի դասախոսությունները միշտ լի էին մշակույթի պատմության՝ բոլոր հարցերի վերաբերյալ խորագույն հետաքրքրությամբ: Եվ այդ իմաստով Ի. Ա. Զավախովը, ինչպես Մառը, մեզ՝ կովկասագետներին համար բացառիկ արժեքավոր էր ոչ միայն նրանով, որ լրացնում էր [մյուսների ասածը], այլև մեզ համար մի աղբյուր էր, որից մենք քաղում էինք եթե ոչ հարցի լուծումը (շատ դեպքերում դեռևս խոսք չէր կարող լինել լուծման մասին), ապա խոր հետաքրքրություն դեպի տարբեր հարցեր, մասնավորապես մշակույթի պատմության հարցեր: Եվ այն ժամանակ, 1907—1908 թթ. (ցարական կարգերի պայմաններում) Զավախովը կարողանում էր ավելի

օբյեկտիվ, ավելի ուղիղ ու ավելի ազնիվ վերաբերվել կովկասյան մշակույթի պատմության առավել բարդ ու խճճված էջերին: Ահա թե ինչու ոչ միայն ես, այլև, հավանաբար, բոլոր նրանք, ովքեր գեթ մեկ անգամ բախտ են ունեցել լսելու Ջավահրլալի դասախոսությունները, շեն կարող ամենախոր ակնածանքով շփոթել նրա անունը:— Կ. Ն. Յուզբաշյան, Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի, Երևան, 1971, էջ 166—167 (այստեղ և ստորև մեջբերումները արված են աննշան փոփոխություններով):

5. Տողերիս գրողը աւիթ է ունեցել մեկ-երկու անգամ խոսել Հ. Օրբելու հետ Ն. Ադոնցի մասին: Հիշում էր նրան միշտ ակնածանքով:

6. Թե՛ գրավոր աշխատություններում, թե՛ բանավոր ելույթներում Հ. Օրբելին հաճախակի հիշում էր Յա. Ի. Սմիռնովի անունը: Բերենք մի հատված նրա հուշերից՝ «[Ռուսական հնագիտական ընկերության] Աբե-վնյան բաժանմունքում տեւնույ էի նաև այնպիսի մի գիտնականի, որը երբեք, ոչ մի տեղ ինքն իրեն արեւելագետ չէր անվանում, թեև խոշոր մասնագետ էր նաև այդ բնագավառում: Դա Յա. Ի. Սմիռնովն էր: Նա իր մասին խոսում էր միշտ վերին աստիճանի արհամարհական եղանակով: Սակայն նա հիասթափ առեւելագետ էր, մի մարդ, որը հայագետներին ցույց էր տալիս, թե նրանք որտեղից վերցնեն իրենց հետաքրքրող հարցի վերաբերյալ տեղեկություններ: Մտղո, որ չի ազեղաներին տալիս էր Պեկինում բրիտանյա վաճառականի այրու կողմից XII դ. կառուցված բրիտանյա եկեղեցուն վերաբերող տվյալներ: Թուրքագետներին նա բացատրում էր, թե ինչ կարելի է գտնել Թուրքական աղբյուրներում. բացատրում էր ոչ թե այն հանգամանքով, որ պատահաբար հիշում էր այդ բաները, այլ որովհետև մի մարդ էր, որ իր ողջ կարճատև կյանքում (հիսուն տարեկան էր, բայց ուներ զառամյալ ծերունու արտաքին) ամենին հոգ չէր տանում, որպեսզի ինքը անի, պարզապես սիրում էր ամեն ինչում օգնության գալ բոլորին: Նա մի մարդ էր, որն ունակ էր շարաթնելով, ամիսներով փնտրել ամեն տեղ, ուր միայն հնարավոր էր՝ բոլոր դրական վկայու-թյուններում, հուշարձանների բոլոր նկարագրություններում տեղեկություն-ներ, որոնք պետք էին երկրորդ կուրսի ինչ-որ ուսանողի՝ Կովկասի հնա-գիտության վերաբերյալ տակավին չձեւավորված հոգվածի համար: Եվ այդ բոլորը նա կարողանում էր այնպես անել, որ դուք համարում էիք, որ ինքներդ եք նրա բարերարը, այլ ոչ թե նա՝ ձերը: Նա ձեզ տեղեկանք տալու համար թույլտվություն էր խնդրում, ընդ որում, երբեք ոչ մեկից փոխհատուցում չէր սպասում [...] Սմիռնովի ծառայություններից մեկը համարվում է մի քանի տասնյակ վիշապների հավաքումը և համադրումը: Ջեզնից նրանք, ում բախտ կվիճակվի լինել Հայաստանում, խնդրեք, որ-պեսզի ձեզ տանեն այնտեղ, ուր ընկած են այդ քարերը: Նրբ դուք կկա-տարեք այդ գրոսանքը, կգնահատեք, թե ինչ է նշանակում հավաքել դը-րանցից մոտ երեք տասնյակ, իսկ հետո բոլոր լեզուներով ամբողջ գրակա-նությունից տվյալներ հավաքել դրանց վերաբերյալ:— Կ. Յուզբաշյան, Ակադեմիկոս Օրբելի, էջ 189—191: Վիշապների մասին հավաքած նյութը

սովորված է՝ Н. Я. Марр и Я. И. Смирнов. Вишаны. Л., 1931; ср. П. М. Мурадян. Обращенные в хачкары вишаны-стелы из Егегнадзора. «Художественные памятники и проблемы культуры Востока», Л., 1985.

7. Н. Я. Марр. Раскопки в Ани летом 1904 г. Известия Археологической комиссии, вып. 18, 1906, с. 82—83; ср. В. А. Муханкова. Николай Яковлевич Марр. М.—Л., 1949, с. 121.

8. Н. Марр, С. Ольденбург, И. Крачковский. Записка об ученых трудах И. А. Орбели. ИРАН, серия VI, т. 18, с. 574, ИТ, с. XVI.

9. 1948 թ. ապրիլի 18-ին լենինգրադի Գիտականների տանը Հ. Օրբելին ելույթ է ունեցել կրիտասարգ գիտական աշխատողների, ասպիրանտների և ուսանողների առջև: Պահպանվել է այդ ելույթի սղագրությունը (խորագրված է՝ «Իմ գիտական աշխատանքը»), որից և բաղում ենք սույն տեղեկությունը:

10. Н. Марр. О раскопках и работах в Ани летом 1906 г. (предварительный отчет). ТР АГФ, кн. X, СПб., 1907, с. 55.

11. И. А. Орбели. Фольклор и быт Мокса. М., 1982, с. 57.

12. ՏԵՄ Կ. Ն. Յուրաշյան, Ակադեմիկոս Հովսեփ Արզարի Օրբելի, Երևան, 1971, էջ 197:

13. Նամակը գտնվում է Հ. Օրբելու արխիվում:

14. А. Ю. Якубовский. К двадцатилетию Отдела востока Государственного Эрмитажа. «Труды Отдела Востока», т. III, Л., 1940, с. 9.

15. Ժողովածուի պատրաստման թե՛ պահին աշխատակիցների թիվը հանկարծ կրճատվեց. բաշ պատկերացնելով հնարավոր հետևանքները, Հ. Օրբելին արձանագրեց այդ փաստը իր առաջարանի վերջին տողերում:

16. Ռուսերեն հրատարակություններից հատուկ արժեք է ներկայացնում այն, որը իրականացրել էր Գիտությունների ակադեմիան (Давид Сасунский. Армянский народный эпос, М.—Л., 1937): Հ. Օրբելու առաջարանն այստեղ լույս է տեսել ընդարձակ տարրերակով: Նկարագրողումները մեծ ճաշակով պատրաստել էր Երվանդ Քոչարը:

Р

1. И. Орбели. Simitose в Идалийской надписи и ΣΕΜΙΔΑΔΙΣ, simila, similago. ЖМНП, 1908, новая серия, ч. 18, декабрь, с. 521—531; ИТ, с. 485—493.

2. Մեջբերումները բաղում ենք Հ. Օրբելու՝ «Իմ գիտական աշխատանքը» ելույթից (Հմտ. Ա. գլխի 9-րդ ծանոթագրությունը):

3. И. Орбели. Город близнецов ΔΙΟΥΚΟΥΡΙΑΣ и племя возниц ΠΝΙΟΧΟΙ. ЖМНП, 1911, новая серия, ч. 33, май, с. 195—215; ИТ, с. 494—511.

4. *И. Орбели*. Нефритовая кинжальная рукоять с армянской надписью. ИАН, 1909, серия VI, т. 3, № 5, с. 377—389; ИТ, с. 135—145.

5. *И. Орбели*. ԽАсан Джалал, князь Хаченский. ИАН, 1909, серия VI, т. 3, № 6, с. 405—436; ИТ, с. 146—174.

6. *И. Орбели*. Бытовые рельефы на хаченских крестных камнях XII—XIII вв. ЗВОРАО, т. XXII, вып. III—IV, 1915, с. 327—335. ИТ, с. 196—204.

7. ЗВОРАО, с. 327. ИТ, с. 196.

8. *И. Орбели*. Краткий путеводитель по городищу Ани (с планом). СПб., 1910 (Анийская серия, № 4). ИТ, с. 103—132.

9. *И. Орбели*. Каталог Анийского музея древностей. Вып. 1. Описание предметов первого отделения (с 26 рисунками в тексте и 1 таблицей), СПб., 1910 (Анийская серия, № 3). ИТ, с. 23—102.

10. *И. А. Орбели*. Блестящая страница в истории археологии. ПИДО, 1934, № 9—10, с. 197. ИТ, с. 300.

Անիում մնացած հնագիտական նյութերի գեթ մասնակի փրկության համար հայագիտությունը պարտական է Ն. Մանու աշակերտ և աշխատակից Ա. Քալանթարի և լոռեցի մի քանի երիտասարդ հայորդիների անձնփրկությանը: 1918 թ. մարտ կամ ապրիլ ամսին թուրքական բանակի՝ Անիին մոտենալու լուրն առած Ա. Քալանթարը Լոռիի գյուղերից հավաքագրում է Հովսեփ Գալստյանին, Վաղարշակ Երիցյանին, Հարություն և Սիմոն Էվոյաններին (Սանահին), Արշավիր Երզնկյանին (Հաղբատ), Սիմոն Գալաթյանին (Օձուն) և շտապ մեկնում Անի: Կրակոցների տակ նրանք հավաքում են հնադարանի առարկաները և շալակելով տեղափոխում Ախուրյանի մյուս ափ, այստեղից էլ՝ Սանահին: Վերջին վայրկյանին Գաղիկի արձանի պահպանությունը հոգացող Ա. Քալանթարը հազիվ է խույս տալիս թուրքերի ձեռքն ընկնելու վտանգից: Փրկված նյութերն այժմ գտնվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում: Նրանց գիտական նկարագրությունը տրված է հնագետ-վիճագրագետ Եվգ. Մուշեղյանի «Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները» գրքում (Երեվան, 1982):

Վերը բերված մանրամասնությունները մեզ պատմել է իր կյանքի 9-րդ տասնամյակն ապրող, հիշողությունը, տեսողությունն ու լսողությունը անխաթար պահած վաստակավոր ուսուցիչ Հովսեփ Գալստյանը:

Պրոֆ. Ի. Մեգրիկիձեի «Иосиф Орбели» գրքում, թրեւս սրբազրական անմեղ վրիպակի հետեւանքով, տեղի է ունեցել Անիի կորած նյութերի համար մեղավոր անձի սխալ հասցեագրում: Այստեղ կարդում ենք. «Я заметил, что И. А. устал, собрался уходить, но И. А. меня остановил и коротко рассказал, что был виновен в том, что вагон с анийскими раскопочным и другими материалами пропал в 1917 г. между Армавиром и Баку и попросил это запомнить»

(с. 134). Ստացվում է, որ Հ. Օրբելին իրեն է մեղադրում, մինչդեռ և՛ Հ. Օրբելին, և՛ ուրիշներ բաշ գիտեին, թե ով էր վագոնով տեղափոխվող նյութերի պատասխանատու ուղեկիցը (գիտենք և մենք բոլորս), որին Հ. Օրբելին երբեք չներեց (և ներելու իսկ բան չէ): Պարզ է, որ ընդգծված что (որ) բառի փոխարեն кто (ով) պիտի ընթերցել, այսինքն՝ Հ. Օրբելին «...համառոտակի պատմեց, թե ով է մեղավոր եղել, որ Անիի պեղածք նյութերով ու այլ առարկաներով բեռնված վագոնը 1917 թ. կորել է Արմավիրի և Բաքվի արանքում: Խնդրեց հիշել այդ...»: Պ. Մ.

11. Н. Я. Марр. Ани. Книжная история города и раскопки на месте городища. М.—Л., 1934, նաև՝ Ереван, 1939. Առաջին հրատարակության ներածականում հեղինակը նշում է, որ գրքի հրատարակմանը «մասնագետներից ներգրավվել է գործին առավել մոտ կանգնած, այդ աշխատանքի համար առավել հեղինակավոր պրոֆ. Հ. Ա. Օրբելին» (с. XI—XII).

12. И. Орбели. Развалины Ани. История. Современное состояние. Раскопки. Издание журнала «Нева». СПб., 1911, ИТ, с. 1—22. Գրքի վաճառքից ստացված ամբողջ գումարը տրվեց Անիի հնադարանին: 1911 թ. էջմիածնի «Արարատ» ամսագրում հրապարակվեց այդ զբոսայգիի հայերեն թարգմանությունը, որը լույս տեսավ նաև առանձին:

13. И. Орбели. Колокол с анийскими орнаментальными мотивами XII—XIII вв., ЗВОРАО, т. XX, вып. 1, 1919, с. 023—039. ИТ, с. 175—186.

14. Մեջբերումները բաշված են անդրանիկ հրատարակության 024—025, 038 էջերից, տե՛ս նաև՝ ИТ, с. 176, 185.

15. Новый энциклопедический словарь. Издатели Ф. А. Брокгауз, И. А. Ефрон. СПб., т. 3, стлб. 664—674.

16. И. А. Орбели. Фольклор и быт Мокса. М., 1982.

17. Давид Сасунский. Армянский народный эпос. М.—Л., 1939, (вступительная статья).

18. Там же, с. XXV.

19. Там же, с. XXVI.

20. Там же, с. XXIX.

21. И. А. Орбели. Армянский геронческий эпос. Ереван, 1956 (նույնը հայերեն՝ Երևան, 1956):

22. И. А. Орбели: Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII в.—ХВ, т. II, вып. I, 1913, с. 105—142; Шесть армянских надписей VII—X вв.—ХВ, т. III, вып. I, 1914, с. 72—91; Указатель слов и имен к 13 армянским надписям VII века—там же, с. 95—100; Две строительские надписи князей Камсараканов—ХВ, т. III, вып. 3, 1914, с. 297—306; Багаванский храм и его надписи—ХВ, т. V, вып. 2, 1915, с. 129—143; Армянские надписи на камне—там же, с. 147—154: Надпись

Сасанинского моста—ХВ, т. IV, вып. 2, 1915 с. 191—192; надпись Бердацзорского моста.—там же, с. 192—194. *Բոլոր գի-րապիւծ են՝* ИТ, с. 371—439, 451—476.

23. *Н. А. Орбели.* О двух терминах в надписях Ани. Известия РАИМК, т. 1, 1921, с. 391—399. ИТ, с. 477—481.

24. Памятники армянской эпиграфики. I. Надписи Мармашена. Собрал и подготовил к печати Иосиф Орбели. С тремя автотипическими таблицами. Издание Анийского музея древностей. Пг., 1914. ИТ, с. 440—450.

25. *Դիվան հայ վիմագրության, պրակ 2. Գորիսի, Սիսիանի և Ղա-փանի շրջաններ: Կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960: Հայ վի-մագրության դիվանի նախապատմության մասին տե՛ս հաջորդ ծանոթա-գրության մեջ վկայակոչված աշխատությունը, էջ XXVII—XXVIII:*

26. *Դիվան հայ վիմագրության, պրակ 1. Անի բաղար: Կազմեց՝ Հ. Ա. Շրբելի, Երևան, 1966: Հ. Օրբելու կազմած «Դիվանի», ինչպես նաև նրա տպագիր ու անտիպ մ.ուս աշխատությունների պատշաճ հրատարակությունների գործում անուրանալի վաստակ ունի նրա աշակերտ, ակադ. Բ. Ն. Առաքել-յանը: Պ. Մ.*

27. *Н. Орбели.* Два серебряных ковша XVI века с армянской и греческой надписями.—ХВ, т. V, вып. 1, 1916, с. 1—13 (*հմմտ. նաև՝* т. V, вып. 2, с. 144—146). ИТ, с. 205—216.

28. *А. Я. Каковкин.* Армянский серебряный ковш XVI века.—*ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1977, № 3:*

29. *Н. А. Орбели и К. В. Тревер.* Сасанидский металл. Художественные предметы из золота, серебра и бронзы. М.—Л., 1935. *Հ. Ա. Օրբելու և Կ. Վ. Տրեվերի հեղինակաշուկայում լույս է տեսել մեկ ուրիշ աշխատություն նա՝ Н. Орбели и К. Тревер. Шатранг—кни-га о шахматах. Л., 1936.*

30. *Iosef Orbeli.* Sāsonian and early islamic metalwork. — *A Survey of Persian Art. From prehistoric times to the present* London and New York, 1938. p. 716—770.

31. *Н. Орбели.* «Восток», кн. 4, 1924. ИТ, с. 269—291; Вре-менная выставка сасанидских древностей. Пг., 1922, с. 6.

32. *Н. Орбели.* Мусульманские изразцы. Пг., 1923, с. 6; ИТ, с. 253—254

33. *Н. Орбели.* Мусульманский Восток. Л., 1925, с. 3—4.

34. *Н. Орбели.* О классовых корнях некоторых традиций исто-рической науки.—Сообщения ГАИМК, 1931, № 1, с. 13. ИТ, с. 293. *Պարբերականի արաբիկ պրակը (որ գետեղված է Հ. Օրբելու հոդ-վածը) լույս է տեսել խմբագրության հետևյալ ծանուցումով. «Статья И. Орбели «О классовых корнях некоторых традиций историче-ской науки», написанная для «Сообщений» ГАИМК, по недоразу-*

мению в настоящем № помещена вопреки желания автора». *ժամանակին Կ. Վ. Տրևերն ինձ ասել է, որ Հ. Օրբելին դեմ է եղել խմբագրության կողմից դրված վերնագրին:*

35. III Международный конгресс по иранскому искусству и археологии. Доклады. Ленинград, сентябрь, 1935. Редактор академик И. А. Орбели. М.—Л., 1939, с. 151, ИТ, с. 363.

36. *Տե՛ս* ИТ, с. 364.

37. *И. В. Мегрелидзе*. Иосиф Орбели. Тб., 1983, с. 94—107.

38. Памятники эпохи Руставели. Л., 1938, с. 20—21. ИТ, с. 581.

39. Вопросы и решения вардапета Анании Ширакаци, армянского математика VII века. Издал и перевел И. А. Орбели. Пг., 1918; ИТ, с. 512—531. *Գիրքն ունի նաև հայերեն տիտղոսաթերթ՝ «Յադագս հարցման և լուծման երկից նրաննալ Անանիայի վարդապետի Շիրակացոյ. տպագրեաց Յ. Արբելի. Պետրոգրադ, 1934է»: Ինչպես ասվեց Ա գլխում, գիրքը շարված է հեղինակի ձեռքով:*

40. *И. А. Орбели*. Описание Версаля в армянской записи 1863 г.—Известия РАИМК, т. 1, 1921, с. 391—399; ИТ, с. 532—538.

41. *Египиз*. О Вардане и войне армянской. Пер. с древнеармянского академика И. А. Орбели. Подготовка к изданию, предисловие и примечания К. Н. Юзбашяна. Ереван, 1971.

42. Памятники эпохи Руставели, с. 139—158. ИТ, с. 559—569.

43. *Иосиф Орбели*. Басни средневековой Армении. М.—Л., 1956.

44. *И. А. Орбели*. Избранные труды в двух томах. Т. I. Из истории культуры и искусства Армении X—XIII вв. М., 1968, с. 209—385, 420—504, 521—534.

45. *И. А. Орбели*. О первоначальной форме купола Ахтамарского храма. ЗВОРАО, т. XXV, 1921, с. 293—300; ИТ, с. 222—228.

46. *Տե՛ս* 44 ծանոթագրության հղումը, էջ 17—204, 389—419:

Գ

1. *И. В. Мегрелидзе*. Иосиф Орбели, с. 7—8.

2. *Արտաշես Վրույր*, *Անիում*, *Երևան*, 1979, էջ 33:

3. *Նույն տեղում*, էջ 34—35: *Ա. Վրույրի հուշերը անգնահատելի սկզբնաղբյուր են պեղումների առօրյան վերականգնելու համար: Մինչդեռ Հր. Մաթևոսյանի «Զեզոր գոտի» երկը, որը նույնպես վերաբերում է պեղումների շրջանի Անիին, դժբախտաբար, թյուր զուգորդություններ է առաջացնում:*

4. *Նույն տեղում*, էջ 37—38:

ՀԱՊԱՎՈՐՄԵՆՐԻ ՑԱՆԿ

- ЖМНП—«Журнал Министерства народного просвещения».
ЗВОРАО—«Записки Восточного отделения Русского Археологического общества».
ИАН—«Известия Академии наук».
ИТ—И. А. Орбели. Избранные труды. Ер., 1963. —
ПИДО—«Проблемы истории докапиталистических обществ».
РАИМК—«Российская Академия истории материальной культуры».
ТР АГФ—«Тексты и Разыскания по армяно-грузинской филологии».
ХВ—«Христианский Восток».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նրկու խոսք	5
Ա. Կյանքն ու գործունեությունը	7
Բ. Գիտական ժառանգությունը	62
Գ. Խառնվածքի որոշ գծեր	91
Ծանոթագրություններ	103
Հապավումների ցանկ	110

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՁԻ ՅՈՒՋՐԱՇՅԱՆ

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի

Հրատ. խմբագիր Ա. Լ. Սահակյան
Նկարիչ Կ. Կ. Ղափաղարյան
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հարությունյան
Սրբագրիչ Է. Ա. Սոխիկյան

ИБ № 1477

Հանձնված է շարվածքի 8.09.1987 թ.: Ստորագրված է տպագրության
8.10.1987 թ.: ՎՖ 08268 Չափը $84 \times 108^{1/32}$, թուղթ № 2: Տառատեսակ
«գրքի սովորական», բարձր տպագրություն: Պայմ. 6,3 մամ., տպագր.
7,0+4 թերթ ներդիր մամուլ: Ներկ. մամուլ 6,3: Հրատ.-հաշվարկ. 4,95
մամուլ: Տպաքանակ 3000: Հրատ. № 7182: Պատվեր № 641: Գինը 65 կոպ.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան,

Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:

Издательство АН АрмССР, 375019, Ереван,

пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան,

Մարշալ Բաղրամյան պող. 24:

Типография Издательства АН АрмССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24.

65 4.

